


Գ. Ա. Գրիգորյան




ԶԱՄԻԱԾԻՒՆ





ԼՂ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յուլիս


1977



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ
ԱՐՔԵԱԽԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԱՏԵՆԱՊԵՏ ՏԻԱՐ ԶՈՆ ՆԱԶԱՐՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Հուլիսի 10-ին, կիրակի օրը, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը և թեմական խորհրդի ատենապետ, դատավոր Զոն Նաջարյանը:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, տ. Թորգոմ սրբազանը և ատենապետ Զ. Նաջարյանը ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից:

Վեհարանում ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ սրտագին զրույց՝ ԱՄՆ-ի հայոց եկեղեցական կարևոր հարցերի շուրջ:

Մայր Աթոռում գտնված օրերին տ. Թորգոմ սրբազանը և պրն. Զ. Նաջարյանը այցելեցին Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարան, Նոր Վեհարան, թանգարանի վերածված Հին Վեհարան, խմբագրություն, հոգևոր ճեմարան, մայրավանքի գրասենյակներ, վանական սեղանատուն, Մայր Աթոռի տպարան, Սարդարապատ, Երևանի և Սարգիս եկեղեցի, Ծիծեռնակաբերդ, ֆիզիկայի ինստիտուտ, Մատենադարան, Բյուրականի հայրապետական ամառանոց, Բլուրականի աստղադիտարան, ուր տեսակցություն ունեցան ակադեմիկոս, մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանի հետ, Պետական թանգարան, ապա Սևան, Հաղարծին, Հայաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրեր և ուխտի գնացին և Գեղարդ և Խորվիրապ:

Հուլիսի 17-ին, Վարդավառի տոնին, Մայր տաճարում հանդիսավոր և պատա-

րագ մատուցեց տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմակալ առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բելգիացի հայտնի հոգևորական գործիչ, կանոնիկոս Ռայմոնդ Գորը, նաև մի խումբ ամերիկահայ ուխտավորներ:

Ս. պատարագին ներկա էին նաև ՀՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասարայանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Եւ յուսատրեցան երեսք մորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ մորա եղեն սպիտակ իբրեւ զլուս» (Մատթ. ԺԷ 2) բնաբանով:

Իր քարոզի մեջ Հայոց Հայրապետը վեր հանեց Թափոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության դեպքի հոգևոր և քարոյական նշանակությունը և՛ եկեղեցու կյանքում, և՛ քրիստոնյա անհատի կյանքի ու գործունեության մեջ: Այնուհետև Նորին Սրբությունը հայրական ջերմ սիրով ողջունեց ներկայությունը Մայր Աթոռում տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, տ. Տիրայր եպիսկոպոսի և ԱՄՆ-ի հայոց թեմական խորհրդի ատենապետ պրն. Զոն Նաջարյանի:

Հայոց Հայրապետը ջերմ սիրով ողջունեց նաև ներկայությունը Մայր տաճարում կանոնիկոս, հայր Ռայմոնդ Գորի:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության ջերմ խոսքով հանդես եկավ տ. Թորգոմ սրբազանը՝ շեշտելով սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի և վերածնված մայր հայրենիքի կատարած փրկարար ու նախախնամական դերը ազգապահպանման սրբազան առաքելության ճանապարհի վրա:

Ապա Հայոց Հայրապետին ուղղյալ սրբազան շնորհակալության խոսք ասաց կանոնիկոս Ռայմոնդ Գորր՝ հայ եկեղեցու դաբավոր կենտրոն ս. Էջմիածին և աստվածաշնչական Հայոց աշխարհ այցելելու ուրախ առիթով:

Ժամը 16.30-ին Վեհաբանում, ի պատիվ տ. Թորգոմ սրբազանի, Ջ. Նաջարյանի և կանոնիկոս Ռ. Գորի, տրվեց հրաժեշտի ընդունելություն, որին ներկա եղան տ. Կոստաս, տ. Տիրայր և տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանության ան-

դամները, Ա. Հատիտյանը, Գ. Քեհյալանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Մուշեղ Սերոբյանը, ամերիկահայ ուխտավորներ տեր և տիկին Էդվարդ Պողոսյանները:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Միևիատրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Մարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասարյանը:

Ընդունելության ժամանակ ողջերթի և շնորհակալության ջերմ խոսքեր արտասանեցին Վեհափառ Հայրապետը, տ. Թորգոմ սրբազանը, կանոնիկոս Ռայմոնդ Գորր, Ջոն Նաջարյանը և «Արմենյոն րիփորթ» թերթի խմբագիր Էդվարդ Պողոսյանը:

Հուլիսի 19-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, Թորգոմ սրբազանը և Ջոն Նաջարյանը հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և մեկնեցին Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. թ. հուլիսի 20-ին պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգների եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ եպիսկոպոսաց խորհրդի նախագահ Զոն Մ. Ալլին եպիսկոպոսի:

Պատվիրակության կազմում էին հայր Վիլյամ Նորգրենը՝ Էկումենիկ հարաբերությունների քարտուղար, կանոնիկոս Ռիչարդ Անդերսոնը՝ մամուլի ներկայացուցիչ, դոկտ. Պիտեր Դեյը՝ Էկումենիկ հարաբերությունների խորհրդական, և դոկտ. Պոլ Անդերսոնը՝ խորհրդական արևելյան եկեղեցիների գծով:

Առաջին անգամ է, որ ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդը, ի գլուխ պատգամավորության, այցելում էր Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Հուլիսի 21-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, պատգամավորությունը ժամանեց Մայր Աթոռ և, Մայր տաճարում իր աղոթքն անելուց հետո, Վեհարանում ընդունվեց Հայոց Հայրապետի կողմից: Այստեղ փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր:

Այնուհետև ժամը 10.30-ից մինչև 13.30-ը Վեհարանում տեղի ունեցավ հանդիպում-խորհրդակցություն եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակության և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև:

Մայր Աթոռի կողմից սույն խորհրդակցությանը մասնակցում էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Ավագ արեղա Ասատուրյանը, տ. Սարգիս քհն. Սարգսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրն. Հովհաննես Թոփուզյանը և հայ եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Ծախբազյանը:

Խորհրդակցության օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

ա. Որոնում այն ճանապարհների, որոնք եկեղեցիները կառաջնորդեն դեպի միություն:

բ. Կրոնական ազատություն և հավատացյալների իրավունքները:

գ. Կանանց ձեռնադրություն. 1976 թվականի սեպտեմբերին եպիսկո-

պոսական եկեղեցու ընդհանուր համագումարում ընդունված որոշումը կանանց քահանայական ձեռնադրությունը արտոնելու մասին:

Խորհրդակցության ընթացքում օրակարգի վրա դրված վերոհիշյալ հարցերի շուրջ տեղի ունեցավ մտքերի անկաշկանդ փոխանակում, որի շնորհիվ կողմերը ծանոթացան միմյանց տեսակետներին:

Խորհրդակցությունից հետո եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը այցելեց Նոր Վեհարանի դահլիճ ու պատկերասրահ, ծանոթացավ Մայր տաճարին ատրճաթեր եկեղեցական արվեստի թանգարանին, Հին Վեհարանին և Մայր Աթոռի շրջափակում գտնվող հուշարձաններին:

Ժամը 14.30-ին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ հյուրերի:

Ժամը 16-ին պատգամավորությունը Երևանում այցելեց ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և ապա Ծիծեռնակաբերդում Հայ նահատակաց հուշարձան, ուր «հոգվոց» արտասանվեց Մեծ եղեռնի գոհների հիշատակին:

Հուլիսի 22-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, պատգամավորությունը այցելեց Գառնիի վերականգնված հեթանոսական տաճար և ապա՝ ս. Գեղարդ վանք, ուր ջերմորեն ընդունվեց վանահայր տ. Վահան եպիսկոպոս Տեղյանի կողմից, որը հյուրերին տվեց պատմական անհրաժեշտ բացատրություններ մենաստանի մասին:

Ժամը 14-ին հյուր պատվիրակությունը Վեհարանում վերջին տեսակցությունը ունեցավ Հայոց Հայրապետի հետ: Այս առթիվ փոխանակվեցին հուշանվերներ:

Ժամը 14.30-ին Հայոց Հայրապետի նախագահությամբ Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հյուրերի, տրվեց ողջերթի ճաշկերույթ, որին ներկա եղան նաև տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Արսեն սրբազանները, տ. Ավագ աբեղա Ասատուրյանը և տ. Սարգիս քահանա Սարգսյանը:

Ընդունելության ժամանակ ողջերթի և շնորհակալության ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը և եպիսկոպոսական եկեղեցու պետ տ. Զոն Մ. Ալլին եպիսկոպոսը:

Այնուհետև պատվիրակությունը հրաժեշտ տվեց Ամենայն Հայոց Հայրապետին և մեկնեց Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

Նույն օրը, երեկոյան, հյուրերը ճանապարհվեցին Մոսկվա:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

Ս. Էջմիածին,

23 հուլիսի 1977 թ.





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, ուրբաթ.—Կեսօրվա ժամը 12-ին Ամենայն Հայոց Հայրապետը Վեհաբանում ընդունեց Սովետական Միությունում Ավստրալիայի արտակարգ և լիազոր դեսպան սրբ Ջեյմս Պլիմստլին:

Հարգելի հյուրը Մայր տաճար այցելելուց հետո, Վեհաբանում հանդիպում ունեցավ Հայոց Հայրապետի հետ:

Ջերմ գրույցի ընթացքում հարգելի դեսպանը խոսեց նաև Ավստրալիայում ապրող հայ եկեղեցական համայնքների օրինակելի և կարգապահ կեցության մասին, որպես լիիրավ քաղաքացիներ հյուրընկալող երկրի:

Վեհափառ Հայրապետը սրտի գոհունակությամբ լսեց հարգելի դեսպանի այս ազնիվ վկայությունը Ավստրալիայում ապրող մեր ժողովրդի գաղթական զավակների մասին և շնորհակալություն հայտնեց պարոն դեսպանին՝ նրա բարի վկայության համար:

* *

Հուլիսի 8-ին, Կիրակի.—Գիտ տփույ Սրբոնույ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում ա. Էջմիածին ուխտավորա-

բար այցելած ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Ֆիլադելֆիա քաղաքի ա. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արշեն վրդ. Այվազյանը: Նա ամերիկահայ եկեղեցաւեր երիտասարդաց կազմակերպության կրթական ծրագրի պատասխանատուն է, որ հիշյալ խմբի գլուխն անցած՝ հայրենիք էր առաջնորդել:

Պատարագիչ հայրը «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Քանզի կատարած օրինացն Բրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց» (Հով. Ժ 4) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև ուխտավորաբար Հայաստանում գտնվող Կիպրոսի և Դամասկոսի մի խումբ հայեր:

Նույն օրը, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետը Վեհաբանում ընդունեց ֆրանսիական բանկի տնօրեն պրն. Կլապելին՝ ընկերակցությամբ պրն. Կլայաի: Նրանց ընկերակցում էին նաև ՍՍՀՄ արտաքին առևտրի բանկի նախագահի տեղակալ պրն. Մակիևը և ՍՍՀՄ պետական բանկի հայկական բաժանմունքի կառավարիչ պրն. Աղապյանը:

Վեհափառ Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց:

Հուլիսի 6-ին, չորեքշաբթի.—Երեկոյան ժամը 20-ին Մայր Աթոռի միաբանության եկեղեցական հավաք տեղի ունեցավ Վեհաբանում:

Հավաքին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Այս առթիվ Վեհաբանի դահլիճում միաբանությունը դիտեց 1976 թվականի աշնանը սրբալույս մեռնի օրհնության արարողությանը և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակին նվիրված գումալոր կինոժապավենը: Երկրորդ ժապավենը նվիրված էր տաղանդավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի կյանքին ու ստեղծագործությանը:

Սույն կինոդիտմանը ներկա էին նաև մի շարք մտավորականներ ու արվեստագետներ Երևանից:

Հուլիսի 10-ին, Կիրակի.—Մայր տաճարում իր քահանայական անդրանիկ պատարագն է մատուցում նորընծա տ. Ավագ արեղա Ասատուրյանը:

Ս. պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչը քարոզում է «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց աշողեա մեզ» (Սաղմ. ԶԹ 17) բնաբանով:

Հուլիսի 12-ին, երեքշաբթի.—Ժամը 12.30-ին Վեհաբանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանության և աշխատավորության տարեկան հավաքույթը՝ նվիրված 1976 թվականի աշխատանքների կատարմանն ու 1977 թվականի անելիքների և կարգապահական որոշ հարցերին:

Հավաքույթին ներկա էին նաև Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները՝ գլխավորությամբ առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի, ինչպես նաև վրահայոց առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերապիայանը: Հավաքույթին ներկա էր նաև ս. Գեղարդ վանքի միաբանությունը՝ գլխավորությամբ վանահայր տ. Վահան եպս. Տերյանի:

Հավաքույթի բացումը կատարեց Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս.

Սանթրոքյանը՝ բացատրելով սույն հավաքույթի գումարման նպատակները:


Այնուհետև զեկուցումով հանդես եկավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը: Հարգելի զեկուցողը կանգ առավ 1976 թվականի սրբալույս մեռնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսությունների օրհնակելի և կազմակերպված անցկացման վրա՝ նշելով մանավանդ եկեղեցական արարողությունների վեհաշուք տալիսությունը և՛ բազմահազար հայ ուխտավորների, և՛ բույր եկեղեցիների հոգևոր պետերի ու բարձրաստիճան ներկայացուցիչների վրա:

Այնուհետև Ա. Հատիտյանը կանգ առավ 1976 թվականի Մայր Աթոռի վարչատրնստական աշխատանքների կատարման վրա, որոնք նույնպես կատարվել են բարեխղճությամբ և կարգապահության ոգով: Ուշադրության արժանի էին նաև Մայր Աթոռում կատարված շինարարական-վերանորոգչական աշխատանքները: Զեկուցողը ներկայացրեց 1976 թվականին կատարված շինարարական աշխատանքների ընդհանուր պատկերը և ապա խոսեց 1977 թվականի շինարարական աշխատանքների ծրագրերի մասին և՛ Մայր Աթոռում, և՛ Մայր Աթոռի շրջափակից դուրս:

Ա. Հատիտյանը նաև նշեց 1976 թ. Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցու կատարված վերանորոգչական աշխատանքները, որով մայրաքաղաքը օժտվեց նրա ճարտարապետական կառույցին համահնչուն մի նոր ու փառավոր կոթողով:

Այնուհետև Ա. Հատիտյանը անդրադարձավ նաև Մայր Աթոռում կատարված աշխատանքներում տեղ գտած մի քանի թևությունների մասին՝ շեշտելով, որ աշխատանքը մարդու պատվի և արիության գործըն է, մանավանդ այս սուրբ Հաստատության մեջ, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է: Ապա հարգելի զեկուցողը ներկաներին ծանոթացրեց 1977 թ. հունիսի 6-ից 10 օրերին Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային համաժողովի աշխատանքներին, որոնք նվիրված էին կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը: Սույն ժողովին մասնակցել են 110 երկրներից մոտ 700 ներկայացուցիչներ: Հայաստանյայց եկեղեցու պատգամավորությունը գլխավորել է Ամենայն Հայոց Հայրապետը:

Իր զեկուցման ավարտին Ա. Հատիտյանը հրապարակեց նաև Վեհափառ Հայրապետի հունիս 26 թվակիր վճիռը, որով կարգալույծ էր արվում վրահայոց թեմից տ.



Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանության և մարզականի ողջ աշխատակիցների հետ Վեհարանի բակում (1977 թ. հունիսի 12)

Տիրայր քնն. Կոնսուլյանը, որը դժգոհվել էր ծառայության ուխտը, լքել էր իրեն վստահված հոտը և իր առաջին կնոջից ունեցած իր օրինավոր զավակներին և մեկնել արտասահման՝ հակառակ իրեն եղած բազում հորդորներին և նախազգուշացումներին:

Հավաքույթի երկրորդ գեկուցողն էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը համառոտակի ներկայացրեց 1977 թվականի մայիսի 22—29 օրերին Անթիլիասում կատարված աթոռակից կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսությունների առիթով Մայր Աթոռի և Անթիլիասի միջև փոխանակված գրությունները, բացատրելով մանավանդ Անթիլիասի կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածների տրամադրությունները, որոնք անհրաժեշտ էլի են մեր եկեղեցական կարգ ու կանոնի ոգուն, և որոնք, ըստ Անթիլիասի Աթոռի տված հավաստագրումների, շնչվելու են նրա կանոնադրությունից:

Հավաքույթի ավարտին Վեհափառ Հայրապետը հանդես եկավ Մայր Աթոռի միաբանության և աշխատակրությանն ուղղված օրհնության խոսքով: Նորին Աթոռապետը հայրապետական Իր բարձր գնահատությանն արժանացրեց Մայր Աթոռում կատարված բոլոր քննադատների աշխատանքները և թեպադրեց նույն բարեխղճությանը և սրբությանը շարունակել աշխատանքները՝ ի պայծառություն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և ի բարօրություն հայ ժողովրդի:

Հավաքույթի ավարտին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նկարվել Մայր Աթոռի միաբանության և աշխատակրությանն հետ:

Հուլիսի 14-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Թորգոմ, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսների, տ. Ավագ արեղայի և ԱՄՆ-ի արևելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ արև. Ջոն Նաչարյանի, այցելություն տվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտին:

Վեհափառ Հայրապետը և Նրան ընկերակցող անձինք հանգստանորեն ծանոթացան գիտական այս մեծ ու կարևոր հաստատության աշխատանքներին, այցելեցին ստանձնին բաժանմունքներ ու փորձարարական լաբորատորիաներ:

Հայոց Հայրապետին և նրա շքախմբի անդամներին անհրաժեշտ բացատրություններ տվեց հաստատության դիրեկտոր, ՀԳԱ թղթակից անդամ, դոկտոր Անդրանիկ Ա.

մատունին, մանավանդ «Նաիրի» հաշվիչ մեքենաների և այստեղ կատարված լուրջ գիտական աշխատանքների ու մեծ նվաճումների մասին:

Հուլիսի 15-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեց քեզիացի հայտնի հոգևորական գործիչ կանոնիկոս Ռայմոնդ Գորը, որը մասնակցել էր հունիսի 6—10 օրերին Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային ժողովին, որը նվիրված էր կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Կանոնիկոս Ռայմոնդ Գորը այցելեց Մայր տաճար, Հին և Նոր Վեհարաններ, ս. Հովհաննես և ս. Գայանե տաճարներ. ոխտի գնաց ս. Գեղարդ և դիտեց մայրաքաղաքի մի շարք պատմական և տեսարժան վայրեր:

Կիրակի օրը հարգելի հյուրը ներկա եղավ Մայր տաճարում Վարդավառի տոնի ս. պատարագին:

Հուլիսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում նորընծա տ. Սարգիս քնն. Սարգսյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրենն ճնջեցելոց»:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող քեզիացի հոգևորական գործիչ, կանոնիկոս Ռայմոնդ Գորը հրաժեշտի տեսակցություն ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ:

Հայոց Հայրապետի և կանոնիկոս Ռայմոնդ Գորի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց Էկումենիկ ոգով, աշխարհում կայուն խաղաղության պաշտպանությանը նվիրված աշխատանքների մասին:

Կանոնիկոս Ռայմոնդ Գորը մի անգամ ևս իր երախտագիտությունը և շնորհակալու-

թյունը հայտնեց Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի և Էջմիածին և աստվածաշնչական Հայոց աշխարհի այցելելու պատենության համար: Ժամը 20-ին Վեհարանի սեղանատանը ողջերթի սեղան տրվեց՝ ի պատիվ կանոնիկոս Ռայմոնդ Գորի:

Ընդունելությանը ներկա էին տ. Թորգոմ, տ. Կոմիտաս, տ. Արսեն արքայազանները և արև. Ջ. Նաջարյանը: Նույն օրը, երեկոյան, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին, կանոնիկոս Ռայմոնդ Գորը լավագույն տպավորություններով մեկնեց Մայր Աթոռից:

*
* *

Հուլիսի 19-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմակալ առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը, որ ուխտավորաբար մոտ մեկ ամիս զտնվում էր Մայր Աթոռում, մեկնեց իր պաշտոնատեղին:

*
*
Հուլիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զի եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալն» (Մատթ. ԺԸ 11) բնաբանով:


Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Սարգիս քհն. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք՝ ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ» (Հակոբ. Ա 17) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ԱՄՆ-Ի ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԴԱՄՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Մի պարզ օր էր, ուրբաթ, հունիսի 17-ին. ամռան սովորական մի օր, բայց օդանավից իջնող ամերիկահայ ու կանադահայ երիտասարդների համար ամեն ինչ բացառիկ էր, նույնիսկ անհավատալի:

Հայրենի հողի վրա էին, շնչում էին Հայաստանի մաքուր օդը, զգում էին արևի չերմ ճառագայթները, տեսնում ձյունապատ Արարատը, որը կարծես ողջունում էր ու բարի գալուստ առում նրանց: Հանդիսավոր մի պահ էր բոլորի համար. առաջին անգամ հայրենիքի հողի վրա էին, վերածրնված Մայր Հայաստանում:

Խոմբը, բաղկացած ԱՄՆ-ի ու Կանադայի հայ եկեղեցաւեր երիտասարդաց կազմակերպությունների անդամներից՝ 23 պատանիներից ու աղջիկներից, իր դեկամարների՝ տ. Գաբեգին քին. Գասպարյանի և տ. Արշեն վրդ. Ալվազյանի, ինչպես նաև նրանց դիմավորող Մայր Աթոռի ներկայացուցչի առաջնորդությամբ, տեղավորվեց Մայր Աթոռի «Հայկաշեն» ամառանոցում՝ Բյուրականում, որտեղ ախոյի լինի նրանց հանգրվանը Հայաստանում անցկացրած օրերին:

9-րդ տարին է, որ ամռան այս առաջին ամսին ամերիկահայ և կանադահայ երիտասարդների մի խումբ այցելում է Մայր Աթոռ ու մայր հայրենիք:

9-րդ անգամն է, որ սփյուռքի հայ երիտասարդների երազանքները իրականություն են դառնում Վեհափառ Հայրապետի հայրական սիրտ ու հոգատարության շնորհիվ: «Դժբախտաբար մեր կապերը հայրե-

նիքի հետ զորավոր չեն,—խոստովանում էր խմբի անդամներից մեկը՝ օրիորդ Արտեմիա Ծամամյանը: Հայաստան այցելելով այդ կապերը կզորանան: Մենք պետք է տեսնենք այն, ինչ որ պատմվել է մեզ, որովհետև դժվար է մտապահել մեր հայրենիքի պատկերը առանց այն տեսնելու: Անկարելի է անմիջական զգացումները փոխարինել նկարներով»: Հենց այս էլ Վեհափառ Հայրապետի նպատակը՝ սփյուռքում ծնված ու այնտեղ ապրող այս երիտասարդների հոգում առաջացնել այն զգացումները, որոնք հատուկ են իսկական հայ մարդուն, և որոնց առաջացումը տեղի կունենա միայն ու միայն հայրենի հողի վրա, որտեղ «հայրենասիրությունն ավելի ուժեղ է՝ շրջապատված լինելով հայ ժողովրդով ու մշակույթով», ինչպես խոստովանում էր օրիորդ Զիմ Տորյանը: Այո՛, այս զգացումները կունենա և, ուրեմն, իսկական հայ՝ կլինի միայն նա, ով մոտիկից ճանաչում է հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, ով քայլելով հայրենի հողի վրա, զգում է անկեղծան բարեբից փոխանցվող ջերմությունն ու կենսատու ուժը:

Հայ երիտասարդներին հասցնելու համար այս վիճակին նրանց համար նախապատրաստված ծրագրի մեջ ընդգրկվել են լավագույն միջոցառումները՝

Սփյուռքահայության հետ մշակութաֆին կապի կոմիտեն կազմակերպեց հայոց լեզվի և երգի-պարի դասընթացներ, հայագիտական դասախոսություններ, իսկ Վեհափառ Հայրապետի հոգատարության շնոր-

հիվ նրանց համար առիթ է ստեղծվել այցելելու Հայաստանի քաղմաթիվ տեսարժան վայրեր:

Երևանում անցկացրած օրերին երիտասարդները ունկնդրեցին Միջուղաբաժնության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած դասախոսությունների մի շարք (հունիսի 20-ին՝ «Հայ ժողովրդի կազմավորումը», հունիսի 21-ին՝ «Հայկական միջնադարյան երաժշտությունը», հունիսի

Ժողատեղծագործության թանգարան, Էրեբունի և Ծիծեռնակաբերդ: Երևանից դուրս նրանք եղան ս. Գեղարդ վանքում, Գառնիի հեթանոսական տաճարում, Սևանում, Սարդարապատում, Զվարթնոցում ու Բյուրականի աստղադիտարանում: Հուլիսի 4-ից 6-ը նրանք այցելեցին Լենինական, Կիրովական ու Դիլիջան քաղաքներ և հյուսիսային Հայաստանի այլ տեսարժան վայրեր:



Հայ երիտասարդաց խումբը Մայր տաճարի առջև

22-ին՝ «Հայկական երաժշտությունը», հունիսի 23-ին՝ «Հայկական մշակույթը Ե դարում», հունիսի 24-ին՝ «Հայ ժողովրդի նպաստը համաշխարհային քաղաքակրթությանը», հունիսի 28-ին՝ «Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը», հունիսի 29-ին՝ «Հայ դասական երաժշտությունը», հուլիսի 1-ին՝ «Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում», հուլիսի 7-ին՝ «Հայաստանի ճարտարապետական հուշարձանները», պլայթների միջոցով):

Երևանում երիտասարդների խումբը այցելեց Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Հովհ. Թումանյանի և Ալ. Սպենդիարյանի սուն-թանգարաններ, Հայաստանի պետական պատկերասրահ, Ժողովրդական նվաճումների ցուցահանդես, Մատենադարան,

հայց «աչք ամենեցուն» ս. Էջմիածնի վրա էին: Մեր ժողովրդի հավատքի դարավոր կենտրոնը, Միածնաէջ այս վայրը, որը հայ հոգիների լուսի աղբյուրն է, գլուխը կրում էր միշտ հայ եկեղեցասեր երիտասարդների ուշադրության կենտրոնում: «Ս. Էջմիածինը աշխարհի ամենասուրբ եկեղեցին է,—ասում էր օրհորդ Սյուզի Ալեքսանյանը,—և այս անկործանելի պատերը, որ կառուցվել են քար առ քար մեր հավատացյալ պապերու ձեռքերով, ինձ տվեցին նոր գործություն ու վերանորոգված հավատք»: Այո՛, սուրբ է այս վայրը, սուրբ է այստեղ ամեն քար, կենսատու՝ ամեն մի հայի համար: Միջուղից եկած այս երիտասարդ հայերն էլ զգացին այս սրբությունը և նույն սրբությամբ, արտասովոր

աչքերով ընդունեցին նրանց տրված հոգևոր աստվածային սնունդը՝ և հաղորդությունը: Ամեն կիրակի նրանք ներկա են եղել ու և հաղորդություն ստացել Մայր տաճարում: Մայր Աթոռում տեղի է ունեցել նույնպես խմբի առաջին հանդիպումը՝ Վեհափառ Հայրապետի հետ, հանդիպում, որի ընթացքում երիտասարդները լսեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամներն ու ստացան Նրա օրհնությունը:

Հունիսի 30-ին, և. Թարգմանչաց տոնի առիթով, երիտասարդների խումբը, Մայր Աթոռի միաբանության հետ միասին, մեկնեց Օջականի և Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, որտեղ, և պատարագի ընթացքում, նրանք կատարեցին պատարագի երգեցողությունը: Բոլորը զգացին նույն բանը: «Էջմիածինը կենտրոնն է մեր տեսած բոլոր վայրերու, իսկ Վեհափառ՝ անոնց իշխանը»,—ինչպես ասում էր օրհորդ Վիկտորիա Մաքուլյանը: Բոլորը զգացին այս, ինչպես նաև Վեհափառ Հայրապետի սերն ու հոգատարությունը նրանց հանդեպ:

Ն. Սրբության հետ ունեցած վերջին հանդիպման ժամանակ, հուլիսի 9-ին, Բյուրակյանում, ի նշան նրանց երախտագիտության, երիտասարդները կատարեցին մի բանի երգեր հայերեն լեզվով, իսկ օրհորդ Սյուզի Ալեքսանյանը արտասանեց շատ հուզիչ կերպով Սիրվա Կապուտիլյանի մի բանաստեղծություն: Խմբի անունից շնորհակալական խոսք ասաց օրհորդ Սոնա Փալվեցյանը, որը հայերեն լեզվով կարդաց հետևյալ ճառը:

«Սիրելի Վեհափառ Տեր.

Մեր խումբին անունով կփափագիմ Ձեզի մատուցանել մեր որդիական սերն ու հարգանքը: Խորապես շնորհակալ ենք մեզի հանդեպ Ձեր ցույց տված հայրական խնամքին համար:

Բոլորիս համար տարիներու երագի մեջ իրականացումն էր մայր հայրենիք այցելելը: Մեր այցելության ընթացքին զորացանք միտքով ու հոգիով՝ տեսնելով մեր ծողովրդի անցյալի փառքն ու ներկայի նվաճումները: Հոգևոր մեծագույն մխիթարություն եղավ մեզի համար տեսնել մեր հավատքի կեղորն և Էջմիածինը, որը Ձեր շինարար առաքելության տակ կկատարե իր սրբազան առաքելությունը: Մեզի ամերիկահայ և կանադահայ երիտասարդներու

համար Դուք կհորհրդանշեք մեր դարավոր պատմությունն ու սուրբ հավատը:

Սիրելի Վեհափառ Տեր, իմ ձեռքիս մեջ ունիմ աննշան տուփ մը, որ իր մեջ կպարունակե շատ արժեքավոր բան մը, այդ փոքրիկ մաս մըն է մեր հայրենի հողեն: Խոնարհաբար կխնդրենք, որ պահեք զայն որպես խորհրդանիշ մեր հավատքին և հայրենասիրության:

Հայրենի հողից մի մաս, մի փոքրիկ, բայց սուրբ նվեր: «Զքոյս ի բոյոց քեզ մատուցանեմք», Հայոց Հայրապետ, ի նշան մեր երախտագիտության,—աս էր յուրաքանչյուրի ցանկությունը. այս կար ամեն մեկի հոգում:

Հանդիպման ավարտին, Ն. Սրբությունը նվերներ բաժանելով երիտասարդ հյուրերին, տալիս է նրանց իր հայրապետական օրհնությունը: Նույն հանդիպման ընթացքում տ. Գաբրիել քհն. Գասպարյանն ու տ. Արշեն վրդ. Ավագյանը ստանում են Վեհափառ Հայրապետի կողմից հայկական գեղեցիկ լանջախաչեր:

Հուլիսի 13-ին, չորեքշաբթի օրը, մեկնումս պահն էր: Դժվար էր երիտասարդների համար բաժանվել և Էջմիածնից և մայր հայրենիքից: Բոլորի աչքերից արցունքներ են հոսում, որոնք փայլում են աղամանդի պես արևի ճառագայթների տակ: Բաժանման անցողիկ արցունքներն են: Տար է Հայաստանի արևը, տար է հայրենի հողը, ավելի տար են սակայն երիտասարդների վերածնված հոգիները: Միաբերան բոլորը խոստանում էին նորից այցելել և Էջմիածին և Հայաստան: Հայրենիք այցելելը բախտավորություն է, հայրենիքում ապրելը իսկական կյանք է,—այսպես էին մտածում բոլորը և չէին սխալվում: Վերածնված Հայաստանը սփյուռքահայության միակ փրկությունն է: Նա սպասում է ձեզ, Սյուզի, Սոնա, Արտեմիա: Եկեք բոլորդ հայրենի հողի վրա, Հայաստանի մարտը երկնքի տակ, և Էջմիածնի սուրբ կամարների ներքո: Հայրենիքը սպասում է ձեզ, սիրելի երիտասարդներ, կանչում ու սպասում է սփյուռքի բոլոր հայերին:—«Եկայք առ իս փաստակեայք և բեռնատորք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. Ա 30): «...և որ զայ առ իս ոչ հանից արտաքս» (Հովն. 2 3):

ՍՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆԴԱԼՅԱՆ





ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍ

ՆՈՐ ԿՅԱԿԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԵՐ

Եկեղեցիի հիմքեր և հիմնադիրներ

Մ ու տ ք

Նոր Կտակարանի սուրբերը ուղիղ գիծով շարունակությունը կկազմեն Հին Ուխտի արդարներուն, թե ֆիզիքական և թե հոգևոր մարզերուն մեջ: Այսինքն երկու խումբերն ալ զավակներն են մեկ և նույն ժողովուրդին: Երկուքն ալ տեղ են նույն

ոգիի ու երկուքն ալ կծառայեն նույն Աստուծո և գրեթե նույն գաղափարներուն: Այն աստիճան սերտ և անխզելի են այս երկուքին կապերը, որ նորին առաջին սուրբերը կկազմեն վերջին օղակները հիմեն եկող ոսկի շղթային: Ավետարանական բոլոր սուրբերը, մեկ-երկու հոռվմայեցի հարյուրապետներու բացառությամբ, ծնած են Հին Ուխտի մեջ և դեռ հավատարիմ են անոր օրենքներուն և ավանդությանց կարելիոր չափով: Հիմնական ու գլխավոր տարբերությունն այն է, որ նորերուն առաջին խումբը կմախապատրաստե գետինը և կհարթե ճամբան Մեսիային, ու կտեսնե արշալույսը Նոր Դարաշրջանին, զոր հի-

* Վերջերս գոհունակությամբ Մայր Աթոռում ստացվեց տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի «Աստվածաշնչական սուրբեր» նոր և արժեքավոր ուսումնասիրությունը: Սույն գիրքը բաղկանում է երկու մասից:

1. «Հավատքի սուրբեր»՝ նվիրված Հին Կտակարանի մախաբայերի, մախապետների, դատավորների, մարգարեների կյանքին և գործունեությանը:

2. «Նոր Կտակարանի սուրբեր», «Եկեղեցիի հիմքեր և հիմնադիրներ», որտեղ ուսումնասիրության են ենթարկվել «Նախակարապետք Քրիստոսի», ա-

ռաքյալներ, աշակերտներ, գործակիցք և աշակերտ Պողոսի, սուրբերի կյանքն ու գործունեությունը:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հիշյալ գրքի երկրորդ մասի նյութերը՝ ամսագրի հաջորդական համարներում: Սույն գրքի մասին հաջորդ համարներից մեկում կհրատարակվի համադատասխան գրախոսական:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ները լոկ նախատեսած էին: Նորերու հաջորդ խումբը ֆիզիքական աչքով «կոտենն և ձեռքով կշռալիս» և կգործակցին Տիրոջ Օծյալին, զոր հիմները լոկ հոգվով տեսած էին: Վերջապես նորերու երրորդ և վերջին խումբը կկազմեն ականատես վկաներու աշակերտները և հաջորդները, որոնց մեծ տասը շտեման իրենց Փրկիչը մարմնավոր աչքերով քայց հավատացին, և որոնք իրարու կկապեն հրեությունեն եկող եկեղեցին և հեթանոսներն կազմված եկեղեցին, քանի որ այս խումբը իր մեջ կպարունակե երկու շրջանակներն ալ եկած տարրեր: Ուստի Նոր Կտակարանի սուրբերն ալ պիտի ներկայացնենք քննական քանի մը խումբերու քաժնեկով զանոնք:

Գ Լ Ո Ւ խ առաջին

ՆԱԽԱԿԱՐԱՆԴԵՏԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Այսպես կկոչենք այն արդար հոգիները, որոնք ուղղակի կամ անուղղակի, այս կամ այն հանգամանքով գետին պատրաստած ու կապված են Քրիստոսի հետ, և օժանդակ ու վկա հանդիսացած են Անոր ֆիզիքապես աշխարհ գալուն առթիվ:

1—2, Հովակիմ և Աննա

Նոր Կտակարանի սուրբերու շարքը կբացվի այն և կին այս երկու արդար հոգիներով, որոնք իրենց հավտաքով և ոգիով գրեթե ոչինչով կտարբերին Աբրահամ ու Սառայեն կամ Սամվել մարգարեի ծնողք՝ Եղիանայեն ու Աննայեն: Երեք պարագաներուն ալ այրերը արդար, ուղիղ և աստվածավախ մարդեր են. Երեք պարագաներուն ալ կիները քարեպաշտ՝ քայց ամուլ են: Երեք պարագաներուն ալ—չորրորդ մըն ալ քիչ հետո պիտի տեսնենք—Աստուծոյն խոստացված զավակներ կունենան:

Հովակիմ և Աննա Նոր Կտակարանի սուրբերուն կարգին անցած են լոկ Քրիստոսի նախածնողքը՝ այսինքն մեծ հայրը և մեծ մայրը եղած քլլայուն համար, մոր կողմէ: Այլապես՝ անոնք չեն հիշված Նոր Կտակարանի մեջ:

Իրենց մասին տեղեկություն կբաղենք «Նախապետարան» կամ «Գիրք Հակոբա» կոչված գրությունէ մը, որ թեև չէ անցած ս. Գրոց կանոնի մեջ, քայց ախորժով կարդացված է նախնի քրիստոնյաներու կողմէ: Գիրքը կբովանդակե աստվելաբար Հիսուսի մանկության վերաբերյալ գողտրիկ դրվագներ, որոնք իրենց չափազանցյալ և մանկունակ ոճով կհաստատեն որ վառ երևակայության ծնունդ են աստվելաբար: Սակայն այլ կետերու մեջ ներքի է մտածել

թե այդ գիրքը իր մեջ կպարունակե տարրերը և արձագանքները նաև վավերական ավանդության: Այս գիրքը որպես թե գրած քլլա Հակոբոս Տառնեղբայրը, սակայն գիտնականներ կկարծեն որ գրված է հրեա քրիստոնյայի մը կողմէ 150-ական թվականներուն:

Ըստ այս գրքին Հովակիմ Դավթի ցեղեն՝ քարեպաշտ և մեծահարուստ մարդ մըն է. իսկ Աննա քահանայական տունէ համեստ և երկյուղած կին մըն է:

Օր մը Հովակիմ երբ Աստուծո տաճարին մեջ ընծա կմատուցաներ ուրիշներու հետ, պաշտոնի վրա եղող քահանան ըսավ, որ ինք պարտավոր էր ամենէն վերջը ներկայանալ քանի որ զավակ չունէր: Սակե շատ վիրավորվեցաւ Հովակիմ. ձգեց տաճարը և ուղղակի լեռ ելաւ իր հովիվներուն հետ. «Եվ միտքը դրաւ տուն չվերադառնալ, ոչ ալ ուտել կամ խմել մինչև որ Աստված այցելեր իրեն: Աղոթքը իրեն կերակուր քրավ և արցունքը «քմայելի»: Երբ Աննա իմացաւ իր ամուսնույն տունէն հեռանալը, ինք ալ սուգի զգեստ հագաւ և ինքզինքը աղոթքի և ապաշխարանքի տրվաւ:

Օր մը Աննա երբ պարտեզ իջած էր աղոթելու համար, աչքերը վեր առաւ և տեսաւ թռչունները, որոնք բույն շինած իրենց ձագուկները կկերակրեին. այս տեսարանէն Աննային սիրտը սաստիկ փղծկեցաւ և ըսավ Աստուծո լալով. «Վայ ինձի, թրոշուններեն անգամ վար մնացի. անոնք ձագուկներ ունին ու ես գրկված եմ զավկի շնորհէն». ու այսպես երկար աղոթեց լախառաջ: Այն ատեն տիրոջ հրեշտակը երեցաւ անոր և ըսավ, թե լաված էին իր աղոթքները և անա Աստված իրեն մանուկ մը պիտի շնորհեր, որուն անունը ամբողջ աշխարհ պիտի տարածվեր: Աննա ուխտեց որ եթե զավակ մը ունենա, մանչ կամ աղջիկ, Աստուծո պիտի ընծայեր:

Նույն տեսիլքը երեցած՝ և նույն ավետիսը տրված էր նաև Հովակիմին, որ լեցված ուրախությամբ՝ իր արջառներեն և ոչխարներեն լավագույնները ընտրեց Աստուծո տաճարին և քահանաներուն նվիրելու, և քաղմաթիւ մատաղներ մորթեց աղբատներուն համար, ու վերադարձաւ տուն: Աննա հոլացաւ ու ծնաւ հրեշտակային մանուկ մը, զոր կոչեցին Մարիամ, որ կնշանակե լուսավորյալ, քանի որ նորածինը լույսի պես աղջնակ մըն էր, «որով օրհնվեցան բոլոր ազգերը»: Աստուծո տաճարին ընծայեցին զայն կաթեն կտրվելէն հետո:

Ըստ ավանդության Հովակիմ չէ տեսած իր թոռնիկը, Հիսուս մանուկը, իսկ Աննա

տեսած, երջանկացած ու կարճ ժամանակ մը հետո վախճանած է խաղաղությամբ:

Հովակիմ և Աննայի հիշատակը կկատարեն Հայց. եկեղեցին, Յուդաբեր կանանց հետ, Վերափոխումի իննօրյակին անմիջապես հաջորդող երեքշաբթի օրը: Իրենց տունն ալ մինչև օրս կցուցվի Երուսաղեմի մեջ, որ եկեղեցիի վերածված է. թեև ըսողներ կան որ անոնք ապրած են Բեթղեհեմ կամ Նազարեթ:

Հայ եկեղեցին ի պատիվ Հովակիմի և Աննայի գեղեցիկ շարականներ հորինած է, որոնց մեջ կհաստատվի թե այն օրհնությունը, որ Աստուծո կողմէ տրվեցաւ «աստվածազույգ արուսաց և իգաց», լիովին իրականացաւ Հովակիմի և Աննայի վրա: Կհիշվի որ Հին Ուխտի արքայական ու քահանայական «գալազանները միացան Հովակիմի և Աննայի վրա, որոնց միակ պտուղը եղաւ ս. Կույր: Ու կեզրակացնէ շարականը.

«Ի յամուլ երկրէ (Յովակիմէ և Աննայէ) այսօր բուսաւ մեզ հարեբեր բոյսն բարի. շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց. Միամայրն Մարիամ, արմատ Տնկոյն անմահութեան: Աղաչանօք սոցա խնայեալ ի մեզ»:

Հույնք կհիշատակեն այս երկուքը սեպտ. 9-ին: Լատինք՝ Հովակիմը առանձինն մրտ. 20-ին. Աննա գաւտ հլս. 26-ին:

8. Հովսեփի «Աստվածահայր»

Հիսուսի հայրագիրը և ամուսինը Աստվածամայր Մարիամին, որուն նմանողաբար կոչված է «Աստվածահայր»: Հովսեփի ալ Դավիթի ցեղէն էր: Ավետարանը գայն կկոչէ «Սրդար» մարդ: Երբ կհիշվի Ավետարանին մեջ, արդեն իսկ նշանված է Մարիամին հետ, և կքնակի Նազարեթ, և իր ապրուստը կշահի հյուսնությամբ:

Տակավին պաշտոնապէս չէին ամուսնացած երբ Հովսեփի վերահասու եղաւ, թե իր նշանածն հոյ է արդեն: Հովսեփ շվարումի և շփոթության մասնակցաւ. և որովհետև ազնիւ մարդ մըն էր, առանց պատճառը հրապարակելու «որոշեց լռել» այն արձակել» իր նշանածը: Մինչդեռ այսպէս կխորհէր, Աստուծո հրեշտակը տեսիլքի մը մեջ երևցաւ անոր ք. ըսաւ. «Հովսեփ, որդի Դավիթի, մի վախճա՛ր տունըդ առնելէ Մարիամը իբր քու կինդ. որովհետև անոր մեջ ծնածը ս. Հոգինն է. պիտի ծնի որդի մը, անոր անունը Հիսուս պիտի դնես (որ կնշանակէ Փրկիչ), որովհետև ան պիտի փրկէ իր ժողովուրդը

մեղքերէն»: Ու սսիկա կկատարվի համաձայն Աստուծո խոսքին (որ տրվեցաւ Եսայի մարգարեին). «Ահա կույր պիտի հղանա և պիտի ծնի որդի մը, որուն անունը պիտի դնեն Էմմանուէլ» (որ կթարգմանվի Աստված-մեզի-հետ): Հովսեփ երբ արթնցաւ քունէն, Տիրոջ հրեշտակին ըսածին պես ըրաւ. իր մոտ առաւ իր կինը և ավելի սերտ սիրով ու հարգանքով կապվեցաւ անոր և ամեն մարզի մեջ տեղ ու պաշտպան կանգնեցաւ անոր, որ արժանացած էր Աստուծո կողմէ բարձրագույն պատիվին, այսինքն «Բարձրալի Որդի»-ին մայր ըլլալու գերագույն պաշտոնին:

Երբ ծնաւ Հիսուս, Հովսեփի ի գործ դրաւ անոր վրա օրենքի բոլոր պահանջները — ութօրյա թլփատել տվաւ և քառասնօրյա Աստուծո տաճարին ընծայեց և ետ ստացաւ գայն տաճարին ընծայելով զույգ մը աղաւթի:

Երբ Հիսուսի կյանքին դեմ մահվան վտանգ հարուցվեցաւ, Աստուծո հրեշտակին հրամանով փոքրիկը և մայրը փախցուց Եգիպտոս, ուր մնաց քանի մը տարիներ, և կրկին հրեշտակի հրամանով վերադարձաւ ու բնակեցաւ Նազարեթ:

Հիսուս երբ տասներկու տարեկան եղաւ, ըստ օրենքի պահանջքին առաջին անգամ Երուսաղեմ տարաւ գայն: Վերադարձի ճամբուն վրա ինք և մայրը անդրադարձան որ Հիսուս իրենց հետ չէր. վերադարձան Երուսաղեմ և Հիսուսը գտան տաճարի մեջ, շրջապատված օրենքի վարդապետներով, որոնց խելացի պատասխաններ կուտար: Հովսեփ տեսաւ Հիսուսի մեծության արշալույսը: Այս միջադեպէն հետո չի հիշվիր այլևս Ավետարաններուն մեջ, որմէ կհետևեցվի որ Հովսեփ վախճանած էր Հիսուսի հանրային գործունեության սկսելէ առաջ:

Հովսեփ մեծ անուն ունի կաթոլիկ եկեղեցիի մեջ և հռչակված է անոր պաշտպան սուրբը: Որչափ բարձր բունված է Հովսեփի անունի կաթոլիկ եկեղեցիի մեջ, նույնքան աննշան պահված է ալ արևելյան եկեղեցիներու՝ հատկապէս մեր մեջ: Մեր եկեղեցիի մեջ, օրինակ, չենք հիշեր տաճար մը, որ ընծայված ըլլա իր անունին, ոչ ալ շարական մը հորինված է ի պատիւ իրեն: Իր տոնակա՞ն հիշատակությունն անգամ կորսված է ուրիշ տոնելիքներու խումբի մը մեջ, որոնք ըստ երևոյթին ոչ մեկ կապ ունին իր հետ, խաչի վեցերորդ կիրակիին հաջորդող երկուշաբթին:

Տակալն քիչեր այնքան մեծ հավատքի հերոս եղած են որքան Հովսեփ: Այս մասին համոզում կարելի է կազմել վերհիշելով, որ այս մարդը դեռ կշարունակէ այրը մնալ իր կնոջ, որուն որովայնի պտուղը



գիտն թե իրմն չէ. բայց միաժամանակ կհավատա հրեշտակային հայտնության, թե աստվածային է: Կարելի՞ է երևակայել ավելի մեծ հերոսություն քան ապրիլը կուսական կյանք մը հրեշտակագեղ կնոջ մը հետ, պարզապես պահապանը հանդիսանալով մշտնջենական կուսության անոր, որ արժանի եղած էր աստվածային բարձրագույն շնորհին, մայր ըլլալու Անոր ճարմնացած Որդիին: Կարելի՞ է երևակայել ավելի մեծ պատիվ ու պարտականություն, քան հայր լինել և հոր մը բոլոր պարտականությունները կատարել հանդեպ մեկու մը, որ «Որդի հարձրելու պիտի կոչվեր»: Որքան ալ Հիսուս բազմիցս կոչված ըլլա «Որդի Աստուծո» կամ «Որդի Դավթի» կամ «Որդի Մարդո», կոչված է նաև, և պիտի մնա որպէս «Որդի Հովսէփա»: Ասիկա Հովսէփին անկապտելի և հալիտենական փառքն է: Հետևաբար արդար է կայտնիկ եկեղեցիին բարձրագույն հարգանքը, որ ընծայված է այս խոնարհ և արդար մարդուն հիշատակին: Եվ արժանի է որ ան ներկայացվի աստվածային իր մանուկը բարձր ու հայրաբար բռնած իր աշխատավորի կարշնդեղ բազուկներին մեկին վրա, և մյուս ձեռքին մեջ բռնած շուշանածաղիկ մը, խորհրդանշանը իր անաբատության և հոգեկան մաքրության:

Ոչինչով կարդարանա սակայն մեր եկեղեցիի անտարբերությունը այս խոնարհ աշխատավորին հանդեպ, որ որքան իշխանական ծագում ունի՝ նույնքան և ավելի ազնվական հոգիի մը տեր է, և արժանացած «Աստվածահայր» անգերազանցելի կոչումին:

Ս. Հովսէփ Հայսմավորքի մեջ ներկայացված է իբրև մարդ մը «ամբողջովին քաղցրությամբ ճեցումն հեզ, ողորմած, մարդասեր, վշտակից ալոց և օծոված ամենաբարի բնությամբ»:

Հույն կնիշատակեն զայն դեկտ. 25-ը կանխող Նախահարց կիրակիին. լատինք՝ մարտ 19-ին:

4. Ս. Կույս Մարիամ

Մենք ավելի հանգամանորեն խոսած ենք ս. Կույսի մասին մեր «ՏԱՂԱՎՈՐ ՏՈՆԵՐ» հոդվածաշարքին «Վերափոխում» գլուխին տակ. պիտի չուզենք կրկնել այնտեղ ըսվածները: Այստեղ լոկ պիտի հաստատենք որ ս. Կույսը, պատմական եկեղեցիներու համար գերագույնն է բոլոր սուրբերուն՝ կրկնակ պատճառներուն:

Նախ ունի սուստապես այն բոլոր հատկությունները և սուսքինությունները, որոնք ամհրաժեշտ են սրբության համար. օրինակ խոնարհությունը, որ կհայտնաբերվի

ամբողջ իր կյանքի ընթացքին: Ինքն իսկ կըսն իր հորինած երգին մեջ. «Աստված նայեցալ իր աղախինին խոնարհության վրա»: Աստուծո կամքին համակերպող էր մինչև իսկ անկարելի նկատված պարագաներու տակ: Ավետման միջադէպը եզրակացության կերելի ս. Կույսի համարելի համակերպությամբ: «Ես Աստուծո աղախինն եմ. ըսածիդ պես թող ըլլա ինձի»: Իսկ անոր համբերությունը հատկապես հայտնաբերվեցալ Գողգոթայի վրա, որ իր Միածինին հետ քամեց տառապանքի բաժակը մինչև մորը: Խոնարհություն, համբերություն ու Աստուծո կամքին համակերպությունը հիմնական ու քանադի հատկություններ են Սրբության մեջ:

Երկրորդ՝ Մարիամ եղալ ամենամոտիկ անձը մեր Փրկչին, թե ֆիզիքապես և թե հոգեպես. ոչ որ սիրեց զԱյն այնքան շատ, որքան ինք: Ան եղալ Աստուծո Որդվոյն սնուցիչը և սուսջնորդը Անոր մանկության տարիներուն: Հետևաբար արդար և տեղին է այն մեծագույն հարգանքը և պատիվը գոր քրիստոնյա եկեղեցին սուսջին օրերեն իսկ ընծայեց այս ս. Կնոջ: Արդարև ս. Կույսը ինքն իսկ աստվածային ներշնչմով մարգարեացալ, թե «Երանի պիտի տան ինձի բոլոր ազգերը», ներառյալ իսլամները, որոնք ևս մեծ հարգանք ունին «Մարիամ Անայի» նկատմամբ: Հին եկեղեցիներ բազմաթիվ օրեր հատկացուցած են անոր հիշատակը ոգեկոչելու և պանծացնելու համար: Մեր եկեղեցին, օրինակ յոթը տոնախմբություններ հատկացուցած է ս. Կույսին, հիշատակելով անոր կյանքին բոլոր կարևոր հանգրվանները—Հղությունը, ծնունդը, ընծայումը, Ավետումը, ննջումը և վերափոխումը: Մինչև իսկ անոր պատկանող երկու սուսքականերու—գոսիին և տուփին, գյուտին առթիվ տոնախմբություններ հաստատված են:

Հորինած է մեր եկեղեցին անոր ի պատիվ բազմաթիվ շարականներ, մեղեդիներ և տաղեր, որոնցմե ոմանք լավագույններն են մեր հոգևոր բանաստեղծությանց մեջ, որ կարծես մրցումի ելած են հորինողները ս. Կույսը նույնացնելու բնական ու աստվածաշնչական խորհրդավոր և գեղեցկագույն պատկերներուն հետ. «Տապալակ ապրեցուցիչ և Տաղասար Արքանա մեան. Սափոր ոսկեղէն լի մանանայի. Գառազան ծաղկեալ յարմատոյն լնաւայ»...: Ինչպէս նաև նմանացուցած են զայն բնության գեղեցիկ երևոյթներուն. «Առաւուս տաղադրեալ. Արուսեակ գութաբար. բարունակ ծաղկեալ. ազգի վայելուչ. Յօղ քաղցրածաւալ...» ևայլն, ևայլն:

«Աստուած փառաւորեալ է ի սուրբս

իր»։ Թերևս ոչ ոք այնքան արժանավորապես փառավորած է զԱստված, քանի՜ և գործով, որքան ու Կույսը։ Իր կյանքը ամբողջ փառատրություն մըն էր Աստուծո, նման երկինքին, որ կեցած տեղը, իր անհուն մեծությամբ և պլազմությամբ «Աստուծո փառքը կպատմե» լուռ և անլռելի։ Անդրադարձա՞ծ ենք այն գեղեցիկ իրականության, որ քրիստոնեական առաջին երգը, առաջին սաղմոսը, առաջին շարականը հորինած է աստվածային ներշնչումով նույն ինքն ու Կույսը՝ Ավետումեն անմիջապես հետո, իր կյանքի գեղեցկագույն գարունին, և ընծայած է զայն Աստուծո իբրև երեխայիքը այն միլիոնավոր հոգևոր երգերուն, որոնք իրմե հետո պիտի գրվեին քրիստոնյա ներշնչյալ հոգիներու կողմե։ Ս. Կույսի երգը, որ պահված է Ավետարանին մեջ «Մեծացուցե» սկզբնավորությամբ և անունով, եկեղեցին երգած է դարերով և կերգե մինչև այսօր, մեկ կարևոր տարբերությամբ. նախապես եկեղեցին ու Կույսին բերանով և անոր հետ Աստված կփառավորեր այդ երգով. այսօր զայն առիթ և իբրև սկզբնավորություն կգործածե գովերգելու համար ու Կույսը և անոր միջոցով փառավորելու համար զԱստված և անոր բարեխոսությամբ զանազան աստվածային շնորհներ հայցելու համար։

Բազմահազար եկեղեցիներ կան ներկայիս աշխարհի ամեն կողմերը իր անունին ընծայված, և հազարավորներ եղած են պատմության մեջ։ Հայց. եկեղեցիի Մայր տաճարը, Էջմիածինը, օծված է հաճուն ու Կույսի, ինչպես նաև Թուրքիո հայոց պատրիարքության Մայր տաճարը Գումգալուի մեջ։

Մարիամ ամեն մասամբ արժանի է այն պատիվներուն, որոնք իրեն կընծային վերոհիշյալ կերպով, ու մանավանդ այն գերագույն պատիվին, ըստ որուն մեր բոլոր եկեղեցիներու ու պատարագի սեղանները պսակված են ու Կույսի մայրական նկատով. աստվածային իր Մանուկը գրկին մեջ։

5—6. Զաքարիա և Եղիսաբեթ

Ծնողքը Հովհաննես Մկրտիչի։ Թեև Եղիսաբեթի անունը չերկիր մեր տոնացուցին մեջ, սակայն մենք իրավունք զգացինք անոր անունն ալ ավելցնելու Նոր Կտակարանական սուրբերու շարքին, հիմնվելով ավետարանական և պատմական տվյալներու վրա։

Ավետարանին մեջ ասոնց երկուքն ալ հավասարապես ներկայացված են իբրև արդար և օրինապահ անձեր։ «ԵՐԿՈՒՔՆ ալ ԱՐԴԱՐ Էին Աստուծո առջև և կպա-

հեին Տիրոջ պատվիրանները և օրենքները անարատությամբ» (Ղկ. Ա 6)։ Իսկ պատմական ու այժմեական իրականությունը այն է, որ մյուս հին եկեղեցիներու մեջ Եղիսաբեթ տոնելի սուրբերու շարքին մեջ մտած է արդեն։ Այնպես որ մեզի համար անհասկնալի մնաց, թե ինչո՞ւ բացակա է ան մեր տոնացուցին մեջ։ Եթե Զաքարիան տոնացուցի անցած է Հովհաննես Մկրտչի հայրը եղած ըլլալուն համար, ապա նույն իրավունքին արժանի է նաև Եղիսաբեթը, իբրև մայրը Մեծ Կարապետին։

Երկուքն ալ քահանայական ցեղն էին և գուրկ մնացած՝ զավակի մը մխիթարութենէն, որովհետև կըսէ Ավետարանը. «Եղիսաբեթ ամուլ էր»։ Ամուլությունը հրեից մեջ մեծագույն զրկանքներէն մեկն էր։ Եղիսաբեթ իբրև «ազգական» կենդանիացնա ու կույս Մարիամին։ Այդ ազգականական կապին ինչ ըլլալը չէ հատկված Ավետարանին մեջ։ Ուր որ Ավետարանը կրէ, ավանդությունը կրացնէ։ Ըստ ավանդության երկու քրոջ զավակներ են. որով Հիսուս և Հովհաննես ալ երկու քրոջ թոռներ կըլլան, ըստ այս ավանդության։

Կրնանք ըսել որ Նոր Ուխտի աստվածային մեծ տրամային վարագույրը կրացվի Զաքարիայի երևումով Ավետարանի սրբազան թատերաբեմին վրա, ուր զբաղած է խումկ մատուցանելով Աստուծո տաճարին մեջ։ Նվիրական այս պարտականության կատարումի ընթացքին Զաքարիա կարծանա տեսիլքի մը. «Տիրոջ հրեշտակը երևցավ իրեն, կանգնած խնկոց սեղանի աջ կողմը։ Զաքարիա խոռվքի և ասրասպի մատնվեցաւ այս տեսարանին»։ սակայն Տիրոջ Հրեշտակը անոր վախը փառաւելու համար ըսավ.

— Մի վախճար Զաքարիա, աղոթքը լսելի եղավ Աստուծո առջև. Կինդ, Եղիսաբեթ զավակ մը պիտի բերե քեզի, անոր անունը Հովհաննես պիտի դնես...»։ Զաքարիային անհավատալի թվեցաւ նման ավետիս մը, ուստի ըսավ.

— Ինչպես կրնամ վստահ ըլլալ այս մասին, քանի որ ես և կինս ծերացած ենք արդեն։ Հրեշտակը գոհ չմնաց տարակուսով լի այս պատասխանէն և ծանրությամբ ու հանդիմանական շեշտով ըսավ.

— Ես Գաբրիէլն եմ, որ մշտապես Աստուծո ներկայության կմնամ Անոր հրամանները գործադրելու համար։ Աստուծոն զրկվեցա քեզի տալու այս ավետիսը. քայց քանի որ նշան մը կուգես համոզվելու համար, այս վայրկյանէն համար պիտի ըլլաս և պիտի չկրնաս խոսիլ մինչև ըսածս կատարվի։

Երբ Զաքարիա դուրս եղավ տաճարէն,

իր լեզուն կապված էր արդարև և նշանա-
ցի կերպով կաշխատեր բացատրել իր ու-
շացման պատճառը: Ամեն ոք հասկցավ որ
գերբնական պատահարի մը հանդիպած է:

Երբ տաճարի շրջանակին մեջ իր պար-
տականության օրերը լրացան, վերադար-
ձավ իր տունը, որ Երուսաղեմեն դուրս էր:
Ավանդությունը անոր բնակությունը կղևն
ներկա Այն Քերիմ կոչված գյուղը, ոչ շատ
հեռու Երուսաղեմեն, որ մինչև օրս կցուց-
վի իրենց տունը, եկեղեցիի վերածված:
Հայերս այս գյուղը կկոչենք «Հովհաննու
Ծնունդ», որ ունեցած ենք մաս եկեղեցի-
ներ, որոնք սակայն ժամանակի բնթացքին
լատինաց ձևերը անցած են:

Հղացավ Եղիաբեթ և Աստուծո գոհու-
թյուն կմատուցաներ, որ «նայած էր իրեն,
և ամբողջան նախատիկնը վերցուցած էր
իրմեն: Երբ ա. Կույսը ավետումեն հետո
իրեն այցելեց, «Եղիաբեթ լեցվեցավ ա.
Հոգիով և բարձր ձայնով աղաղակեց, խու-
քը ուղղելով Մարիամին:

«Օրհնյալ ես դուն կիներու մեջ,
Եվ օրհնյալ է որովայնիդ պտուղը.
Ուրկե՞ որ այս շնորհը ինձի.
Որ Տիրոջս մայրը ինձի այցելե.
Երբ լսեցի ողջույնիդ ձայնը,
Խաղաց մանուկս հրճվագին որովայնիս
մեջ.

Երանի անոր որ կհավատա
Թե Տիրոջ ըսածները պիտի իրականանան»

(Ղկ. Ա. 42—46):

Երկու խոնարհ հոգիներ, լեցված գերբ-
նական ուրախությամբ՝ իրարու հետ կխո-
սին քանաստեղծական լեզվով: Աստուծո
Հոգին, մարգարեական ու ներշնչումի Հո-
գին, որ գրեթե լսած էր երեք-չորս դարե-
րե ի վեր, հանկարծ կրկին կիջնե մարդոց
վրա, սկսելով այս համեստ երկու կիներեն,
որոնք իսկապես կխոսին մարգարեներու
լեզվով:

Նույնը կպատահի մաս պատանձած Զա-
բարիային, որու մանկան աչքերը մեր աշ-
խարհի լուսին բացվելե հետո՝ կբացվին
մաս իր լեզվին կապանքները և ինքն ալ
«լեցված ա. Հոգիով մարգարեացավ և
ըսավ.

«Օրհնյալ ես Տեր Աստված Իսրայելի,
Որ այցելության ելար մեզի.
Փրկություն բերիր ժողովուրդիդ...»

Ու խոսքը իր նորածին որդիին ուղղելով
ըսավ.

«Եվ դուն, ով մանկիկ,
Քարձրյալի մարգարե պիտի կոչվիս.
Տիրոջ առջևեն պիտի քալես.
Անոր ճամբաները հարթելու համար,
Պիտի ուղղես մաս մեր ոտքերը
Դեպի խաղաղության ճամբաները»

(Ղկ. Ա. 67—69):

Այս կետին երկուքին ալ առաքելությունը
լրացած ըլլալով, կբաշվին հրապարակեն,
իրենց տեղը տալով իրենց մեծամուն զավ-
կին: Ու կփակեն իրենց աչքերը Արդարու-
թյան Արեգակի ծաղկման արշալույսը նըշ-
մարած ըլլալու խաղաղությամբ:

Զաբարիա մեր մեջ կտոնվի Եզեկիելի և
Եզրի հետ, Վերափոխման հաջորդող եր-
րորդ շաբթվան երեքշաբթի օրը:

Հուլիս՝ Զաբարիան ստանձինն կհիշա-
տակեն սեպտ. 5-ին, իսկ լատինը՝ երկուրը
միասին մոյ. 5-ին:

7. Հովհաննես Մկրտիչ

Հիսուսն վերջ մեծագույն դեմքը Ավետա-
բաններու մեջ, և գլխավոր գործիչը Նոր
Կտակարանի սկիզբները: «Աստուծո թա-
գավորության», այսինքն քրիստոնեական
եկեղեցիի, դարաշրջանը պաշտոնապես
բացողը եղավ Հովհաննես:

Խոստումի զավակ էր, ինչպես տեսանք,
և իր ծնունդը կատարվեցավ հրաշալի պայ-
մաններու ներքև: Իր ապագա դերը հան-
գամանորեն ճշդված էր հրեշտակին կողմն,
որ ավետեց անոր ծնունդը իր հոր:

«Նա մեծ պիտի ըլլա Տիրոջ առջև.

Գինի և օղի պիտի չխմե.

Ս. Հոգիով պիտի լեցվի մորը որովայնեն.

Իսրայելի որդիներեն շատերը իրենց Աս-
տուծույն պիտի դարձնեն.

Եղիայի հոգիով պիտի քալե Տիրոջ ներկա-
յության.

Որդիներուն սիրտերը պիտի հաշտեցնե
հայրերուն հետ.

Ընթոստները արդարներու իմաստությամբ
պիտի լեցնեն.

Տիրոջ համար կազմ ու հարմար ժողովուրդ
մը պիտի պատրաստես» (Ղկ. Ա. 15—17):

Հովհաննեսի պատանությունը և երիտա-
սարդությունը անցան բնակության վայրե-
րե հեռու մեկության մեջ, Աստուծո ներկա-
յության և շնորհաց հովանիին ներքև:

Հրապարակ իջալ քարոզելու երեսուն
տարեկանին, Հոովմի «Տիբերիոս կայսեր
տասնհինգերորդ տարին»: Քարոզության
վայրն էր Հորդանանի հովիտը: Ավետա-

յաններու մեջ Հովհաննէս Գուրգանցի է Եւսայի մարգարէի կողմէ նախատեսուած «Անապատի մեջ բարձրացող ձայն»-ին հետ, որ կըսէ.

«Տիրոջ համար ճամբա պատրաստեցէք.
Անոր համար շիտակ ուղիներ հարթեցէք»
(Ղկ. Գ 4—5):

Հովհաննէսի քարոզությունը իր հոգիին և կյանքին՝ զգեստին և կերակուրին պես պարզ ու ծուկկալ է: Կարելի է երկու բաներու մեջ խտացնել. Ապաշխարանք և Արդարություն:

«Ապաշխարեցէք, որովհետև մոտեցած է երկինքի արքայությունը... Ապաշխարանքի արժանի պտուղներ տվէք... Կացինը ծառին արմատին քով դրված է. բարի պտուղ չտվող ծառը պիտի կտրվի և կրակը նետվի» (Ղկ. Գ 7—9):

Ու կավելցներ.

«Ով որ երկու հանդերձ ունի, մեկը չունեցողին թող տա. նույնը ընել կերակուրի արարգային: Պետական պաշտոնյաներ իրենց թոշակով թող գոհանան. ժողովուրդին ավելին չպահանջեն, անիրավություն չընեն, չզրպարտեն ոչ ոք» (Ղկ. Գ 10—14):

Տեսնելով Հովհաննէսի ուժեղ և անվախ քարոզությունը, և մեծ հեղինակությունը, ոմանք կհարցնեն. արդյոք ա՛յս է Մեսիան: Հովհաննէս կըսէր ոչ. «Ես ձեզ կմկրտեմ ջրով ի նշան ապաշխարանքի, բայց ինձմէ հետո կուգա հզորագույնը, որուն կոշիկներուն կապն անգամ քակելու արժանի չեմ ես. Ան ձեզի պիտի մկրտեւ ւ. Հոգիով և կրակով»:

Հովհաննէսի գործունեության գագաթը, կազմեց զՀիսուս մկրտելը, և զայն իբրև խոստացված Մեսիա՝ հայտարարելը: Երբ տեսավ որ Հիսուսն ալ սովորական բազմության մեջ խառնված մկրտության կմոտենա, իր մարգարեական ոգիովը ճանչըցավ զայն և ուզեց արգելք հանդիսանալ: «Ես քեզմէ պետք է մկրտվիմ, և դուն ինձի՝ կուգաս» ըսելով: Հիսուսի պնդումին վրա տեղի տվավ և մկրտեց զայն ու հայտարարեց. «Ահա Աստուծո Գառնուկը, որուն վրա քեզցված է աշխարհի մեղքերը». և որ մարդոց փոխարեն զոհվելով քավություն պիտի տա անոնց մեղքերուն. ու շարունակեց.

«Սա է, որու մասին կըսէի թե ինձմէ հետո պիտի գա... Ես եկա զայն հայտարարելու Իսրայէլի ժողովուրդին... Տեսա եւ Հոգին, որ կիջներ երկինքէն Անոր վրա

աղավնիի կերպարանքով: Ես զայն չէի գիտեր, սակայն Ան որ գիտէրկեց, ըսավ. Որում վրա որ կտեսնես Հոգիին իջնելը, Ան է որ ս. Հոգիով պիտի մկրտես: Ու ես տեսա և կվկայեմ, թե Սա է Աստուծո Որդին» (Հովհ. Ա. 29—34):

Հիսուսի մկրտությամբ, և զայն իբրև խոստացված Մեսիա հայտարարելէ հետո, Հովհաննէսի առաքելությունը վերջացած էր: Արդարև այս դեպքէն քիչ հետո Հերովդէս թագավոր նախ բանտարկեց զայն, զինքը հանդիմանած ըլլալուն համար, իր եղբոր կինը հափշտակելուն առիթով: Ու քիչ վերջն ալ գլխատել տվավ ծանոթ ու եղերական պայմաններու տակ:

Քրիստոս մեծ համարում ունի Հովհաննէսի մասին. առիթով մը զայն որակեց. «Մարգարենն ալ ավելի մեծ մեկը». և նույնացուց զայն Մաղաքիա մարգարէի գրքին վերջին համարներու մեջ նախատեսված Աստուծո պատգամավորին հետ, ու ավելցուց. «Շշմարիտ կըսեմ ձեզի. Կիներէ ծնածներուն մեջ Հովհաննէս Մկրտիչն ալելի մեծ մեկը չէ եղած, բայց երկինքի արքայության մեջ փոքրիկը անկէ մեծ է... Օրենքը և մարգարէները, Հովհաննէսով վերջ գտան. ու եթե ուզեք ընդունի՛լ ան նույնիսկ Եղիան է, որ գալիք էր» (Մատթ. ԺԱ. 11—14):

Հովհաննէս ունեցած է նաև աշակերտներ, ինչպես առ հասարակ կունենային իր ժամանակակից բոլոր մեծ ուսրբիներ և քարոզիչները:

Հովհաննէս հիշված է նաև իր ժամանակակից Հովսէփոս հրեա պատմիչի կողմէ, որ արդարև կհաստատե թե սպանված է Հերովդէսի կողմէ:

Մեր եկեղեցիին մեջ Աստվածածինէն հետո մեծագույն սուրբը կնկատվի Հովհաննէս: Սերտորեն կապված է ան մեր եկեղեցիին և պատմության հետ: Հայաստանի ամբողջական դարձի օրերուն, երբ ս. Գրիգոր Լուսավորիչ ձեռնադրված կվերադառնա Կեսարիայէն, իր հետ կբերե նաև Հովհաննէս Մկրտչի մատուցներէն մաս մը, զոր կդնեն հայ հողի վրա ստեղծված առաջին ծանոթ աղոթավայրին՝ մեջ, Միշ քաղաքի մոտիկ, ուր ապա կկառուցվի նշանավոր ս. Կարապետի վանքը, որ կըլլա մեր եկեղեցիի ամենէն հռչակավոր ուխտավայրը: Նշանավոր էր նաև Կեսարիո ս. Կարապետի վանքը, ուր ևս սուրբին մատուցը կգտնվէր:

Հայ եկեղեցին չորս անգամ տոնախմբություն սահմանած է անոր համար: Առաջինը իր Ծննդյան հիշատակությունն է, Ութօրեքին հաջորդ օրը: Երկրորդը իր գլխատումն է, Զատիկի հաջորդող շաբաթ օրը:

Երրորդը Տոն կաթողիկեի հինգշաբթին, Աթանագիեն եպ.ին հետ, որուն նշխարները ևս բերած էր ս. Գր. Լուսավորիչ Սեբաստիայէն: Իսկ վերջինը՝ վերափոխման երրորդ շաբթվան հինգշաբթի օրը, Հոբի հետ միասին: Իրեն ի պատիվ շատ մը շարականներ ու տաղեր հորինված են մեր մեջ, սրտառուչ են հատկապէս Զորհներքի տաղերը, որոնց մեջ գլխավոր տեղը կզբաւիւնէ Հովհաննէս Մկրտիչը:

Հուլներ վեց անգամ տոն սահմանած են ի պատիվ մեծ Կարապետին, իսկ լատինք՝ երեք: ա) Բուն և մեծագույնը՝ հնվր. Տ: ք) Հղություն Հովհաննէս Եղիսաբէթէն՝ սեպտ. 23: գ) Ծնունդը՝ հնւ. 24: Նույնպէս լատինք: դ) Գլխատումը՝ օգո. 29: Նույնպէս լատինք: ե) Առաջին Գլուտ Նշխարաց իր գլխույն՝ փետր. 24: Նույնպէս լատինք: զ) Երկրորդ Գլուտ Նշխարաց Գլխույն՝ մյս. 25:

Տ. Բերլեհեմի մանուկները

Առաջին անմեղները, որոնք իրենց արյունը թափեցին Քրիստոսի համար: Իրենց տարբերությունը մյուս մարտիրոսներէն այն եղաւ որ նախ անգիտակից էր իրենց արյան հեղուրը, երկրորդ՝ իրենք մեռան Աստուծո Որդին ֆիզիքապէս ապրեցնելու համար, երբ մյուս մարտիրոսները պիտի մեռնէին Քրիստոսն շնորհված կյանքը հավերժացնելու համար:

Հրեաստանի Հերովդէս թագաւորը երբ իմացաւ մոգեղէն, թէ «Հրեից Արքա» մը ծնած է, բնականաբար խռովեցաւ ինք, և ամբողջ Երուսաղէմը իրեն հետ:

Կասկածոտ և արյունաբքու բռնակալը այս լուրը առնելուն՝ արդէն որոշած էր ընկելը. ուստի ըսաւ մոգերուն. «Գացեք և ստուգեք իմացեք նորածին մանկան մասին, և ապա ինձի ալ լուր տվեք որպէսզի ես ալ գամ ու երկրպագեմ անոր»:

Մոգեր, Աստուծո հրամանով չվերադարձան Հերովդէսին, որ հրաման հանեց Բերլեհեմի և շրջակայքի երկու տարեկանէն վար բոլոր փոքրիկները սուրէ անցընել, խորհելով որ անոնց մեջ պիտի մեռնէր նաև «Հրեից թագաւորը»: Քանի՞ մատաղ կյանքեր հնձվեցան այս կոտորածէն՝ Աստուծո միայն գիտելի պիտի մնա: Մեր հա-

վատքով գիտցածը այն է, որ այս փոքրիկները կազմեցին առաջին փառանքը այն ընտրյալներու, որոնք, ըստ Հայտնության գրքի հաղաստումին, իրենց ճակտին վրա ունին Աստուծո Գառնուկին անունը. և իրենք բնարները կզարնեն ու երգեր կերգեն Աստուծո պտոնին առջև...: Ասոնք շարունակ Աստուծո Գառնուկին հետ են. ասոնք ընտրվեցան մարդոց որդիներէն իբրև ԵրեմիԱՅՐԻԲ, ու անոնք մեղք չգործեցին, որովհետև անքիմ էին» (Հայտ. ԺԴ 1—5):

Մեր եկեղեցին հորինած է շարականներու փնջիկ մը ի գովեստ այս անմեղներուն, ուր ըսված է իրենց մասին.

«Բանաւոր գառիկն ի տանէն Եփրատայ,
Որք մատուցան ս. պատարագ ի Հերովդէսէ,

Որպէս գԱթէլ ի Կալեմէ»:

«Ծաղկեցաւ Բերլեհեմ, հեղմամբ արեան
սուրբ տղայոցն.

Բերկրեցաւ և Ռաբէլ անուշահոտ պատարագօք»:

Իսկ «Մանկունք» շարականը պատկանէ է բոլորին:

«Երանելի սուրբ մանկունքն, որպէս քաջ
նահատակք,

Ետուն զանձինս իւրեանց ի մահ,

Փոխանակ Որդուն Աստուծոյ:

Եւ դիակունք սուրբ մանկանց, որպէս
գժաղիկ նունեաց,

Հարեալ ի կարկաւ, և անկեալ ի
ս. Բերլեհեմ:

Եւ հոգիք սուրբ մանկանցն, որպէս զերամս
աղանակաց,


Թոռուցեալք ի յերկինս և դասեալք ընդ
զըարթունս»:


Կկատարենք ասոնց հիշատակը Տոն կաթողիկեի հաջորդող երկուշաբթի օրը, ուրիշ խումբ մը մարտիրոսներու հետ:

Հուլն օրացույցը ասոնց թիվը «չորեքտասան քիւր» կնկատէ և կհիշատակէ դէկտ. 29-ին: Լատինք դէկտ. 28-ին:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 185—150)





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հարուստ և բազմաժանր է ա. Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակը, որը մեծ ազդեցություն է թողել նաև մեր եկեղեցական մատենագրության և հայ մշակույթի զարգացման վրա:

Հայ եկեղեցական թարգմանական գրականության մեջ համեմատաբար ընդարձակ և մեծ թիվ են կազմում ա. Բարսեղ Կեսարացու գործերից և ուղղակի հունարեն բնագրերից կատարված հայերեն թարգմանությունները, բնագրեր, որոնցից «մի մասը ծանոթ չէ հունական մատենագրության մեջ և մի մասն էլ ծանոթ է միայն լատիներեն թարգմանությամբ»⁶³:

Ա. Բարսեղ Կեսարացու աշխատությունները հայերենի են թարգմանվել Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների կողմից:

Այսօր հայ բանասիրության կողմից ընդունված է, որ Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակի մեծ մասի հայերենի վերածումը կատարվել է «թարգմանություններ գալիս են հունարենից, ըստ մեծի մասին լուսկելին դարում մեր մատենագրության, և այլը՝ կրտսերագույնը ժամանակա: ...Կեսարացու Կապարովկիացոց հայրապետին նուիրական և բազմաճյուղի անունն սիրելի և մեծաբեալ էր առ Հայս: Իր ճարտարա-

խօս և իմաստուն երկասիրութեանց ոչ միայն մեծագոյն մաս մը թարգմանուած են ի մեր լեզու, անդատին ի հիմներորդ դարէ... այլ ջերմեռանդն և սրտագրաւ աղօթից շատք՝ անցած են ի կարգս եկեղեցական հասարակաց պաշտամանց»⁶⁴:

«Բարսեղ Կեսարացին հանդիսանում է իր ժամանակի եկեղեցական ականավոր մատենագիրներից մեկը, որի գրական երկերի մի կարևոր մասը թարգմանվել է հայերենի, ինչպես, օրինակ, Վեգորյա ճառերի և պատարագի թարգմանությունները (խոսքը պատարագի առաջին թարգմանության մասին է) անվիճելիորեն Ե դարի թարգմանիչների գործ է համարվում»⁶⁵:

Ա. Բարսեղ Կեսարացու գործերը «հայերենի են թարգմանվել գերազանցապես Ե դարում, մեր դարության արշալույսին»⁶⁶:

Մատենագրական ունեղմնասիրությունների հիման վրա ա. Բարսեղ Կեսարացու գործերի մեծ մասը, այդ թվում՝ «Վեգորեայք»-ը, «Գիրք Հարցողաց»-ը «Պատարագամատուց»-ը, կանոնախմբերը «թարգ-

⁶⁴ Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 328 և 259:

⁶⁵ Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 1845—1846:

⁶⁶ Կ. Մ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեգորեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 26:

*Ծարումովված «Էջմիածին» ամսագրի 1977 թ. № № Ե—Զ-ից:

⁶³ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Բ, Երևան, 1976, էջ 1346:

մանեալ են ի լուսակաճէն ի հայս՝ ի ձեռն ճշարտաբանից թարգմանչաց մերոց»⁶⁷:

Ս. Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանությամբ զբաղվել է ս. Սահակ Պարթևը «իր ձեռքով» և կամ նրա «խորհրդով»՝ ուրիշները⁶⁸:

Կեսարացու գործերի հայերէն թարգմանությունները կատարվել են 406—450 թվականներին:

Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանությամբ զբաղվել է նաև Ե դարի մեր թարգմանիչ վարդապետներից Խոսրովը՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի «զբխալոր աշակերտներից մեկը»⁶⁹, որը ս. Սահակի «խորհրդով» «զկանոնն Զորոհեփցն ի Կեսարիա քաղաքէ, զոր արարեալ է սրբոյն Բարսէի լիթն ամի հայրապետութեան իւրոյ և զՀայրաբնիսն, յերուսաղէմէ Խոսրով եղեր ի Հայս՝ հրամանաւ սրբոյն Սահակայ»⁷⁰:

Ս. Բարսեղ Կեսարացու գործերի թարգմանությամբ զբաղվողների մեջ հիշվում է նաև «Դաւիթ թարգման» Տարոնացին կամ Բագրևանդցին, որը «Ի ծնունդն Փրկչին» ճառը թարգմանել է հայերէնի է դարձում⁷¹: «Դաւիթ» թարգմանիչը զբաղվել է նաև Բարսեղ Կեսարացու հայերէն գործերի թարգմանության մեկնությամբ: Հետագայում Հակոբ Կլայեցի կաթողիկոսն էլ (1268—1286) զբաղվել է Կեսարացու գործերի մեկնությամբ⁷²:

Ս. Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակի հայերէն թարգմանությամբ զբաղվել է նաև Բ դարում Ստեփանոս Սյունեցին (680—735), որը «ի լուսակաճէ ի հայ» է թարգմանել Կեսարացու «Վասն

պահոց» ճառը և «Ճաղագս ձայնից» աշխատությունը⁷³:

«Թվարկված անուններով, հարկավ, չի սահմանափակվում Կեսարացու գործերի թարգմանիչների ցանկը: Այլուր եղած ձեռագրական հավաքածուների ուսումնասիրության կամ նկարագրության ժամանակ, անշուշտ, երևան կգան նոր անուններ ու նոր թարգմանություններ»⁷⁴:

Միայն Երևանում, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում, կան ավելի քան «երկու հարյուր հին ու նոր գրչագիր մատյաններ մեր» Հայկան մատով, հաճախ ամբողջությամբ Կեսարացու գործերի ընդօրինակություններն են՝ կատարված տարբեր դարերում և զանազան գրչությամբ»⁷⁵:

Ս. Բարսեղ Կեսարացու «Վեգորեայք»-ի հայերէն թարգմանությունը

Ս. Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակի մեջ բացառիկ տեղ է գրավում նրա ինը ճառերից բաղկացած **Վեգորեայք-ը**, որը ըստ Ծննդոց գրքի (Ա 1—26) Արարչագործության վեց օրերի պատմության ատվածաբանական, գիտական, փիլիսոփայական ու կրոնական մեկնությունն է՝ քարոզի ձևով:

«Վեգորեայք»-ը գրվել է 370 թվականին, երբ Բարսեղ Կեսարացին պարզ քահանա էր: Կան նաև այլ կարծիքներ ճառի գրության ժամանակի մասին⁷⁶:

Սույն աշխատության մեջ Կեսարացին խոսում է Արարչագործության քրիստոնեական հասկացողության և մեկնության վրա՝ ջախջախիչ քննադատության ենթարկելով տիեզերքի և ստեղծագործության հին, հեթանոսական և մանիքեական բացատրությունը և ցույց տալիս **Արարչագործության ետին՝ Արարիչը**: Կեսարացին պաշտոն գույներով և հմտությամբ նկարում է կարծես իր վարպետ գրչով բնության գեղեցկության երփներանգ պատկերը և բացահայտում տիեզերքի հրաշալիքները՝

⁷³ Այս մասին կան բազում վկայություններ: Տես **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 178—180:

⁷⁴ **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 181:

⁷⁵ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, 1965, հատոր Ա, էջ 1463—1469, «Բարսեղ Կեսարացի», հատոր Բ, 1970, էջ 1246—1247: Նաև **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 55:

⁷⁶ **Վազգեն Հակոբյան**, Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 1, էջ 255: «Կ. Մ. Մուրադյանը ապացուցում է, որ այն գրվել է 378-ին, երբ Կեսարացին իր իսկ վկայությամբ էր «հիւանդ մարմնով և քաղամեղ»:

⁶⁷ Մատենադարան հայկական..., նույնը, էջ 337:

⁶⁸ **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 172:

⁶⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 28: Նաև **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 173:

⁷⁰ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ս. Նշանի վանոց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, էջ 69: **Հ. Թօփեան**, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքի, Վենետիկ, 1962, էջ 340: **Նորայր Լազ. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1966, հատոր Գ, էջ 77: **Հր. Անադյան**, Հայոց անձնանունների քառարան, հատոր Բ, Երևան, 1944, էջ 533: **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 171—172:

⁷¹ Ստեփաննոսի Տարոնեցոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 99: Մատենադարան..., նույնը, էջ 329: **Հ. Ա. Անադյան**, նույնը, էջ 1346: Նաև ուրիշներ: Տես **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 174:

⁷² **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 178:

բնական գիտության և փիլիսոփայության զարմանահրաշ մի ցուցահանդեսի մեջ⁷⁷:

Կեսարացու «Վեցօրեայք»-ը մեծ համբավ է վայելել թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում ու վաղ շրջանից թարգմանվել է մի շարք լեզուների, այդ թվում նաև՝ հայերենի:

Հետագա շրջանում «հունական գրականության մեջ չկա մի այլ գործ, որը իր հետևորդական արվեստի գեղեցկությամբ համեմատվեր «Վեցօրեայք»-ի հետ»⁷⁸:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան «ձեռագրաց Մատենադարանում կան «Վեցօրեայք»-ի բաժանել ձեռագիր, տասնչորսը բուն «Վեցօրեայք», չորսը՝ «Վեցօրեայք»-ի մասին գրված ընդարձակ մեկնություններ, և երեքը՝ համառոտ մեկնություններ, կամ կարելի է կոչել բառարան-մեկնություններ»⁷⁹:

Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ը թարգմանվել է Ե դարի սկզբում հունարենից և դասվում է «մեր մատենագրության սկզբնավորման շրջանի առաջին թարգմանություններում մեջ» և համարվում է այդ շրջանի գրականության «հրաշակերտներեն մին»:

«Վեցօրեայք»-ի հայերեն թարգմանության հարցին է նվիրված Կ. Մ. Մուրադյանի վերոհիշյալ արժեքավոր աշխատության մի ամբողջ գլուխ, էջ 138—204, որտեղ հեղինակը խղճամիտ ու գիտական լուրջ ուսումնասիրության է ենթարկել «Վեցօրեայք»-ի հայերեն թարգմանությունը. «հունարեն բնագրի, հայերեն ձեռագրերի և վրացերեն թարգմանությունների տվյալներով հաստատվում է այդ գործի թարգմանության ժամանակը (Ե դ. առաջին կես), բացահայտվում են թարգմանության բնույթն ու ինքնատիպությունները», «Վեցօրեայք»-ի ազդեցությունն ու «հետքերը հայ մատենագրության մեջ», և «սրբագրվում են բազմաթիվ խաթարված հատվածներ», «Ըստ արժանվույն գնահատելով «Վեցօրեայք»-ի հայերեն թարգմանության մեջ մի շարք հայագետների կատարած տրամադրական աշխատանքները, Մուրադյանն իր հերթին կատարում է բազմաթիվ նոր ճշտումներ՝ հայերեն թարգմանությունը համեմատելով հունական բնագրի, վրացերեն և ռուսերեն թարգմանությունների հետ»: Սույն «ուսումնասիրությունը պետք է դիտվի իբրև Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության հայերեն թարգ-

մանության, հատկապես նրա «Վեցօրեայք» բնական հրատարակության նախապատրաստության հաջող փորձ և հեղինակի կյանքին ու գործին նվիրված անդրանիկ ծավալուն ու արժեքավոր մենագրությունը մեզանում»⁸⁰:

Բարսեղ Կեսարացին «Վեցօրեայք»-ը գրելիս լայն կերպով օգտագործել է Աստվածաշունչը, փիլիսոփայական-գիտական, դավանաբանական գործեր, ճառեր, մեկնություններ, թղթեր, խրատներ, գեղարվեստական բազում գրականություն, «սկսած Հոմերոսի «Իլիական»-ից մինչև Արիստոտելի «Ցաղագս մեկնության և ստորոգութեան» երկը... Նույնի «Ցաղագս աշխարհի» աշխատությունը, բանավոր զրույցներ»⁸¹:

Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ում կան նաև հետաքրքիր պատմա-աշխարհագրական տեղեկություններ Հին Արևելքի մասին, ինչպես նաև գիտական տեղեկություններ ջրագոյացման, գոլորշիացման, բուսական-կենդանական աշխարհի ստեղծման:

Բարսեղ Կեսարացին բնության է առել նաև իրեն հետաքրքրող մի շարք «հոգեբանական առանձին խնդիրներ»⁸²:

Ս. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ը տպագրվել է Վենետիկում 1830 թվականին, «Սրբոյ Բարսղի էպիսկոպոսի Կեսարոյ Կապադովյացոց ճառք վասն վեցօրեայ արարչութեան» վերնագրով, էջ 1—201⁸³:

Հրատարակության «Յառաջաբան»-ում նշվում է, որ «Բարսղի Կեսարեայ Գամբաց վեցօրեայ արարչութեան ճառն... թարգմանեալ են աներկբայ երանաշնորհ նախնեաց մերոց հինգերորդի դարուն, զի գծամանակին ունին զոճ և Ծիրակունին և այլք ի հնոցն բազում ինչ ի ճառից աստի, գրեթե նովին իսկ բառիքն օրինակեն»:

Ս. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» սուրբ արարչութեան» աշխատությունը բաղկանում է ինը ճառերից: Չառկվա օրերին հաճախ մեկ օրում Կեսարացին արտասանել է այդ ճառերից երկուսը, առավոտյան և երեկոյան ժամերգության ընթացքում:

Ճառ առաջին. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր». էջ 1—22, որ խոսվում է արարչագործության առաջին օրվա մասին. «Վերապոք այսուհետև բա-

⁷⁷ Johannes Quasten, Patrology, vol. III, էջ 216—217:

⁷⁸ Նույնը, էջ 257:

⁷⁹ Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 138:

⁸⁰ Վազգեն Հակոբյան, նույնը, էջ 253, 254:

⁸¹ Նույնը, էջ 252:

⁸² Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 76—77, 88:

⁸³ «Հայ գիրքը 1801—1850 թվականներին», Նրեյան, 1967, էջ 167:

նիք և սկզբան արարածոց... բանգի գեղեցիկ է յօրինում կարգին, զի նախ սկիզբըն եղալ լինելոյ արարածոց, զի մի՛ կարծիքէ ոք եթէ առանց սկզբան իցէ աշխարհ» (էջ 3—5):

Ճառ երկրորդ. «Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս և եղև լոյս» (էջ 23—42):

Ճառ երրորդ. «Եւ ասաց Աստուած. Եղիցի հաստատութիւն ի մէջ ջուրցոյ. եւ եղիցի մեկնել ի մէջ ջուրցոյ և ջուրց. Աստուած իրով սքանչելագործ գորութեամբ հաստատեաց կախեաց առանց հնարից զամենայն տարր ըստ կամաց իւրոց, ի տեսիլ և ի զարմանս ամենայն տեսողաց» (էջ 43—65): «Ի մեր բանքս չիք ինչ մտացածին, ստայօղ, վասնզի զԱստուած դնեմք պատճառ ամենայնի» (էջ 52):

Ճառ չորրորդ. «Եւ ասաց Աստուած. Ժողովեացին ջուրք. որք ի ներքոյ երկնից են, ի տեղի մի և երեսացի ցամաքն... Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր և զժողովս ջուրցն կոչեաց՝ ծով» (էջ 66—81):

Ճառ հինգերորդ. «Եւ ասաց Աստուած. Բոխեսցէ երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմս ըստ ազգի իրում և ըստ նմանութեան» (էջ 82—105):

Ճառ վեցերորդ. «Եւ ասաց Աստուած. Եղիցին լուսաւորք ի հաստատութիւն երկնից և մեկնել ի մէջ տուրնջեան և ի մէջ գիշերոյ» (էջ 106—136):

Ճառ եօթներորդ. «Եւ ասաց Աստուած. Հանցեն ջուրքդ գեղունս շնչոց կենդանեաց, ըստ ազգի իրում ի վերայ երկրի» (էջ 137—155):

Ճառ ութերորդ. «Եւ ասաց Աստուած. Հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի, չորքոտանի և զտղունս և զգազանս երկրի, ըստ ազգի» (էջ 156—179):

Ճառ իններորդ. «Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան» (էջ 180—201)⁸⁴:

Ս. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք» ճառերը գրվել են «լուղաց ի շահ օգտութեան» (էջ 18), ունկնդիր «սքանչելի ժողովրդոց» համար, որոնք «սիրով և ախորժեղով լսեկեաց, ընդունին զհասոս բաղքորներս, որ պատմեն վասն զարմանալեաց գործոց Աստուածութեանն» (էջ 154):

«Վեցօրեայք»-ի գրության հիմնական, գործնական նպատակն է եղել «քրիստոնեության տարածումը խթանելու, ուղիղ հավատի երկրպագուների թիվը ստվարացնել, մանավանդ որ պաշտոնական քրիստոնեությունը ընդամենը 60—70 տարվա պատմություն ուներ»⁸⁵:

«Վեցօրեայք»-ի հայերեն թարգմանությունը իր վրա է կրում ոսկեդարյան մեր լեզվի գեղեցկությունն ու լեզվա-ոճական կատարելությունը, վսեմ պարզությունը, «մեր Ե դարու ամենեն փայլուն շրջանին կպատկանի տույն գործը...»: Թարգմանիչը աչքի է ընկնում իր «ազնուական հաշագիտությամբ», բան «հույն լեզվի և բնական գիտությանց» պատրաստվածությամբ⁸⁶:

«Վեցօրեայք»-ի հայերեն թարգմանության որակի մասին խոսելիս նշվում է, որ հայերենը «տեղ-տեղ կմախքե, կբարձրանա, բան զբնագիրն»⁸⁷:

Ս. Բարսեղ Կեսարացու «Պատարագամատոյց»-ի հայերեն թարգմանությունը

Ս. Բարսեղ Կեսարացին հանդիսանում է Կապադովկիայի եկեղեցական երաժշտության և ծիսագիտության մեծ բարեկարգիչը: Հանրաձայնորէ հնուց ի վեր հույն Երրորդը եկեղեցում նրա մոցրած եկեղեցական երգեցողության նոր մեթոդը:

Ս. Բարսեղ Կեսարացին այդ պատճառով համարվում է հունական եկեղեցական երգարվեստի ազգային դպրոցի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը և միաժամանակ արևելյան երգ-երաժշտության լավագույն ալմանիստների բաշտոնյակ մասնագետը:

Ս. Բարսեղ Կեսարացին ունի նաև «Պատարագամատոյց», որը մինչև այժմ գործածվում է բյուզանդական բոլոր եկեղեցիներում, Մեծ պահոց կիրակիներում (բացի Ծաղկազարդի կիրակիից), Ավագ հինգ-շաբթի, Ծննդյան, Զատիկի, Աստվածահայտնության ճրագատույցներում, հունվարի 1-ին, ս. Բարսեղի տոնին: Այլ օրերում բյուզանդական եկեղեցին օգտագործում է ս. Հովհան Ոսկեբերանի համատոտ պատարագը⁸⁸:

Ս. Բարսեղ Կեսարացու «Պատարագամատոյց»-ը, որը ձեռագրերում մեզ հասել է նաև «Ս. Գրիգոր Լուսավորչի պատարագ» անունով, հայերենի է թարգմանվել հայկական Ե դարի սկզբում, ս. Սահակի և ս. Մեսրոպի անմիջական զխալորությամբ և մասնակցությամբ մեր թարգմանիչ վարդապետների:

⁸⁵ Կ. Մ. Մորադյան, նույնը, էջ 82:

⁸⁶ «Բազմավեպ», 1934, էջ 327—331:

⁸⁷ Հ. Արսեն Սոփիասյան, «Բազմավեպ», 1873, էջ 112—116: Նաև Կ. Մ. Մորադյան, նույնը, էջ 7:

⁸⁸ Quaste, նույնը, էջ 226—227:

⁸⁴ «Աստուածաշունչ Մատնան, Հին և Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեանց նախեաց մերոց», Կ. Պոլիս, 1895, էջ 1—2:

Լորյունը «Վարք Մաշտոցի» իր աշխատության մեջ վկայում է, որ Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությանը գրողնթաց (406—420 թվականներին) և Սահակն ու Բարսեղը թարգմանել են ոչ միայն **գհարապետաց սրբոց զճշմարիտ գիմաստութիւն**, այդ թվում՝ եկեղեցական ճանոր, և Գրոց մեկնություններ, դավանաբանական գրվածքներ, այլ նաև **գեկեղեցական գրոց գումարութիւն**, այսինքն, եկեղեցական ժամերգության և ծիսակատարության ընթացքում գործածված զրբեր, ինչպիսիք էին՝ **Ժամագիրքը**, **Մաշտոցը**, **Տոնականը** (Տոնացույց) և, մասնավոր, **Պատարագամատույցը**⁹³:

Եկեղեցական պաշտամունք ստեղծելու համար կարևոր նշանակություն ունեին վերոհիշյալ եկեղեցական գրքերի հայերեն թարգմանությունները:

Ե դարի մեր թարգմանական գրականությունը այնքան ընդարձակ է եղել և կատարվել այնպիսի քմախնդիր ընտրությամբ, որ ընդհանուր եկեղեցական գրականության շատ կարևոր երկեր մնացել են միայն հին հայերեն թարգմանությամբ:

«Մեր հին թարգմանական գրականությունը շատ հարուստ և բազմակողմանի է եղել, ժամանակի եկեղեցական գրական տեսակետներից... և գործնական ձեռնարկներից ոչ մի նշանավոր երկ չեն թողել, որ չթարգմանեն Ե դարում»⁹⁴:

«Եկեղեցական պաշտամանց մկիրված գրքեր»-ի մեջ կարևոր տեղ էր գրավում **Պատարագամատույցը**, որով կատարվում էր սուրբ պատարագի արարողությունը:

Ընդհանուր եկեղեցական գրականության մեջ «անդստին յառաջին ատուրց հաստատութեան քրիստոնէական կրօնից»⁹⁵ հիշվում են «Առաքելոց Պատարագ»-ներ, այդ թվում՝ Է. Հակոբոս Տյառնեղբոր, Բ. Թադեոսի, Բարթողիմեոսի, ինչպես նաև I—V դարերում եկեղեցական նշանավոր հայերի «Պատարագ»-ներ՝ «Իգնատիոսի աստուածագգեաց Անտիոքի Հայրապետի», «սրբոյն Աթանասի», «սրբոյն Բարսղի Կեսարացոյ», «սրբոյն Յովհաննոս Ոսկեբերանի», «սրբոյն Գրիգորի Աստուածաբանի», «սրբոյն Կիրիլի Աղեքսանդրացոյ», Հայոց Հայրապետներից՝ «սրբոյն Գրիգորի Լուսաւորչի», «սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի» Պատարագները⁹⁶:

⁹³ Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 88—89:

⁹⁴ Նույնը, էջ 93:

⁹⁵ Մատենադարան..., նույնը, էջ 248:

⁹⁶ Նույնը, էջ 245—268:

Սույն Պատարագամատույցները «իրենց կազմութեան վեհութեամբն, իմաստից վեհութեամբն, գաղափարաց ճոխութեամբն գլուխ-գործոցներ կրնան համարուիլ, որչափ ալ իրարու հետ ըստ բովանդակութեան տերտ կապ ունենալով տեղ տեղ կրկնութեան երևոյթ ունենան»⁹⁷:

«Ս. Գրոց թարգմանութենէն ետքը եկեղեցական բարեկարգութիւն և հասարակաց հոգևոր պաշտամանց անհրաժեշտ հարկ և կարգադրութիւնն, պետք էր որ գրաւեր սրբոց Թարգմանչաց աստուածասէր և աստուածախոհ միտքն ու սիրտը»⁹⁸: Այդ «անհրաժեշտության» հետևանքը եղավ նաև Պատարագամատույց-ի թարգմանությունը Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների կողմից, որոնք այդ գործում «երևեցուցին իրենց պաշտաման և կոչման էական գործոյն մէջ ամէն եռանդ, սիրտ և աշխատանք»⁹⁹:

Ե դարում մեր թարգմանիչ վարդապետները իրենց աչքի առաջ ունենալով եկեղեցական նշանավոր հայրապետների և Բ. Գրիգոր Լուսավորչին վերագրվող վերոհիշյալ «Պատարագամատույց»-ները, «ի կարգադրութեան եկեղեցական գրոց ազգիս՝ այս սուրբ և նախանձեղի ժառանգութիւնն ընդունելով ի հօրէն աստուածաշնորհ լուսաւորութեան, միայն քանի մի աղօթք աւելցնելով և լեզուի ու բացատրութեանց միջոցով և ոչ անչափ բազմաթիւ փոփոխութիւններով պատուիրեցին գործածելի ընել գայն յեկեղեցոյ»¹⁰⁰:

Ս. Բարսեղ Կեսարացոյ «Պատարագամատույց»-ի հայերեն թարգմանության լեզուն «մեր Ե դարում առաջին կեսին անընդուն լեզուն է»¹⁰¹:

Ե դարում վերջնականապես կազմավորվում է հայոց պատարագը՝ Է. Սահակի և Բ. Թադեոսի խմբագրությամբ՝ հիմք ունենալով Է. Բարսեղ Հայրապետի պատարագը¹⁰²:

«Հնագոյն պատարագները գոռ պատեաբազմոյ մկարագիր մ'ունէին, ի մասնաւորի

⁹³ Հայր Յովսէփ վրդ. Գաթըրճեան, Սրբազան Պատարագամատույցը Հայոց, Վիեննա, 1897, էջ 385:

⁹⁴ Մատենադարան..., նույնը, էջ 245:

⁹⁵ Նույնը:

⁹⁶ Նույնը, էջ 253—254:

⁹⁷ Հայր Յովսէփ վրդ. Գաթըրճեան, նույնը, «Բարսեղեան պատարագին աղբիրները», «Հայ Բարսեղեան պատարագին օրհնակները» և «Հնություն հայ (առաջին) թարգմանութեան», էջ 81—89:

⁹⁸ «Էջմիածին» արքով, 1971, էջ 11:

Բարսեղինը՝ որն արիտական ըմբռնմանց դեմ գեներ մըն էր»⁹⁹:

Ս. Բարսեղ Կեսարացու «Պատարագամատուց»-ը ունեցել է երկու հայերեն թարգմանություն. առաջին՝ «Հին թարգմանություն, Ե դար»¹⁰⁰, և երկրորդը՝ «Նորագույն թարգմանություն»¹⁰¹ կամ Ժ դար, հունարեն բնագրի բյուզանդական խմբագրությունից», «Համբարձագույն և անկէ կանոնի Գրիգոր Մագիստրոսի օրերէն առաջ»: Հին թարգմանությունը համարվում է «Կապադովկեան Բարսեղի պատարագ», իսկ նորը՝ «Բիզանդեան Բարսեղի»¹⁰²:

Ս. Բարսեղ Կեսարացու վանական կանոնադրությունների կամ կանոնների հայերեն թարգմանությունները

Ս. Բարսեղ Կեսարացին համարվում է արևելյան, օրթոդոքս վանական միաբանական կյանքի մեծ օրենսդիր և կանոնագիր:

Նրա ջանքերով ու ղեկավարությամբ և մանավանդ նրա սահմանած վանական կանոններով հին «ճգնափորական միայնակեցական»-ը կամ «հնազույն ճգնափորական (միայնափորական) կենցաղը»¹⁰³, քայքայվեց և ճգնարանները դարձան քրիստոնեական եկեղեցու հոգևոր, կրթական, դաստիարակչական ու լուսավորական հաստատություններ, իսկ վանականությունը՝ եկեղեցու հոգևոր և կարգապահ գիւղիկություն¹⁰⁴:

Վանական կյանքի կազմակերպման և ղեկավարության համար ս. Բարսեղ Հայրապետը գրել է նախ 13 ճառերից բաղկացած կանոնների կամ բարոյա-խրատական հրահանգ-ուսուցումների մի ժողովածու, որը բաղկանում է 80 հոդվածներից: Կեսարացու սույն կանոնախմբը համարվում է հնազույն և կարևորագույն օրենսգիրքը վանական միաբանական-համայնական կյանքի:

Ս. Բարսեղ Կեսարացին այնուհետև նույն նպատակի համար կազմել է վանական երկու այլ կանոնախմբեր կամ կանոնադրություններ, որոնցից առաջինը բաղկանում է 55, իսկ երկրորդը՝ 313 կանոն-

ներից: Սույն կանոններում սահմանել են վանական-միաբանական կյանքի ամենօրյա աշխատանքային ռեժիմն ու աղոթքի ժամերը, ինչպես նաև վանականների պարտականությունները և նրանց կենցաղի նորմերը: Ս. Բարսեղ Կեսարացու սույն կանոնախմբերը հանդիսանում են օրթոդոքս վանական միաբանությունների գործունեության ու կյանքի հաստատուն և վավերական օրենսգրքերը: Այդ կանոնախմբերը մեծ ազդեցություն են գործել և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի վանական կյանքի կազմակերպման և ղեկավարության բնագավառում:

«Բարսեղ Կեսարացին, որպես եկեղեցական նշանավոր գործիչ, բնականաբար, պիտի մտահոգվեր եկեղեցական անհրաժեշտ պարտականություններ սահմանող կանոնների ստեղծմամբ... Կեսարացու կանոնները գրվում էին ոչ միայն Կապադովկիայի, Պոնտոսի, Հայքի, այլ Դ դարի ողջ Արևելքի նշանավոր եկեղեցիների ընձեռամբությամբ վրա, որոնց ներքին անց ու դարձին և իրավական նորմերին լավատեղյակ էր հեղինակը»¹⁰⁵:

Ս. Բարսեղ Կեսարացու սույն կանոնախմբերը հայերենի են թարգմանվել Ե դարում «ի լուսնականէն... ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց»¹⁰⁶, հավանաբար ս. Սահակի և ս. Մեսրոպի աշակերտ Խոսրով թարգմանչի ձեռքով, որին «կրօնապետի դարձնալ Զորոհնեաց կանոնին թարգմանութիւնն ի լուսնէ»¹⁰⁷:

«Նորորակ հաղորդումներով» հաստատվում է, որ «Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների թվում V դարում հիշվում է մի Խոսրով, որն իր ուսուցիչների և աշակերտ-ընկերների հետ գրադվել է թարգմանությամբ և համաձայն № 3260 գրչագրի վերաբերյալ տեղեկության, ընդօրինակել ու, թերևս, թարգմանել է Բարսեղ Կեսարացու նշված երկու կանոնախմբերը»¹⁰⁸:

Ս. Բարսեղ Կեսարացու կանոնների քրեական-համեմատական ու գիտական հրատարակությունը կատարել է քաջահմուտ, մեծախառնակ մասնագետ-կանոնագետ Վազգեն Հակոբյանը¹⁰⁹:

¹⁰¹ Կ. Մ. Մորադյան, նույնը, էջ 94:

¹⁰⁵ Մատենադարան..., նույնը, էջ 337:

¹⁰⁶ Լ. Գ. Զարպհանազյան, Հայկական հին դրություններ, Վենետիկ, 1897, էջ 295: Նաև Գաբրիել վարդապետ Յովսեփյան, Խոսրով թարգմանիչ (Է դար), Վաղարշապատ, 1899, էջ 28:

¹⁰⁷ Կ. Մ. Մորադյան, նույնը, էջ 173:

¹⁰⁸ «Կանոնագիրք հայոց», Ա, Երևան, 1964, էջ 329—362:

⁹⁹ Հայր Յովսեփ վրդ. Գաբրիելյան, նույնը, էջ 501:

¹⁰⁰ Նույնը, էջ 120—159:

¹⁰¹ Նույնը, էջ 171, 172, 180—216: Նաև Լ. Ս. Անաչյան, նույնը, էջ 1375—1376:

¹⁰² Հուսիկ եպ. (Տեր-Մովսիսյան), Անապատականներ և վանականություն, Վաղարշապատ, 1906, էջ 44: Արշակ Ապոլանյան, Պատմություն հայ Կեսարի, Ա. հատոր, Գաբրիել, 1937, էջ 262:

¹⁰³ «Էջմիածին» ամսագիր, 1977, № 7, էջ 30—31:

կանոնների բնագրից առաջ կա կանոնների ցանկ՝ հետևյալ վերնագրով. «Կանոնը Բաղի առ Ամփիդոքոս» (Գլուխք ԾԱ (51), էջ 331—334), ապա բուն կանոնների բնագիրը՝ հետևյալ վերնագրով. «Գիր կանոնական մեծի և գիտնաորի եպիսկոպոսապետի Բարսեղի առ սուրբն Ամփիդոքոս յիկոնացոց եպիսկոպոս Բանս ԾԱ, էջ 334—362¹⁰⁹»:

Վազգեն Հակոբյանի «Կանոնագիրք հայոց» Բ հատորում (Երևան, 1971, էջ 101—180) հրատարակվել է նաև «Բաղի գիր կանոնական վասն պէս պէս և բիրապատիկ ախտից Գլուխք ՄՀԲ (272)¹¹⁰»:

Ս. Բարսեղ Կեսարացու կանոնների հետ սերտորեն առնչվում են նաև նրա «Հարցողաց գիրք» աշխատությունը, որը բաղկանում է երեք մասից. Ա և Բ մասերը՝ Հառաչաբան, Գ մասը՝ Հարց ու պատասխան: Սույն աշխատությունը ձեռագրերում կոչվում է նաև «Հարցումն ճգնաորացն, պատասխանի սրբոյն Բարսեղի»՝ բաղկացած 11 վանական կանոններից և 361 ամենատարբեր բնագավառների պատկանող հարց ու պատասխաններից, որոնք «իրենց արժարժած խնդիրների բազմազանությամբ և խորությամբ արժանի են հատուկ քննության»¹¹¹:

Ս. Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գիրք»-ը, որը անտիպ է, ըստ մեր ձեռագրական հիշատակարանների վկայության կոչվում է նաև «Կանոնական Սահմանադրություն»՝ գրված «ուղղութեանց յուսումն խրատու կարգաորոշեան վանականաց, յարմարեալս և շարակարգեալ ի հոգիս պայծառ և ի տիեզերալոյս վարդապետէ և ի մեծի եպիսկոպոսէն Կեսարու Կապաղովկացոց, սրբոյն Բարսեղի, որ կոչի Հարցողաց»¹¹²:

Ս. Բարսեղ Կեսարացին թե՛ իր տպագիր և թե՛ իր անտիպ կանոններում ամենայն մանրամասնությամբ և կետ առ կետ, «կանոն առ կանոն» սահմանում է վանականության անելիքները, գծում նրանց կյանքի

ու գործունեության շրջանակները, որպեսզի նրանց վատ արարքների պատճառով «չհայհոյվի» վանականության սուրբ ու վսեմ առաքելությունը, որովհետև, ըստ նրա բնութագրման, վանականը «միջնորդ է ընդ Աստուած և ընդ մարդիկ, կապող և արձակող լերկինս և լերկրի», հետևաբար և պետք է լինի «հրեշտակ ի լերկրի» և համապազ գտնվի իր կոչման և հոգևոր ծառայության վայելույշ բարձրության վրա և օրինակ՝ հավատացյալների և հասարակության: «Աշխարհիկ գործերով զբաղվող» անարժան վանականին Կեսարացին համարում է «հեթանոս»:

Ս. Բարսեղ Կեսարացու կանոնները ունեն դաստիարակչական մեծ նշանակություն: Դրանք չափազանց հետաքրքիր են և այժմեական հնչեղություն ունեն նաև մեր օրերում: Նա հատուկ կանոններ է սահմանել վանականների առանձնական կյանքի և գործունեության, հասարակության մեջ նրանց վարք ու բարքի, կենցաղի, նիստ ու կացի, վարվեցողության, «նշության ակնկալությամբ» կամ շահադիտությամբ իրենց հոգևոր կոչումը չարաշահողների մասին: Վանական կյանքի բարոյական կանոնները խախտողների համար ս. Բարսեղ Կեսարացին սահմանել է նույնիսկ համապատասխան խիստ պատժամիջոցներ, դաստիարակչական նպատակներով:

Կանոններում «պատժի գաղափարը կապվում է ապաշխարության կրոնական գաղափարի հետ»¹¹³:

Ս. Բարսեղ Կեսարացու կանոնների մեջ մեծ թիվ են կազմում նաև այն կանոնները, որոնք ուղղված են հասարակության մեջ գոյություն ունեցող վատ արարքների, անբարոյականության, ընտանեկան անհավատարմության, հեթանոսական մտածողության և հին հավատի մնացուկների, քրեական և ընկերային բազմապիսի չարիքների դատապարտության համար, կանոններ նաև՝ նվիրված ընտանեկան և ամուսնական կյանքի սրբությանը, ամուսինների փոխադարձ սիրո և քրիստոնեական համակեցությանը, ժամանակի բարոյական, մարդասիրական բարձր ըմբռնումների ջատագովությանն ու պաշտպանությանը, մարդկային բարի և արդար փոխհարաբերություններին:

Սույն կանոններում ևս ս. Բարսեղ Կեսարացին հասարակության մեջ գոյություն ունեցող յուրաքանչյուր, նույնիսկ «աննշան հանցանքի» համար պատիժներ է սահմա-

¹⁰⁹ Տես նաև նույն աշխատության «Ծանոթագրություններ» բաժինը՝ «Բարսեղ Կեսարացու կանոնախումբ», էջ 613—624: Տես նաև Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 1870—1875:

¹¹⁰ Տես նաև նույն աշխատության «Ծանոթագրություններ» բաժինը՝ «Բարսեղ Կեսարացուն վերագրված կանոնախումբ», էջ 348—377: Տես նաև «Հայոց եկեղեցական իրավունք»-ը, Ա. գիրք, Ներսես վրդ. Մելիք-Թամզյան, Ծուշի, 1903, «Բարսեղ Մեծի կանոնները», էջ 286—349:

¹¹¹ Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 70: Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 1861—1863:

¹¹² Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 72:

¹¹³ Վազգեն Հակոբյան, նույնը, հատոր Ա, էջ XII:

նել, «խրատի, դատապարտման և սպաշխարության միջոցով կանխելու համար մարդկանց հասակեցության կանոնների հնարավոր խախտումները»¹¹⁴:

Ս. Բարսեղ Կեսարացու սահմանած բոլոր կանոններում հանդես է գալիս եկեղեցու բարի հովվապետի, ճշմարիտ հոգևոր հոր և դաստիարակի, մեծ մարդասերի քրիստոնեական վերաբերմունքը. ազնիվ սիրուն ու անշահախնդրությունը: Նա երբեք չի կորցնում իր հույսն ու հավատը մարդու բարոյական կատարելության և հոգևոր վերածննդյան մասին:

Ս. Բարսեղ Կեսարացու կանոնները միաժամանակ որպես վկայություններ կարևոր, պատմական փաստաթղթեր են ժամանակի եկեղեցական, ընկերային հասարակական կյանքի պատմության ուսումնասիրության համար:

Ս. Բարսեղ Կեսարացու ճառերի հայերեն թարգմանությունները

Ս. Բարսեղ Կեսարացու մատենագրական փաստակի գերակշռող մասը կազմում են նրա ճառերն ու ներքողները:

Այդ աշխատությունների մեջ հա հանդես է գալիս, նրա վաստակին քաջամանր մասնագետների վկայությամբ, որպես եկեղեցական քննադատության ամենապայծառ ներկայացուցիչը, որը կարողանում է կրոնական հոետորական արվեստի հնարքները միացնել մտածման պարզության և արտահայտչականության հստակության հետ:

Ս. Բարսեղը համարվում է, ըստ ս. Գրիգոր Նագիազանցու, «Աստվածաշունչի մեկնիչներուն մեջ ամենաստաշինը, իսկ Երազմուր զայն կնկատե քոյր ժամանակներուն ամենեկն ճորք քարոզողը»¹¹⁵:

Ամեն քանից առաջ Բարսեղը հանդիսանում է «հոգիների բժիշկ, որը չի ցանկանում հաճելի լինել իր ունկնդիրներին, այլ ազդել նրանց գիտակցության և խղճին»¹¹⁶:

Ս. Բարսեղ Կեսարացու ճառերը նույնպես մեզ հասել են «թարգմանութեամբ հայկենաց ըստ մեծի մասին յոսկելէն դարու մեր մատենագրութեան»¹¹⁷:

Վերոհիշյալ աշխատության մեջ ս. Բարսեղ Կեսարացու ճառերի և ներքողների հայերեն թարգմանությունների թիվը հաս-

նում է ամօրի քան 50-ի¹¹⁸: Բայց պարզ է, որ այդ թիվով չի սահմանափակվում Բարսեղ Կեսարացու ճառերի հայերեն թարգմանությունների քանակը¹¹⁹:

Ս. Բարսեղ Կեսարացու ճառերն ունեն դավանաբանական, քարոզչական, վարքագրական, բարոյագիտական, կանոնագիտական, ծիսագիտական, մանկավարժական հարուստ բովանդակություն:

Ս. Բարսեղ Կեսարացու «տակավին և դարում հայերենի թարգմանված հարուստ մատենագրական ժառանգությունը այսօր էլ քննելի է ամենից առաջ մարդու և մարդկային փոխհարաբերությունների շուրջ ունեցած հարցադրումների բնույթով և կարեվորությամբ: Այս առումով հարկավ, անքապստ նյութ է ամբարված նրա ճառերում»¹²⁰:

Ս. Բարսեղ Կեսարացու ճառերից մի քանիսը միայն հրատարակվել են: Նրա ճառերի գերակշռող մասը մնում է անտիպ և նեխուբար «հայագիտական լայն շրջանների համար գրեթե անձանդ»:

Այդ իսկ մտահոգությամբ ս. Բարսեղ Կեսարացու ձեռագիր ճառերի ուսումնասիրության ուղղությամբ չափազանց կարևոր և շնորհակալ աշխատանք է կատարել Կիմ Մ. Մուրադյանը, որը 1973-ին «Վշմիածին» ամսագրում առաջինը հանդես եկավ «Ս. Բարսեղ Կեսարացու ճառեր» բովանդակից գիտական լուրջ ու ամբողջական ուսումնասիրությամբ¹²¹ և աշնուհետև ս. Բարսեղի կյանքին և գործունեությանը, մատենագրական փաստակին նվիրված արժեքավոր մենագրությամբ, որտեղ առանձին ուսումնասիրության և քննության առարկա են դարձել ս. Բարսեղ Կեսարացու ճառերը. «Հայագիտությունը... չի խնդրադարձել Կեսարացու ճառերին» թե՛ ձեռագիր քննության և թե՛ հրապարակման առումով: Մինչդեռ Մաշտոցի անվան Մատենադարանում և այլուր եղած գրչագիր հավաքածուներում Կեսարացու ճառերի հին ու նոր թարգմանություն-ըմոյօրինակություններ կան, որոնցից քաղված բազմաթիվ հատված-վկայակոչումներ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում սույն հաղորդմամբ»¹²²:

Արդարև, չափազանց մեծ և կարևոր է ս. Բարսեղ Կեսարացու ճառերի նշանակու-

¹¹⁸ Նույնը, էջ 325—344:

¹¹⁹ Տես նաև Լ. Ս. Անասյան, նույնը, էջ 1348—1399: Մատենադարանի Ձեռագրաց ցուցակ, Ա. հատոր, էջ 1463—1469, Բ. հատոր, էջ 1246—1247:

¹²⁰ Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 59:

¹²¹ «Վշմիածին» ամսագիր, 1973, № Ը, էջ 20—25:

¹²² Նույնը, էջ 20: Տես նաև Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 58—93:

¹¹⁴ Նույնը: Տես նաև Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 94—100:

¹¹⁵ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Սուրբ և սոցը, Երուսաղեմ, 1939, էջ 69:

¹¹⁶ Quasten, նույնը, էջ 224:

¹¹⁷ Մատենադարան..., նույնը, էջ 326:

թյունը թե՛ կրոնական-քարոյական և թե՛ ընկերային-հասարակական իմաստով:

Ս. Բարսեղ Կեսարացու **դավանաբանական** բնույթի ճառերի մեջ կարևոր են հետևյալները:

1. Յաղագս սուրբ Երրորդութեան, 2. Ի ծնունդն Փրկչին, 3. Ի սկզբանէ էր Բանն, 4. Յաղագս սրբոյ Հոգւոյն, 5. Ապողիմարի հերձուածողի վիճաբանութիւն և տեսութիւն ի Մարմնաւորութեան Փրկչին, կամ հակաճառութիւն ընդդէմ Եւնոմիոսի, 6. Ի տեսութիւն յաղագս հաւատոյ, 7. Յաղագս գոհութեան, 8. Խօսք յորդորականք ի մկրտութիւն, 9. Չէ՛ պատճառ չարեաց Աստուած, 10. Ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի ի տաճարն քառասնօրեայ, 11. Ի պահսն քառասնէրորդս, 12. ՉՏօն յայտնութեանն և ծննդեան միաւորէ, 13. Օրհնութիւն ջրոյ (տպագրված)¹²³, 14. Ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդւոյն Աստուծոյ քան զՀօրն, 15. Աղօթք ի վերայ ապաշխարողաց, 16. Մեկնութիւն յաղագս եկեղեցւոյ, 17. Բարոզ Ջատկաց, 18. Աղօթք ի սուրբ Պենտեկոստէն, 19. Աղօթք ի մեծի տօնին Վարդավառի¹²⁴, 20. Աղօթք արարչագործ Աստուած, 21. Վասն պահոց, 22. Յաղագս ապաշխարութեան, 23. Յաղագս վարուց, և բազում այլ ճառեր:

Ս. Բարսեղ Կեսարացին գրել է նաև **վարքագրական** բնույթի բազում ճառեր: Այդ պատճառով կոչվել է «Մեծն ամենայն հայրապետաց և վկայաւորն Բասիլիոս»: Սույն ճառերում հանուն իրենց քրիստոնէական հավատի «նահատակների անօրինակ քաջությունների, գրկանքների, ճշմարիտ հավատասիրության նրատիարակչական ուսուցողական նշանակությունը լավագույնս բնութագրված է»¹²⁵:

Կեսարացու վարքագրական ճառերից են. 1. Ի վկայն Յուդիտայ, 2. Ի սուրբ նահատակն Բրիստոսի Ստեփաննոս, 3. Ի սուրբ քառասուն վկայն, 4. Ի Գորդիոս վկայն, 5. Ի տօնիս ս. Հովսիսիմեանց:

Վանականությանն ուղղած Կեսարացու խրատա-դաստիարակչական և մանկավարժական բնույթի ճառերից են. 1. Խրատ յաղագս կրօնաւորաց, 2. Գիրք հարցողաց, կամ յաղագս կրօնաւորաց, 3. Հրամանք կրօնաւորականք, 4. Հարցումն ճգնաւորացըն, 5. Գիր կանոնական, յաղագս կրօնաւորաց առ միաբանակեացս և որ առանձինն ճգնին, և այլն:

¹²³ «Ճառոց գիրք Հայց. եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1872, էջ 14—18:

¹²⁴ Նույնը, էջ 549—556: Տպագրված է Եղիշէ պատմիչի (Ե դար) անունով:

¹²⁵ Կ. Մ. Մուրադյան, նույնը, էջ 91:

Ս. Բարսեղ Կեսարացին հանգամանորեն զբաղվել է նաև իր ժամանակի հասարակական կյանքում գոյություն ունեցող վատ ու դատապարտելի արարքների համարձակ և սպառնիչ քննադատությամբ և մերկացումներով, նույնպես դաստիարակչական մտահոգություններով: Նա վրդովմունքով է խոսում հասարակության մեջ գոյություն ունեցող «ինքնամոռաց հեշտասիրության և արքեցության» մասին. «ըմբել սկսանին և ըմբեն անասնոց օրինակաւ», նույնիսկ պատանհներ և աղջիկներ, որոնց վրա «արտասուել էր պարտք, հառաչել ի վերայ եղելոց», որովհետև հասարակական կյանքում «երգ պոռնկութեան հնչեցեալ, ի բաց հանին զսաղմոսս և զօրհնութիւն»: Կեսարացին սուր քննադատության է ենթարկում նաև ամուսնական կյանքի վատ կողմերը, նույնիսկ աղջիկների «միջաւմուսնական փոխհարաբերությունների ազատությունը»:

Ս. Բարսեղ Կեսարացին որպէս ճշմարիտ քրիստոնյա ու մարդասեր տառապում է հասարակության մեջ արմատացած ապականության համար, հավատում է մարդու աստվածային կոչման սրբությանը, նրա աստվածատուր իմացականության վեհությանը և փրկարար գործությանը և ցանկանում է կործանման եզրին հասած մեղավոր մարդուն տեսնել միշտ բարձր, առաքինի, վեհ, որպէս Աստծու պատկերով ստեղծված էակ և արարչագործության թագն ու պսակը:

Այս ոգով առաջնորդված նա դատաւարակչական բնույթի ճառեր է գրել այդ հասարակական չարիքների դէմ պայքարելու համար, որոնցով նա իր սրտի խորունկ վրդովմունքն է արտահայտում և սրտագին ու հայրական կոչեր է ուղղում մարդկանց, դիմում նրանց խղճին, ազատ կամքին, բարոյական ըմբռնումներին, ողջախոհ բանականությանը, «դառնալ ի լոյս աստուածգիտութեան» և ապրել աստվածահաճո, սուրբ ու առաքինի կյանքով. «Հաւ է անուն բարի, քան զփարթամութիւն բազում: Աղքատ էս ալժմ, ալլ ազատ... ունիս ձեռն և արունետ, վարձեա, սպասաւոր լեր, եթէ ամօթ է մուրանալն, վատթարագոյն է փոխ առնելն» (Տոկոսով փոխ վերցնելը):

Ս. Բարսեղ Կեսարացին իր ժամանակի ինքնակաշիւն փոխհարաբերություններում արմատացած ամոթալի արարքները, բարոյական անկումները, հասարակական վատ արարքները թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մեջ, արարքներ, «որք գրգռեին ի վառաշոտութիւն», ժանտախտ է համարում և անխնայ պայքարի կոչ է անում: Ատելություն չարի դէմ և խրախուսանք՝ բարին գործելու:

Մեծ է ա. Բարսեղ Կեսարացու «ճառերի պարունակած վկայությունների պատմական նշանակությունը»:

Ա. Բարսեղ Կեսարացու՝ հասարակության ծոցում արմատացած վատ գործերը մերկացնող ճառերի մեջ կարևոր են՝ 1. Առ բնչեղս, 2. Զվաշխողաց, 3. Զքարկացողաց, 4. Զմախանաց, 5. Զարբեցողաց, 6. Յաղագրս և ողորմության տեմակաց և այլ ճառերը:

Ճառերում կա նաև գովքը ազնիվ աշխատանքի, աշխատասիրության, «սեփական աշխատանքով ապրելը, ըստ Կեսարացու, մարդկային արժանապատվության գրավականն է»:

«Եթե մրջին կարե ոչ մութանալով և ոչ վարձու առնելով կերակրի, և մեղուք գերշխարս իրոց կերակրոյն թագաւորաց ևս շնորհեն, որոց ոչ ձեռս և արուեստս բնութիւնս էտ, իսկ դիւրանմար կենդանի մարդ մի լամենեցունց հնարից ոչ գտանես առ ի կենցաղոյս սնունդ»¹²⁶:

Մեծ է ա. Բարսեղ Կեսարացու ճառերի դաստիարակչական, քարոչական նշանակությունը նաև մեր օրերում: Դրանք ունեն ժամանակի հնչեղություն մեր եկեղեցական, մեր ընտանեկան, մեր հասարակական կյանքում:

Ա. Բարսեղ Կեսարացին իր մատենագրական ողջ ժառանգությամբ մեր ժամանակակիցն է, մեր ուսուցիչն ու մեր առաջնորդը: Այդ ոգով է, որ մեր նախնիք հալերենի են թարգմանել նրա մատենագրական ժառանգության մեծ մասը: «Նա Հոմերոսն է, Պլատոնն է, Արիստոտելն է, որոսմեն ինչ գիտի», վկայում էր նրա մասին Կ. Պոլսում իր ուսուցիչ, հոեւոր և փիլիսոփա Լիբիանոսը:

Ա. Բարսեղ Կեսարացու հայերենի թարգմանված բոլոր գործերը չեն, որ տպագրվել են:

Կեսարացու տպագրված հայերեն ամբողջական գործերի մասին, ինչպիսիք են «Վեցօրեալը»-ը, «Պատարագամատոյց»-ը և կանոնները, խոսվել է սույն հոդվածում:

Ինչպես ա. Աթանասի, ա. Կյուրեղ Ալեքսանդրացու, այնպես էլ ա. Բարսեղի գործերի հայերեն թարգմանության հոտովաձեկան տպագրությամբ կան հետևյալները.

Ա. Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Արեքսանդրեայ Հակաճառութիւն, ա. Էջմիածին, 1908:

1. Յաղագս սրբոյ Հոգւոյն, 2. Եթե բնութեամբ Աստուած Որդին, 3. Ի ներքողեւնէն որ յերանելին Յողիտա (էջ 21—22,

143), 4. Առ գրպարտիչս զմեզ երիս ասել Աստուածս (էջ 88), 5. Ի զեմովմայ (էջ 159—180), 6. Եթե բնութեամբ Աստուած է Որդին (էջ 191—193), 7. Առ ի Անտիոքացիս թղթոյն (էջ 254—256):

Բ. Կնիք հաւատոյ, ա. Էջմիածին, 1914:

1. Յաղագս ա. Երրորդութեան (էջ 78—83), 2. Ապողինարի վիճաբանութիւն (էջ 84—98), 3. Յաղագս զոհութեան (էջ 259—260), 4. Ո՛չ է պատճառ չարեաց Աստուած (էջ 287), 5. Բարի է, որ դիւրանմանութեան են վարձք (էջ 287), 6. Յաղագս Հոգւոյն և Նորին և վկայսն Յողիտեայ (էջ 349):

Ըստ մեր ձեռագիր հիշատակարանների և պատմական աղբյուրների վկայության, Կեսարացին «պայծառ ու տիեզերագույն վարդապետ» է, «չորթնալոյս հայրապետ, յոյժ գիտնական, համեմարել և համեղաբան... հրեղէն լեզու խօսէր ի քերան հորա»:

Նախախնամությունը ա. Պողոս առաքյալի նման ա. Բարսեղ Կեսարացու փխրուն և տկար մարմնի մեջ բոցավառել էր հավատքի և քարեպաշտության կրակը, քրիստոնեական առաքելության և քարոզչության սրբազան կոչումն ու շնորհը, բանականության պայծառ, աստվածատուր ջանք, մարդասիրության և ազնվության բոցավառ սիրտը:


Որքա՛ն ճիշտ ու գեղեցիկ է ասել ա. Գրիգոր Նագիսագանցին, երբ 370 թվականին Կեսարացու Կապադովկիայի Աթոռի վրա միտրոպոլիտ ընտրության ստիթով որոշ հակառակորդներ և հերետիկոսներ նախանձից որդված դեմ էին այդ ընտրությանը. «Բարսեղը, տկար է, այո՛, բայց մենք հոգևոր առաջնորդ և կրոնի ուսուցիչ ենք ընտրում և ոչ թե՛ ըմբշամարտ»:

Ա. Բարսեղ Կեսարացին Դ դարից սկսած եղել է հայ եկեղեցու սիրած մեծ և վաստակաշատ սուրբ հայրապետներից մեկը իր մաքրակենցաղ վարք ու քարքով, իր գրական րազմամանր և հարուստ վաստակով: Ա. Բարսեղը իր եկեղեցական գործունեությամբ էլ սերտորեն կապված է մեր եկեղեցու և հայ մշակույթի պատմության հետ:

«Ամենայն մարդ պատուելին զսուրբն Բասիլիոս». Փափատոս Բուզանդի այս վկայությունը ճիշտ է եղել անցյալում մեր եկեղեցական տարեգրության մեջ, ճիշտ և ընդունելի է նաև այսօր:

Ինչ որ ա. Բարսեղ Կեսարացին ստեղծել է, այն Ավետարանի ոգեշունչ երգն է, քրիստոնեական կրոնի սրբազան հիմքը: Իսկ նրա ապրած կյանքը՝ Ավետարանի կենդանի քարոզը:

126 Կ. Մ. Մորադյան, Գույն, էջ 65:



ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ

Սպ. Մելիքյանի այս հոդվածը, որ գրված է 1915-ին, հավանաբար Եկմայանի մահվան տասնամյակի առթիվ, պետք է որ լույս տեսած լիներ 1984 թվականին Սաթ. Մելիքյանի և երաժշտագետ Ալ. Թադևոսյանի ջանքերով՝ հրապարակված «Սպիրիդոն Մելիքյան, հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր» միահատորյակի մեջ: Սակայն դա տեղի չի ունեցել տեխնիկական պատճառներով: Բացատրելով դա և հոդվածի արտագրության մի օրինակը սիրահոծար կերպով տրամադրելով մեզ, Ալ. Թադևոսյանը ժամանակին նկատել էր, որ համեմատված է բնագրի հետ: Այդուա-

մենայնիվ, մենք ևս համեմատեցինք այն հեղինակի ինքնագրի հետ* և, կատարելով վերջին ուղղումներն ու սրբագրությունները, մաս լեզվաբանական կարգի թեթև շտկումներ, պատրաստեցինք հրատարակության, տվյալ դեպքում՝ որոշ կրճատումներով: Հոդվածում կան մի քանի ոչ ճիշտ տեսակետներ, որոնց քննադատությունը վերապահում ենք մեկ այլ առիթի:

Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ

* ՉԱԳԱԹ, Սպ. Մելիքյանի ֆոնդ, նյութ № 20 (հեղինակի սևագիրն է, որ հիմք կարող էր ծառայած լինել մաս զեկուցման համար):

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԴԵՐԸ ԵՎ ՏԵՂԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հանգուցյալ Եկմայանը յուր երաժշտական երկերով պատկանում է հոգևոր երաժիշտների խմբին: Ինչպես հայտնի է, մորա գլուխ-գործոցը Պատարագն է. թողել է մաս մի երկու տասնյակ ներդաշնակած ազգային երգեր, որոնք ընդհանուր առմամբ աղոթքի բնավորություն ունեն և այնքան էլ չեն տարբերվում եկեղեցականից:

Մի պատահականություն չէ, որ մեր անդրանիկ ազատ արվեստագետը իր ուժերը հոգևոր երաժշտությանն է նվիրում. ինչպես և պատահականություն չէ մորա առհասարակ երաժշտական ասպարեզ մտնելը, երաժշտական գործունեություն ունենալը:

Հիշեցեք, որ Եկմայանի ծննդավայրը, մանկության օրրանը (ծնվել է 1856 թվականին) Վաղարշապատն է. այն գյուղը, որտեղ ա. Էջմիածինն ու Մայր Աթոնն է գտնվում: Հազար ու մի ջանքերով ա. Էջմիածինը՝ յուր ձեռնադրության հանդեսներով, ա. մեռուցի օրհնության խորհրդավոր և միատիկ ծիսակատարություններով, անվերջ ու անհամար եկեղեցական և ազգային շլացուցիչ թափոներով, և որ գլխավորն է, այդ բոլորին ընկերակցող խորհրդավոր ծամերգություններով ու հանդիսավոր պատարագներով՝ դարերից ի վեր հայ ժողովրդի կրոնական-ծիսական, եկեղեցական-երաժշտական երևակայության միակ

աղբյուրն է եղել և խոր ու անցնելի ազդեցություն թողել յուր շրջապատի վրա: Ծառ բնական է, որ Վաղարշապատը, որի բնակիչների ներկայությամբ էին այդ բույր հոգևոր հանդեսները կատարվում, ամսփառվել և ամենից շատ պիտի համակվեր Էջմիածնի կրոնական ոգով և զգացմունքներով, քան մի ուրիշ վայր: Եվ իրոք, նույնիսկ այժմ, երբ գյուղի երիտասարդ սերունդի մեջ որոշ հեղաշրջում է կատարվել և որոշ ստանություն սպրդել դեպի այն ամենը, ինչ եկեղեցական է, սակայն հենց նոցա մեծամասնությունը, էլ չեմ ասում հասակավորները, լավ ծանոթ են բոլոր եկեղեցական եղանակներին և ծիսակատարություններին ու ժամանակի ընթացքում հակառակ իրենց ցանկությանը՝ ընտելացել են այդ բոլորին: Դեռ ավելին կասեմ. 4—5 տարեկան երեխաները, կարող է դիտող աչքը այժմ էլ նկատել, հաճախ սիրում են թելը փայտի կամ քարի կտորին կապած բուրվառ ձգել և հետը աղելուս երգել: Իսկ էիչ ավելի հասակավորները՝ 7—10 տարեկանները, սիրում են լրագրական թերթերից եպիսկոպոսական խոյր ու զգեստներ շինել և զգեստավորվելով պատարագ, ձեռնադրություն անել, երգելով եկեղեցում սովորած զանազան եկեղեցական մոտիվներ՝ թեկուզ կցկտուր քառերով:

Այսպիսի մի միջավայրում, այսպիսի մի մանկություն պիտի ունեցած լինի նաև Եկմայանը, ուստի և նորա մանուկ երևակայությունը հենց առաջին տարիներից իսկ միայն և միայն եկեղեցական շրջաններում պիտի զարգանար և առանձին սեր պիտի ցույց տար դեպի եկեղեցին: Եվ իրոք, դեռ ինը տարեկան հասակում, երբ գրել-կարդալ նոր էր սովորել, դառնում է փոխառաց՝ գյուղի եկեղեցում, սովորում է ուշի ուշով հասակավոր տիրացուներից՝ նոցա ասած հոգևոր երգերն ու շարականները և ինքը ևս ձայնակցում նոցա՝ իր մեղմ ու բնորոշ ձայնով: Եկմայանի պատանեկությունն ու երիտասարդությունը նույնպիսի և ավելի քան կրոնական պայմաններում են անցել, ինչպես մանկականը:

Այդ կրոնական-ազգային ոգին սակայն դեռ քաղական չէր նորան գեղարվեստի՝ հատկապես երաժշտության ասպարեզը մղելու համար: Այդ ոգով շատերն էին կրթվել և սա էլ նրանց պես մի հոգևոր ասպարեզ պիտի ընտրեր, ինչպես և արդեն սկսել էր, եթե չլիներ մի ուրիշ հանգամանք, որը նրան հանեց յուր միջավայրից և մի ուրիշ, ավելի կենսունակ ասպարեզի վրա դրավ: Եթե չլիներ ժամանակակից մի նոր, կենդանի շարժում, որի առաջին մարտիկների շարքն անցավ դեռ իբրև ժառանգ

զավորաց դպրոցի սան, որի շարունակողն ու հաստատունն հիմքերի վրա դնողն եղավ հետագա տարիներում և հենց այդ շարժման շնորհիվ պատմական անուն վատում ենք իր համար հայ կյանքում, հայ երաժշտական պատմության մեջ:

Այդ հանգամանքը, այդ շարժումը հայ երաժշտության վերածնությունն էր: Թող ներվի, եթե մի քիչ ավելի կանգ պիտի առնեմ այդ պատմական երևույթի պարզաբանության համար, որովհետև առհասարակ հայ երաժշտության մշակված և ոչ էլ անմշակ պատմություն գոյություն չունի, բեկ երաժշտություն միշտ էլ ունեցել ենք:

Անկախելի չանցավ 1818 թվի [հուլիսի եկեղեցական] ժողովը իր որոշումով՝ Պոլսի պատրիարքի և հայ ժողովրդի աչքից. նոքա ևս վաղուց զգացել էին հայ եկեղեցական երաժշտության մեջ տիրող կարգերի անհավասանելի վիճակը և կկամենային օր առաջ դարձան տանել այդ ցավին: Նորա տեսան, թե հույները ինչ ձևով սկսեցին և նույն շավղով էլ իրենք շարժվեցին:

Գտնվեց նախ մի Բաբա Համբարձում (1768—1839) տիրացու-երաժիշտ մականունով, ժամանակակիցը վերոհիշյալ հունական նոր սիստեմի առաջ գալուն, որ մտածեց հայոց համար էլ նոր նոտաներ հնարել: Սա վերցրեց հայոց մեջ գործածական հին խազերի ձևերից նույնպես 20 հատ և հնարեց «Հայկական» կոչված ձայնագրության սիստեմը: Պատրիարքարանը գործի գլուխ կանգնեց և ուսումնական խորհրդի՝ դեկավարությանը՝ խանձնեց 1864-ին եկեղեցական եղանակների ընտրություններ անելը և ձայնագրել տալը: Սակայն այդ խորհրդի գործունեությունը ոչ մի արդյունք չուվավ և այդ դրությունը տևեց մինչև 1874 թիվը, երբ մի հզոր ձեռք եկավ վերջ տալու տիրացուների սանձարձակությանը և հայ երաժշտության վերածնության սկիզբ դնելու: Այդ հզոր ձեռքը Գևորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր, որի ցույց տված խնամքն ու գորգությունը եկեղեցական երաժշտության անադարտ պահպանության համար եզակի երևույթ է խաչատուր Տարունեցուց հետո հայկական պատմության մեջ:

Մտն կես դար մտքեր զբաղեցնող եկեղեցական երաժշտության կանոնավորության խնդիրը Պոլսից անցնում է ս. Էջմիածին Գևորգ Դ-ի հետ, ուր և շնորհիվ նույն Գևորգ Դ-ի անկում կամքի, վերջնական լուծումն է ստանում: Մեծագործ կաթողիկոսի առաջին գործն է լինում կանչել տալ Պոլսից հայտնի ձայնագրագետ Նիկ. Թաշճյանին, հայկական ձայնագրության արվեստը ուսանալերի մեջ տարա-

ծելու և եկեղեցական գրքեր ձայնագրելու [համար]: Նոր էր նոտայի գաղափարը, նոր էր «Հայկական ձայնագրություն» կոչված արվեստը, ուստի և կարճ միջոցում բոլոր թեմերից էլ շտապում են նորա մոտ՝ այդ նոր արվեստը սովորելու:

Ամենատառչին աշակերտները ժառանգավորաց դպրոցի հասակավոր սաներն են լինում, որոնց թվում և Մակար Եկմալյանը, որը յուր երաժշտական ընդունակությամբ շատ շուտով կենտրոնացրեց յուր վրա թե՛ երաժշտասեր Հայրապետի, թե՛ ուսուցչի ուշադրությունը, ուստի շուտով դարձավ Թաշնյանի ամենագլխավոր աշխատակիցը: Ոգևորության շրջան էր: Կրոնական-ազգային ոգով կրթված Եկմալյանի համար մի ասպարեզ էր բացվել, որի մասին առաջ էր էլ կարող երևակայել: Գտնվել էր գործունեության այն ուղին, որով ընթանալու համար էին միայն կարծես տրված նորան այնպիսի բնատուր ձիրք ու շնորհք, որոնք ապարդյուն փոխի անցնեին մի ուրիշ ասպարեզում: Մի ուղի, որով ընթանալով, նա միևնույն ժամանակ չափի դավաճաններ ժառանգավորաց դպրոցից յուր ժառանգած՝ կյանքում գործելու սկզբունքներին. աղ, ընդհակառակը, այդ սկզբունքներով ափսի դեկլավարվել իր ասպագա գործունեության ժամանակ: Եվ նա նետվեց իր բոլոր ուժերով այդ ասպարեզը. տարիներ շարունակ թուղթ ու մատիտը ձեռքին յուր վեհափառի կամ ուսուցչի պատվերներն էր կատարում, մեղվի ժրջանությամբ՝ Ծարականի և Պատարագի թե՛ ձայնագրելու և թե՛ տպագրելու գործը:

1874 և 1875 թվականներին Ծարականն ու Պատարագը տպված էր. դարագլուխ կազմող այդ երկերով նոքա հալ երաժշտության վերածնության առաջին և հիմնական քայլերն արին:

Եկմալյանը ավելի խոշոր դեր ուներ կատարելու հալ երաժշտության վերածնության շեմքին, քան մինչև այժմ արածներն էին: Այդ վերածնության դեռ սաղմնային շրջանումն ենք հանդիպում նաև բազմաձայն երաժշտության գաղափարի սերմերին, որոնք միայն Եկմալյանի ձեռքով պիտի բողբոջեին և պտուղ տալին:

1877—78 թթ. այս նոր թարգմանիչը, այս նոր Տարոնեցին պանդխտության ցուպը ձեռքին հալ արվեստի վերածնության ծառավով բռնված մեկնում է Պետերբուրգ՝ կայսերական երաժշտանոցում հալ արվեստի բարգավաճման և վերակենդանացման աղբյուրը որոնելու: Մոտ տասր տարի տեղվեց նորա հոգեկան տառապանքների և ուրանումների այս ուսման շրջանը:

Պատկերացրեք Եկմալյանին՝ արդեն մոտ

25 տարեկան երիտասարդ, կոնսերվատորիայի շեմքին կանգնած: Պատկերացրեք այդ 25-ամյա երիտասարդին դաշնամուրի առաջ, որը թերևս կյանքում առաջին անգամն էր տեսնում, յուր ոսկրացած մատներով առաջին ակորդը խփելիս: Պատկերացրեք, թե ինչ ճիգ պիտի թափեր դիտմանների հետ հաշտվելու համար, ինչ դժվարություն պիտի ներկայացներ նորա համար մոդուլափոխը և ինչ անհասանելի ըմբռնողություն՝ կոնտրապունկտն ու պոլիֆոնիան, քանի որ այս բոլորը ոչ թե իբրև մի չոր մաթեմատիկա պիտի սովորեր ու իմանար, այլև պիտի նոցա գեղեցկությունը զգար, ըմբռներ և այդ ոգով ինքն էլ աշխատեր ստեղծագործել, և այն ժամանակ կոխաք, թե ինչ նուրբ լսողություն, ինչ էներգիա և ինչ երաժշտական ընդունակություն էր հարկավոր, երաժշտական մի բարձրագույն դպրոց ավարտելու համար: Այո՛, նրա երաժշտական պատրաստությունը երկարաձիգ տարիների հազեկան տանջանքների արդյունքն էր. տանջանք, որը Եկմալյանին հասարակ մահկանացուների շարքից հանելով, հալ կյանքում ամենատառչնակարգ գործիչների շարքը դասեց, իբրև բազմաձայն երաժշտության տարածողի, իբրև վերածնության շրջանում երաժշտական նոր գաղափարների, նոր ոսկորներների ներմուծողի և գործնականապես այդ գաղափարները իրագործողի:

1888-ին ավարտելով կոնսերվատորիան Ռիմսկի-Կորսակովի անմիջական հսկողության տակ, միառժամանակ էլի մնում է այնտեղ՝ յուր սկսած աշխատանքները վերագնելու նպատակով, մինչև 1891 թվականը, երբ Ներսիսյան դպրոցից ուսուցչության հրավեր ստանալով գալիս է Թիֆլիս:

Հասել էր ժամանակը յուր ամբան տարիների քրտնաթոր աշխատանքի արգասիքը ցույց տալու համար: Եկել էր վերանորոգչական գործունեությունը սկսելու: Նա այդ ուղղությամբ վաղուց էր սկսել աշխատել: Դեռ ուսանողության վեցին տարիներին նոռա սկսած երաժշտական աշխատությունների գլխավոր թեման այս էր, թե ինչպես պետք է հալ եկեղեցական եղանակներով բազմաձայն դարձնել: Այնպես որ, երբ Ներսիսյանում եղեցողության ուսուցիչ դարձավ, նա առդեն ռավականին աստուափա կտորներ ուներ, և նույնիսկ մի երևու խոր Պատարագի «Փառք քեզ».

«Մատին Տերունական», «Տէր ողորմես» և «Քրիստոս պատարագեալ» լիորձի համար իր ուսանողության վեցին տարիներում Էջմիածին այցելած ժամանակը տպել էր տվել հայկական նոտաներով երաժշտական, ո-

բզու տեսակետից գեղեցիկ ամփոփումն է ստանում:

Այսպիսի մի բնական, արվեստականությունից զուրկ, հույսակապ երկ կարող է պատիվ բերել ամեն մի ազգի, սակայն փառք ու պատիվ է բերում նաև այն անձնավորությունը, որը իր անունը կապում է այդպիսի մի նշանավոր, հազարավոր տարիներից ի վեր ժողովրդի զգացմունքներով սրբազործված մի երկի հետ:

Եկմայլանի աչքից չլրիպեց Պատարագի սքանչելի հորինվածքը: Նա զգում էր, որ այդտեղ է հայ ժողովրդի ամենաքնքուշ կրոնական զգացմունքների հանգույցը: Եվ մտքի մի խիզախ թռիչքով որոշեց այդ երկի հետ կապել իր անունը, ժողովրդի սրբունին ամենից մոտիկ այդ երկով տարածել յուր նոր երաժշտական սկզբունքները և գաղափարները:

Այդ որոշումով առաջին և ճակատագրական քայլն արավ. սակայն դա դեռ սկիզբն էր երկունքի: Պետք է նկատել, որ մեր եկեղեցական երաժշտության մեջ ոչինչ այնքան աղավաղումների չի ենթարկվել, որքան Պատարագը, թերևս հենց ամենից շատ ժողովրդականություն վայելելու պատճառով: Հենց միայն հայկական նոտաներով էջմիածնում տպված Պատարագի երկրորդ տպագրության մեջ չորս տեսակ ամբողջական պատարագ կգտնենք: Պատարագի Բ մասը նույնիսկ հինգ տեսակ, իսկ Գ մասի «Ամեն. Հայր Սուրբ»-երն ու «Տէր ողորմես»-ները տասնյակներով կարելի է հաշվել: Բացի այդ, կար էջմիածնի կամ ռուսահայոց վարիանտը, որը թե՛ Թիֆլիսում և թե՛ գավառներում, թեև ամբողջապես գրի չառնվեցավ, սակայն ավանդաբար գործածության մեջ էր և մասամբ միայն վերջը, 1875 թվականին, գրի էր առնվել տ. Եզնիկ քն. Երզնկյանի և Կարա-Մուրգայի ձեռքով:

Որեմն Եկմայլանը նախ՝ իբրև բանասեր-երաժիշտ պիտի մոտենար այդ պատարագներին, խիստ քննադատության պիտի ենթարկեր այդ վարիանտները՝ գեղեցիկը տգեղից, նախնականը նորից զատելու համար: Պիտի աշխատեր Պատարագի՝ մեր վերը հիշած սահմանները, որոնք ժամանակի ընթացքում կորչելու վրա էին, նորից գտնել և ամբողջացնել, վերականգնելով յուրաքանչյուր մասը յուր ոճով: Պիտի մաքրեր եղանակները ավելորդ տիրացուական գեղգեղանքներից և անցիկ ձայներից: Հնարավորության չափով, օգտվելով յուրաքանչյուր մասի ոճից, որոշ ձայնական ելևէջքի փոփոխություններ պիտի մտցներ մայր եղանակների մեջ՝ մոնոտոնությունից և ձանձրալիությունից ազատելու համար:

Եվ վերջապես, ուրիշ, նյութական և ֆրագիրովկայի միջոցով, որոնք մեր ասիական, մանավանդ տիրացուների բերանում գտնվող, միաձայն երաժշտության մեջ համարյա թե գոյություն չունեն, հետաքրքրություն պիտի մտցներ այդ եղանակների մեջ՝ ներկա երաժշտական հասկացողությանց համեմատ:

Մեզ մոտ դեռ մինչև այժմ էլ տարածված կարծիք է, որ Եկմայլանի գործը միայն այն է եղել, որ վերցրել է եղած Պատարագի պատրաստի եղանակները և նրանց տակ մյուս ձայները շարել: Ոչ, այդ համեմատաբար ավելի հեշտ կլիներ, քան նույն քանը եղանակների ընտրության և վերամշակության հետ ի միասին: Այդ վերամշակության գործը, որով Եկմայլանը սկիզբ է դրել հայ եկեղեցական երաժշտությունը որոշ ռեֆորմի ենթարկելու գաղափարին, ավելի քան ժամանակ և աշխատանք էր պահանջում, քան մի մարդու ֆիզիկական ուժերը կներեն: Սակայն Եկմայլանը այդ խնդիրը, եթե ոչ բոլորովին թերություններից զերծ, գոնե շատ դեպքերում մեծ մասամբ հաջող կերպով է լուծում՝ շնորհիվ յուր բարեխիղճ վերաբերմունքի և ֆանատիկ աշխատասիրության: Բավական է մի փոքրիկ համեմատություն Եկմայլանի Պատարագի և էջմիածնում հայկական նոտաներով տպագրված պատարագների ու Կարա-Մուրգայի՝ իբրև ռուսահայ եղանակներից օգտվողի, Պատարագի, որպեսզի զգանք, թե Եկմայլանը ինչպես է Պատարագի վերամշակության գործը տարել:

Նախ նկատենք, որ Եկմայլանը ստիպված է եղել երկու պատարագ գրել. մեկը՝ նման էջմիածնում տպված պոլսական վարիանտին և մյուսը՝ նման ռուսահայոց մեջ գործածական էջմիածնական վարիանտին: Այդ երկու վարիանտների գլխավոր տարբերությունը այն է, որ մինչդեռ Պոլսի վարիանտում Պատարագի Բ մասում «Հոգի Աստուծոյ»-ն, Գ մասում «Հայր մեր»-ն ու ամբողջ Դ մասը բոլորովին տարբեր ոճ ունեն, քան մնացածը, և խանգարում են Պատարագի ամբողջությանը, էջմիածնի վարիանտում այդ նույն երգերն ու ամբողջ Դ մասը «Սուրբ-սուրբ»-ի ոճով են հորինված, որով մի անքակտելի միասնություն, մոտածված ծրագրի և գեղարվեստական ամբողջություն է մտնում Պատարագի մեջ:

Իսկ այս հանգամանքից բխում է և այն եզրակացությունը, որ էջմիածնի վարիանտը ավելի հին է և նախնականին մոտիկ, քան Պոլսինը: Որովհետև պետք է ենթադրել, որ մեզ մոտ ևս, ինչպես նաև բոլոր քրիստոնյաների մեջ, սկզբնական Պատարագը շատ պարզ է եղել և ներկայացրել

է միայն հացի և գինու սրբագործությունը և հավատացյալներին բաշխելու արարողությունը, այսինքն՝ պիտի պարունակեր իր մեջ այժմյան Պատարագի երկրորդ և չորրորդ մասերը, որոնք մի ամբողջություն ներկայացնելով, նույն ոճով էլ պիտի որ երգվեին, ինչպես որ Էջմիածնի վարիանտըն է ապացուցում: Իսկ Պոլսի վարիանտը իր աղավաղումներով, անշուշտ, սկսել է այն ժամանակից առաջ գալ, երբ նախնական Պատարագի մեջ ներթելով մտել է Գլխնդվածքների մասը, երբ այդ նույն խրկիչ դրվածքները սկզբում միայն «Հայր մեր»-ի, իսկ հետո կամաց-կամաց նաև ուրիշ հոգեվոր երգերի միջոցով սկսեցին մեծ տեղ գրավել և բաժանելով սկզբնական Պատարագի մասերը իրարից, պատճառ դարձան նոցա սկզբնական միության աղյուսակայուն: Այն աստիճան, որ հետագայում վերջին մասը բոլորովին փոխեց յուր ոճը և ոչ մի անընդունելի չպահեց ոչ կենդանի Պատարագի հետ և ոչ էլ նրա այն մասերի հետ, որոնք ոճի [ստացիայի] խախտումներն առաջ բերին. «Հոգի Աստուծոյ»-ն փոխեց յուր եղանակը, տերունական աղոթքը՝ «Հայր մեր»-ը, փոխեց յուր սկզբնական վեհ, «Սուրբ-սուրբ»-ի ոճով կազմած, երկնային ձայներից հյուսած եղանակը և Պոլսի տիրացուների բերնում նույնիսկ այլանդակություն հասավ: Ուստի և շատ բնական է, որ Եկմալյանը, ավելի մեծ արժեք և կարևորություն է տվել Էջմիածնի Պատարագին (հետևաբար և այն ներդաշնակել է թե՛ արական և թե՛ բառաձայն յատր խմբի համար), բան պոլսականին, որը սակայն բոլորովին աչքաթող չի արել և դաշնակել է արական բառաձայն խմբի համար: Այնուհետև, թե՛ առաջին և թե՛ երկրորդ Պատարագներում մոնոտոն և ձանձրալի եղանակների մեջ որոշ ձայնական՝ էլեմենտներ փոփոխություններ է մտցրել հետաքրքրական դարձնելու նպատակով, միանգամայն դուրս չգալով ունի սահմաններից: Այսպես՝ «Քրիստոս ի մեջ մեր»-ի եղանակում նույն մոտիվը վեց անգամ կրկնվում է. Եկմալյանը, սակայն, «Սուրբ ողջունի հրաման տուա», «սւերն լընդհանուրս սփոնցա» և «արդ պաշտօնայք բարձեալ զձայն» խոսքերի եղանակը փոխում է, բարձրացնում է, բայց այնպես, որ եղանակը շահում է և ոչ թե կորցնում: Նույնպես բարձրացել է եղանակը. «Սուրբ-սուրբ»-ում՝ «Օրհնութիւն» և «գալոցդ ես անուամբ Տեառն», «Յամենայնի»-ում՝ «աղաչեմք գրեզ Տեր», «Որդի Աստուծոյ»-ում՝ «Հեղմամբ արեան քո սուրբ» և «Հոգի Աստուծոյ»-ում՝ «Հեղմամբ արեան սորա» [հատվածներում], նույնպես հետաքրքրական դարձնելու նպատակով:

Եկմալյանի քննադատներից Կոմիտաս վարդապետը այս Բ մասի բարձրացրած, մեր հիշատակած տեղերի մոտիվները համարում է եղանակի ոգուն հակառակ՝ հիմնդրելով քառյակների հաջորդականության և կազմության վրա: Սակայն մենք նույնիսկ առանց գիտական փաստերի դիմելու կարող ենք ասել, որ ամենևին հակառակ չէ եղանակի ոգուն, որովհետև նույն ոճով գրած Դ մասում Պատարագի մեջ մի բանի անգամ նույն մոտիվը կա: Եկմալյանը գիտակցելով ոճի նույնությունը, այնուհետև օգտվելով, գործածել է այդ մոտիվը բավականին հաջող կերպով նաև Բ մասում՝ մի քանի անգամ:

Ապա՝ «Միայն սուրբ»-ի ստյոգների վերջին կտորները, չափավոր «Ամեն. Հայր Սուրբ»-ի ստյոգները, ինչպես և Գձ «Տեր ողորմեա»-ն նույնպես բարեփոխությունների է ենթարկել:

Վերջապես երրորդ՝ եղանակները մաքրել է ավելորդ անցիկ ձայներից և տիրացուական գեղեցիկներից և նուսանափրովկայի ու ֆրագիրովկայի միջոցով երաժշտական հետաքրքրություն մտցրել դրանց մեջ: Եվ այդ տեսակետներից չենք գտնի իրոք ամբողջ Պատարագի մեջ գուցե և մեկ տակտ, որ վերանորոգչի ձեռքը կպած չլինի և այս կամ այն բարեփոխությունը արած չլինի:

Այսպիսի մի բանափրակական և գեղարվեստական աշխատանքի բովից անցնելուց հետո միայն Պատարագը յուր կորցրած նախկին փայլն ստացավ և խոսքը գունավորումներով, ունկնդիրների հիացմունքը շարժեց:

Պատարագը այսպիսի մի վերամշակության ենթարկելուց հետո հետադառն Եկմալյանը արդեն կարող էր յուր գրած բազմաձայն երաժշտության արվեստի պատվաստմանը անցնել:

Առաջին դժվարությունը, որ պիտի նա իսկույն նկատեր, հայկական եղանակները եվրոպական մածոր և միևնուր զամմանների հետ հաշտեցնելու խնդիրն էր: Հայկական եղանակները իրենց կազմությամբ և առանձնահատկություններով շատ քրտնաթոր աշխատանք և ուժերի լարումն պիտի պահանջեին Եկմալյանից՝ բազմաձայնի կադրապարին ենթարկելու համար: Մի դժվարություն, որը նա միայն տասնյակ տարիների անդուլ աշխատանքի միջոցով կարողացավ հաղթահարել: Այդ դեռ բոլորը չէր: Կար և մի ուրիշ մեծ հարց. ի՞նչ ոճով պետք է դաշնակեր Պատարագը:

Նա անշուշտ ուսումնասիրել էր եկեղեցական երաժշտության մեջ գոյություն ունեցող ոճերը. լավ գիտակ էր Բախի պոլիֆոնիային, Հենդելի, Բեթհովենի հոմոֆոնիային: Սակայն նա շատ շուտով զգաց, որ ոչ

Բայի՛ր՝ յուր կրոնական գալարումները արտահայտող ֆուգաներով, և ոչ էլ Հենդայն ու Բեթհովենը վեհություն և զգացմունքների բազմազանություն արտահայտող մուդուլասիոններով, անհնար է պարփակելը՝ ավելի քան պարզ, իդիլ զգացմունքներով հորինված, փոքրիկ օրհներգներից կազմված մի Պատարագի մեջ: Ուստի և որոշեց շատ շուտով վերջին դարերի ոճերը հանգիստ թողնել և որոնել իր Պատարագի համար ընդհանուր եկեղեցական երաժշտության մեջ այն շրջանը, որտեղ եղանակները նույնպիսի պարզություն և գույտ կրոնական մեղմ ոգի ունենային, ինչպես մերն է:


Եկմայլանի վերամշակած ու դաշնակած Պատարագը դեռ առաջին օրերից իսկ մեծ ժողովրդականություն սկսեց վայելել, իբրև գեղարվեստական մի հսկայական երկ՝ ժողովրդականացնելով իր հետ նաև բազմաձայն երաժշտության գաղափարը:

Պատարագի ներդաշնակությամբ էլ, կարելի է ասել, վերջանում է նրա երաժշտական գործունեությունը, որովհետև հետագա՝ սինչև հիվանդությունը եղած ընդամենը մի քանի տարիների գործերը ավելի պատահական բնավորություն ունեն և միայն կարճեք դպրոցական հանդեսները մի քիչ ավելի հետաքրքիր դարձնելու ցանկությամբ են ստաջ եկել: Նա չթողեց ինքնությունը ստեղծագործական աչքի ընկնող երկեր:

Սակայն հենց միայն այդ Պատարագով էլ Եկմայլանը յուր միսիան ամբողջովին կատարել է: Այն պարտավորությունները, որ նրա վրա դրել էր հայ երաժշտության վերածնությունը, նա ավելի քան փառավոր կերպով իրագործեց, ստեղծելով իր Պատարագով բազմաձայն երաժշտության շուրջը այնպիսի մի հմայք, որից դժվար թե հայ ժողովուրդը նույնիսկ ձախող պայմաններում ձեռք քաշել ցանկանա:

1905-ի մարտի 6-ին նա չկար այլևս: Մոտ երեք տարի տառապելով անագորույն հիվանդության ճանկերի մեջ, մեռավ նա ամենքից մոռացված, ամենքից թողված և հարգողների մի փոքրիկ խմբակի ուղեկցությամբ գնաց հավիտյան հանգչելու Խոջեվանքի գերեզմանատանը: Մինչև այժմ նրա վրա նույնիսկ մի հասարակ քար չի գցած և գուցե շուտով նրա աճյունի դամբարանն էլ կկորչի անհայտության մեջ: Սակայն նրա Պատարագը, նրա «Հայր մեր»-ը այնպիսի կոթողներ են նրա համար, որոնք դարեր շարունակ պիտի կենդանի պահեն նրա հիշատակը մեր կյանքի մեջ և վկայեն, որ նա եղավ նախ հայ երաժշտության վերածնության հիմնադիրներից միը, երբ հոգևոր երգերն էին ձայնագրում, և ապա՝ նույն շարժման միակ շարունակողն ու հաստատուն հիմքերը դնողը, երբ յուր վերամշակած բազմաձայն Պատարագը ստեղծագործեց և ասպարեզ բերեց:





«ԷԶՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԿՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Անժամանակ կյանքից հեռացած ակամախոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը հանրաժանոր է որպես բազմաթիվ քար ստեղծագործող վարպետ, հեղինակ մի շարք արժեքավոր երկերի, որոնցով հարստացավ սովետահայ ճարտարապետությունը: Նա հայտնի է նաև իր արժեքավոր ներդրումներով և Էջմիածնի Մայր Աթոռի վերաշինական գործերում: Բայց բնորոշ գիտեն այն մասին, որ միևնույն ժամանակ Ռաֆայել Իսրայելյանը հայ ժողովրդի բազմադարյան ճարտարապետական հարուստ ավանդույթների լավագույն գիտակներից էր: Տարիներ շարունակ իր չափազանց արգասավոր ճարտարապետական գործունեությանը զուգընթաց նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հայ ժողովրդի ճարտարապետական գանձերի պահպանության և ուսումնասիրության նկատմամբ, ջերմնանդորեն մասնակցել այդ ուղղությամբ տարվող բազմաթիվ միջոցառումներին, կատարել մեծ թվով նկարներ ու գծագրեր, նույնիսկ զբաղվել գիտական առանձին հարցերի ուսումնասիրությամբ: Այդ տեսակետից հատկապես բեղմնավոր են եղել Հայաստանի Հոշարձանների պահպանության կոմիտեում նրա աշխատած տարիները (1942—1944 թթ.), երբ հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու հիշյալ հիմնարկում գտնվող հարուստ նյութերին, այցելել բազմաթիվ հուշարձաններ, մասնակցել գիտական արշավախմբերի աշխատանքներին և այլն:

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, երբ նա վերստին նվիրվեց ճարտարապետական ստեղծագործությանը, ամենևին չպակասեցին նրա հետաքրքրությունները և մեր ժողովրդի նվիրական գանձերի նկատմամբ: Իր բազմազբաղ կյանքում նա միշտ կարողանում էր ժամանակ տրամադրել այն մեծարժեք հուշարձաններին, որոնք տաղանդավոր

վարպետի ինքնատիպ ստեղծագործության մշտական նկատարները եղան:

Ծանոթանալով Ռաֆայել Իսրայելյանի անսահմանորեն հարուստ արխիվին, անհրաժեշտ և օգտակար համարեցինք հրապարակման հանձնել այլևի քան երեսուրտարի առաջ շարադրած իր մեկ ուսումնասիրությունը՝ նվիրված հայկական խաչքարերի արվեստի կազմավորմանն ու զարգացմանը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ դա միջնադարյան հայ ինքնատիպ և վերին աստիճանի ուշագրավ արվեստի ուսումնասիրության առաջին փորձերից է, ու թեև այժմ հայկական խաչքարերին նվիրված հոյակապ հրատարակություններ կան, այնուամենայնիվ Ռաֆայել Իսրայելյանի ներկա ուսումնասիրությունն իր հարցադրումների ինքնուրույնությամբ ու վերլուծական եզրահանգումների օրիգինալությամբ շարունակում է որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնել: Ուստի նպատակահարմար գտանք իր դուստր Աստղիկ Իսրայելյանի օգնությամբ այդ ուսումնասիրությունը հրատարակության նախապատրաստել ու հեղինակի ձեռքով ժամանակին տեղում և լուսանկարներից կատարված մատիտանկարների հետ միասին տրամադրել ամսագրիդ: Նպատակ հետապնդելով հնարավորին չափ անփոփոխ պահպանել հեղինակի շարադրանքը ու խմբագրական չնչին միջամտություն կատարել, հարկ ենք համարել առանձին անհրաժեշտ դեպքերում մեր կողմից ծանոթագրություններ մոծել՝ ճշտելու կամ պարզաբանելու համար հեղինակի որոշ դրույթները:

ՊՐՈՖԵՍՈՐ

ՎԱՐՍԱԶԳԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախագահի Մայր Աթոռին ստընթեր ճարտարապետների հանձնաժողովի
26 մայիսի 1977 թ.

ԽԱՉՔԱՐԵՐ


(Կազմավորման և զարգացման համառոտ ալկնարկ)

Չմայած անբարենպաստ պայմաններին, պատմական Հայաստանում արվեստը հա-
րուստ էր ձևերով և քաղմապիսի դրսևո-
րումներով՝ ճարտարապետություն, ման-
րանկարչություն, քանդակ, գեղանկարչու-
թյուն կամ որմնանկարչություն: Ահա այն
շարանը, որոնց մասին մենք շատ թե քիչ
բավարար տեղեկություն ունենք:

Ծարտարապետությունը պարզ է. դա կառուցվածքների բազմազան տեսակներն

հի վերարտադրման տեսակետից հեքիա-
թային գեղեցկության օրինակներ:

Քանդակագործությունը հիմնականում հանդես է գալիս բարձրաքանդակներով՝ մարդկային և կենդանական թեմաներով ու ավելի մեծ չափով երկրաչափական և բուսական զարդաքանդակներով: Այստեղ սենք ունենք վերջիններիս չգերազանցված վարպետության համառոտ գործեր: Քանդակագործության մեջ ենք հիշում և՛ գաղութ-



Նկար 1

են, թե՛ եկեղեցական և թե՛ քաղաքացիական (տաճարներ, կամուրջներ, պալատներ, հյուրանոց-քարավանատներ և այլն):

Մանրանկարչությունը մեր ձեռագրերում հանդիպած սքանչելի նկարներն են, որոնց մեջ տեսնում ենք մոտմոտեմտալ պատկերներ, հորինվածքային հոյակապ հմարներով և կենդանական ու բուսական աշխար-

քանդակը, և՛ առհասարակ այն բոլոր նախ-
շերը, որոնցով զարդարում ենք շենքը:

Վերջապես որմնակալարչությունը, որից շատ քիչ նմուշներ են հասել մեզ, այդ իսկ պատճառով մեզ քիչ է հայտնի, հատկապես որ եղածն էլ շատ վատ վիճակում է:

Ահա հիմնականում այն ճյուղերը, որոնց մեր արվեստը ընդգրկել է դարերի ընթացքում, զարգացրել և հասցրել այն սատի-

ճանի, որ դուրս է եկել իր նեղ ազգային սահմաններից ու տարածվել այլ ժողովուրդների մեջ, այս կամ այն չափով թողնելով նրանց մոտ իր հետքերը: Դրա հետ մեկտեղ, նաև օտար տարրերը, հասնելով Հայաստան, մշակվել և դարձել են ստեղծագործող ժողովրդի սեփականությունը՝ հարստացնելով իր մշակութային զանգվածները:

Բայց հայ պատմական իրականությունն ունեցել է մի շարք այնպիսի պայմաններ, որոնք անհիշականորեն են ազդել արվես-

Ստանձնահատուկ պայմաններն էին, որ զարգացրին զարդարվեստը, մանրանկարչությունը և նույն պայմաններն էին, որ նվազ թողեցին որմնանկարչությունը, կտրբանդակը և առհասարակ մարդու պատկերը: Ինչպիսի՞ք էին այդ պայմանները. նախ և առաջ դա հայ եկեղեցու ինքնուրույն ուղին էր: Հայ եկեղեցին նաև արվեստի բնագավառում չէր հանդուրժում այն ճանապարհը, որը տանում էր Հայաստանի հպատակեցմանը Բյուզանդիային: Ունենալով սեփական կրոնական դավանանք, նա



Նկար 2

տի վրա՝ առաջ քերելով ձևեր, որոնք յուրահատուկ են Հայաստանին և չեն հանդիպում անգամ հարևան երկրներում: Ահա այս է պատճառը, որ մենք, թվելով արվեստի ճյուղերը, շեշտում ենք նախ առաջատարը, որը մի գլուխ բարձր է կանգնած եղել այդ բոլոր ճյուղերից և իր փայլուն զագայթներով վեր պլացել այնքան բարձր, որ նրա ճառագայթներից հասել են Ատլանտիկի ափերը, թողել են հետքեր հեռու հյուսիսում, թողել են հետքեր Միջին Ասիայում:



Նկար 3

ստեղծել է նաև արվեստի ասպարեզում ուրույն օրենքներ ու ոճավորումներ, որոնք հաճախ խիստ տարբերվում էին բյուզանդականից: Ահա ինչպիսի նշանակություն էր տալիս Մատր այս հանգամանքին:


Մյուս պայմանը քաղաքական վիճակն էր: Ծառ շուտ կորցնելով պետական իշխանությունը, հայ ժողովուրդը մնում էր օտար տիրապետության տակ: Բայց դրա հետ միասին երկրում գործում է հայ եկեղեցին, որը մնում է որպես ուժ և գլխավորում ժողովուրդը՝ օտար իշխանության

տված իրավունքի սահմանում լուծելով ներքին քաղաքական և տնտեսական հարցերը:


Մի կողմից ժողովրդի ծանր վիճակը, մյուս կողմից օտար նվաճողների կեղեքումը պատճառ է դառնում, որ երկրում առաջանան հուզումներ: Դրանք ունեցան այն հետևանքը, որ աշխարհիկ տարրը զորացավ և տարածվեց, անդրադարձավ վարչական սիստեմի, ինչպես և ազդեց մշա-

թյամբ և թե՛ ձևով: Եվ դրանով տասներկու-տասներեքերորդ դարերի ճարտարապետությունը հասցնում մի նոր փայլուն վերելքի, որը մինչ այդ հասել է այն սահմանին, որից հետո նա այլևս չէր աճում, այլ պնդվում էր միայն յուր հետաքրքրությունը չկորցնելու նպատակով:

Վերադառնանք մեր բուն նյութին: Ինչպես ասացինք, մեր արվեստի որոշ նյութեր զարգանում են այնքան, որ դառնում են մեծ ու դուրս գալիս հայկական հողի սահմաններից: Դրա հետ միասին որոշ նյութեր չեն զարգանում, նվազում են, մնում



Նկար 4



Նկար 5


կույթի վրա: Այստեղ է, որ Ֆրիկը բարձրաձայն յուր բողոքն է հայտնում անարդարության դեմ. այստեղ է, որ Երզնկացին, իր կյանքն անցկացնելով վանքի խուցերում, վերջապես խորը շունչ է քաշում զարման արբեցնող օդով և երգում այդ օրվա արևը և ամենակարող բնությունը: Վերջապես այդ ժամանակ է, որ ժողովուրդը ստեղծում է ժամատունը՝ զուտ հայկական երևույթ՝ հիմնված ժողովրդական տան սկզբունքի վրա, և՛ իր ֆունկցիայով, ինչ խոսք, և՛ աշխարհիկ բնույթ կրող մի կառուցվածք, որ նոր էր թե՛ բովանդակու-

թույլ ու վտիտ: Զարգանում են արվեստի այն նյութերը, որտեղ չկա մարդու կերպը, իսկ սրա հետ կապված է որմնանկարչությունն ու քանդակը՝ մարդու պատկերով: Այս բանին արգելում է հայ եկեղեցին, որ պայքարում է պատկերների դեմ իր ամբողջ պատմության ընթացքում, մինչև 13-րդ դար, իսկ ավելի երկար ժամանակ նա արգելում է եկեղեցու մեջ պատկերի ցուցադրումը: Պատկերամարտությունը հատուկ չէր միայն Հայաստանին, պայքարում էր և Բյուզանդիան: Բայց այլ էր պայքարը այնտեղ, այլ էր այստեղ՝ Հայաստանում:


Բյուզանդիայում պալաքը փոփոխական էր. մեկ դեմ էին, մեկ՝ կողմ: Եվ վերջապես պետականորեն չէր արգելվում, այլ միայն տարբեր ուղղությունների տեսության արդյունք էր այն: Համեմայն դեպք, այն հանգամանքը, որ վրացական եկեղեցին և հունականը միշտ զարդարված են եղել որմնակարներով, արդեն ապացուցում է, որ պատկերն այնտեղ այնպես չէր հետապնդվում, ինչպես Հայաստանում, որտեղ

մաթիվ որոշումներ, կանոններ՝ խաչին և նրա օժմանը նվիրված, արդեն ցույց են տալիս պատկերի բացասումը: Խաչը խիստ պահպանվում է և երկրպագվում:

Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարում գրում է, որ պատկերապաշտները դևապաշտներ են: Ինչո՞ւ էր դեմ եկեղեցին պատկերին: Ինչո՞վ էր պատճառաբանում հայ հոգևորականությունն այդ հանգամանքը: Պատճառներ քերվում են շատ: Ահա



Նկար 6



Նկար 7

պալաքը խիստ էր և արմատական ու անց էր կացվում պետության մասնակցությամբ: Եթե մենք, այնուամենայնիվ, հանդիպում ենք որմնակարների, ապա դրանք, որքան գիտենք, օրթոդոքս եկեղեցիներում են լինում:

Այն հանգամանքը, որ չկան օրենքներ և կանոններ պատկերները կիրառելու վերաբերյալ, բայց, սրան հակառակ, կան բազ-

մրանցից մեկ-երկուսը: Նախ որ Քրիստոսի պատկերը, որ մարմնական է, միևնույն ժամանակ իր վրա պետք է կրի և Աստծո պատկերը, իսկ եթե այդպես է, ապա ուրեմն ամեն մի նկարիչ վերաբարտադրել չի կարող այն, իսկ ոչ արժանավայել պատկերումն անթույլատրելի է: Պատճառներից մյուսն այն է, որ հեթանոսները նույնպես պաշտել են նկարը, իսկ այս հանգամանքը նարող էր շփոթության մեջ գցել անհավատներին: Թույլ էր տրվում միայն Քրիստոսին ներկայացնող խորհրդանշանները՝


¹ Հեղինակի այս տեսակետը վերանայման կարիք ունի (Վ. Հ.):

ինչպես ձուկը, գառը և այլն: Իսկապես, սրանք հատկապես շատ են քանդակվում եկեղեցիներում: Բայց ամենից շատ խրախուսվում է խաչը, որի պատճառով և քրիստոնյաները կոչվելիս են եղել խաչապաշտներ:


18-րդ դարի սկզբին միայն, այն է՝ 1204 թվականին Սիսում հատուկ որոշում է կայացվում պատկերը ընդունել և հարգել: Ծառ ուշ միայն կազմվում են կանոններ՝

սի գաղափարա-դավանաբանական հիմքերի վրա է ստեղծվում Հայաստանի բազմադարյան մշակույթը, այսպիսի պայմաններում զարգանում հայ արվեստը:

Այս ամենից բացի ստեղծվեց նաև արվեստի մի ճյուղ՝ խաչքարը, մահարձանի հայկական այդ կերպը, ճյուղ, որ ինքնուրույն է համարյա ի սկզբանե, իր ծագման օրից մինչև վերջ, և գնալով ավելի ու ավելի է զարգանում, էլ ավելի դառնում



Նկար 8




Նկար 9

պատկերը օծելու և այլ ծեսերի վերաբերյալ: Ահա մոտավորապես այն փաստերը, որի պատճառով մեզ մոտ խիստ ետ է մնում պատկերի զարգացումը, և աճում են արվեստի այլ ճյուղերը՝ նախ ճարտարապետությունը, հետո՝ մանրանկարչությունը, ապա և՛ զարդարվեստը: Պետք է նշել այն հանգամանքը, որ քանդակները, որտեղ կենդանիներ են պատկերված, շատ ավելի լավ են նկարված, քան մարդը: Օրինակները բազմաթիվ են, իսկ լավը (խոսքը մարդու պատկերին է վերաբերում) շատ հազվագյուտ է, որոնց մեջ առաջին տեղն է գրավում Գագիկի արձանը²: Ահա այսպի-


միատիպ և ազգային:

Թվելով մեր արվեստի ճյուղերը, որոնք ըստ էության նույնն էին, ինչ-որ այլ ժողովուրդներինը (տարբերվելով ազգային ձևով միայն), մենք այստեղ չենք հիշատակում խաչքարը, քանի որ այն մի ուրույն ստեղծագործական ձև էր ոչ միայն նրանով, որ այլ ժողովուրդների մոտ չենք հանդիպում, այլ յուր էությանը, յուր բովանդակությամբ ու ձևով: Եթե փորձելու լինենք այն դասելու արվեստի մեջ, ապա դժվար թե մենք կարողանանք գտնել նրա տեղը. վերագրել ճարտարապետական արվեստին³, թե՛ քանդակագործությանը: Եվ իսկապես, արվեստի այս ճյուղը յուր մեջ պարունակում է որքան ճարտարապետական մոտիվ, նույնքան և քանդակային: Եվ այս իսկ

² Հավանաբար նկատի ունի Գագիկ 2-րդ Բագրատունուն (վ. չ.):



Նկար 10



Նկար 11


սխառնառով նա զատվում է այլ նյութերից՝ գրավելով իր ուրույն տեղը:

Հայ վարպետը կատարելության է հասցնում այդ խաչքար-կոթողը, որ, զարգացման երկար ու բարդ ուղի անցնելուց հետո, դառնում է մի հոյակապ մոնումենտալ և հաստատուն ծավալով կերտվածք՝

արտահայտված պարզ և հստակ ձևերով: Եվ այդ սքանչելի արվեստը դառնում է մի առանձին ասպարեզ, որը մինչ օրս սպասում է իր հետազոտողներին և արժանի գնահատականին:

Խաչքարը մի քարե սալ է՝ կանգնեցրած պատվանդանի վրա: Նրա երեսին քան-

դակված է խաչը՝ շրջապատված զարդաքանդակով³։ Խաչքարի հիմնական առանձնահատկությունը նրա ընդհանուր հորինվածքն է, սալի ձգված ձևը, նրա շեշտված համաչափությունը, որն ընդգծվում է սալի ներքևի մասի նեղանալով, դրանով իսկ առավել լարվածություն ստեղծելով այդ մարմնի մեջ։ Խաչքարի գեղարվեստական մյուս արժանիքը սալի երեսի զարդաքանդակն է, որը հասցվում է արտակարգ բար-



Նկար 12

ձրը վարպետության ստեղծելով նրբության ու գեղեցկության հրաշալիքներ։

Խաչքարն արդեն հեռվից գրավում է դիտողին յուր արտահայտիչ ուրվանկարով, շեշտված կոտ պատկերով, իսկ մոտիկից՝ հմայիչ և հուզիչ զարդաքանդակներով։

Մի քանի խոսք խաչքարերի տարածման մասին այլ երկրներում։ Ըստ Օրբելու և Վերմանի, խաչքարի տիպի կոթողի մի քանի օրինակ հանդիպում ենք Անգլիայում։ Կան քարեր Կուրանում՝ ուղղահայաց դրված, որոնց վրա խաչը պրիմիտիվ ձևով է քանդակված (նկ. 1)։ Այս փաստերը

հատուկենտ՝ հետագայում ինչքան էլ ավելանան, կլինեն միայն պատահական երևույթներ։ Անհավանական չէ, որ դրանց ստեղծման մեջ մասնակցած լինեն հալ վարպետները։ Բավարարվելով առայժմ այսքանով, անցնենք խաչքարերի ծագման հարցին։

Ինչո՞ւ և ինչպե՞ս առաջ եկավ մեզ մոտ խաչքարը։

Առհասարակ մահարձանը հին է նույնքան, որքան և մարդու ստեղծած մշակույթը։ Բոլոր ժողովուրդներն էլ ունեցել են մահվան հետ կապված իրենց ծեսերը, կարգը և ձևերը։ Հայ ժողովուրդը նույնպես ունեցել է այդ սովորույթը, որ դարերի ընթացքում ստեղծել է բազմապիսի հուշարձաններ։


Մեր նյութական մշակույթից հայտնի է, որ դոլմեններից հետո կանգնեցվում են վիշապները՝ ուղղաձիգ քարեր։ Հետագայում դրանք վերափոխվեցին ավելի երկրաչափական ձևերի և դարձան ուրարտական, ապա մախաքրիստոնեական և ետքրիստոնեական կոթողներ (ստելաներ), որոնք մեծ տարածում ունեցան Հայաստանում (նկ. 2)⁴։ Կոթողը կտրվածքում քառակուսի, մոտ քառասուն-վաթսուն սանտիմետր կողմերով, կանգնեցված էր խորանարդաձև պատվանդանի վրա, որի մեջ ագուցված էր իր ստորին մասի ելուստով (նկ. 3)։ Նախնական շրջանում կոթողները զարդաքանդակվել են։ Այսպիսի օրինակները համեմատաբար քիչ են։ Հայտնի են Դսեղի և Կողբի կոթողները (նկ. 4)։ Քանդակները հիմնականում, ըստ երևույթին, եղել են բուսական մոտիվներով (նկ. 5)։ Ավելի ուշ նրանում արմատավորվում է մարդկային պատկերը։ Բ. Առաքելյանն ըստ բովանդակության կոթողները բաժանում է երեք խմբի՝ մախաքրիստոնեական, անցումային և քրիստոնեական։ Երկրորդ շրջանի համար բնորոշ է Թալինի բազմաթիվ կոթողներից Տրդատի առասպելով քանդակը, որտեղ նա խոզ է դառնում։ Սա արդեն քրիստոնեության մոտիվների մուտքն է հայ արվեստի մեջ։ Սրանից հետո քրիստոնեական պլուսեն ավելի ու ավելի է զարգանում (նկ. 6, 7)։ Առաջ է գալիս և խաչը։ Հետաքրքիր է, որ խաչի արդեն պարտադիր ներկայությունը ստիպում է քանդակագործին հարմարվել տրված կոթողի ձևին, որը և կանխորոշում է խաչի վերձիգ ձևը (նկ. 8)։ Այդ ժամանակներում,

³ Այս հոդվածը շարադրելիս դեռևս Դվինում «Թևադոր խաչերը» գտնված չէին, այդ պատճառով հեղինակը չի հիշատակել (Վ. Հ.)։

⁴ Հեղինակը ծանոթ է եղել Բ. Առաքելյանի «Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դդ.», (Երևան, 1949) աշխատությանը ձեռագիր վիճակում (Վ. Հ.)։

ինչպես հայտնի է, խաչի ձևը դեռ հունական էր, այսինքն չորս թևերն էլ իրար հավասար: Եթե խաչը քանդակվում էր կոթողի պատվանդանի վրա, ապա այն մոտավորապես հավասարաթև էր (նկ. 9), այսինքն չորս հավասար թևեր, որոնք ընդգրկվում են շրջանի մեջ: Այդ ժամանակ պատկերը արգելված չէր, դրա համար էլ խաչը դեռ նրա տեղը չէր բռնում:

Խաչի նշանակության անելուն զուգըն-



Նկար 13

թաց փոխվում է և նրա դիրքը՝ ցածից վեր: Բայց վեր բարձրանալով նկարիչը ստիպված է լինում ձգել խաչը ամբողջ երկարությամբ, որից և աղավաղվում է ձևը (տես՝ նկ. 8): Քանի որ խաչի նկարը դեռ հունական էր (այսինքն հավասարաթև), վարպետը նրան ձգված փնակում քանդակում է նույն սկզբունքով՝ հնարավորին չափ հորիզոնական թևերը դասավորելով խաչի մեջտեղում, որը հետագայում ավելի է բարձրանում: Ահա այսպիսի կոթողները զարգանում են և հասնում մինչև 7-րդ դար:

Օգտվելով հանգամանքից, կուգենայինք անդրադառնալ մի մասնավոր հարցի: Տեսության մեջ կա կարծիք այն մասին, որ

նկերեցիների անկյունների պոմանն մշակումը 7-րդ դարում չի կիրառվել, այլ երևում է 10-րդ դարից հետո (Թորամանյան, Չուքիմաշվիլի): Քննարկվող կոթողներում, որ 5—6-րդ դարերի հուշարձաններ են, արդեն կան անկյունների պոմանն մշակման օրինակներ: Վ. Հարությունյանն Արուհի տաճարի մասին գրած իր աշխատու-



Նկար 14

թյան մեջ նույնպես այն կարծիքին է, որ դրանք գալիս են 7-րդ դարից⁵:

Նախքան խաչի պատկերումը, կոթողների վրա քանդակվում էր այնպիսի տարր, որը համարյա պարտադիր կերպով տեսնում ենք բոլոր այդպիսի հուշարձաններում: Դա արձանի ներքևից վեր ձգվող տերևներն են. պարզ մի նկար, որ մեջտեղից բաժանվում է երկու մասի և բաղկացած է 3—4 տերևից (նկ. 10): Պետք է ենթադրել, որ դա հնուց եկած բոց—կրակի սիմվոլիկ նշանն է: Թեև տերևների ներ-

⁵ В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, Ереван, 1946, стр. 24—25.

կայությունն այդ ժամանակներում պետք է համարել արդեն որպես կորցրած կրակի նշան, բայց նրանք իրենց նախնական նշանակությամբ կրկնվում են տասնյակ դարերի ընթացքում ստեղծված ավանդույթի ամենագոր ուժի շնորհիվ:


Նույնն է կոթողի մի այլ տարրը, որ դարձյալ հանդիպում ենք շատ հուշարձաններում և որը հետագայում անցնում է խաչքարերին: Դա այն կլոր ծաղիկն է, որին ժողովուրդը զարդի մեջ միայն անվանում է «վարդ»: «Վարդ», «արդ»՝ այս երկուսն էլ պարսկերեն իմաստով արև են նշանակում: Գուցե և «վարդապետ» բառը, բայց մեր պատմագիրների մոտ հայտնի է ամենավաղ ժամանակներից: Նույն ակունքն ունի արևապաշտությունը, արև և պետ: Այդ ծաղիկի սիմվոլիկ ձևն է՝ վեց թերթիկից բաղկացած ծաղիկ, նկարված շրջանի մեջ, նույն շրջանի շառավղի կորից կազմված (նկ. 11): Ահա սրանք են կոթողների հաստատուն տարրերը:

Ընդհանուր առմամբ ընդունելի համարելով հեռանկարի տեսությունը խաչքարերի առաջացման մասին կոթողներից, հարկ ենք համարում նշել, որ այն ևս մի քանի հիման վրա (1948 թ. Դվինում հայտնաբերված «Թևավոր խաչեր»), կարիք ունի լրացման: Միջանկյալ օղակը խաչավոր կոթողների և սալերի վրա քանդակված խաչերի միջև ճիշտ կլինի համարել «Թևավոր խաչերը»: Եթե հեղինակը ծանոթ չէր կարող լինել Դվինում գտնված այդ խաչերին, որոնք անտարակույս 7-րդ դարին են վերաբերում, այսինքն կոթողներից հետո են ընկնում (տես՝ Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1953, էջ 150—151), ապա Գ. Հովսեփյանի նյութերից օգտվելով այդպիսի մի «Թևավոր խաչ», գուցե ավելի ուշ շրջանին վերաբերող, նա նկատել է, որի վերաբրտադրությունը բերվում է 14 համարի տակ (Վ. Հ.):

Վերջապես հասնում ենք այն շրջանին, երբ հայ եկեղեցին յուր պայքարը պատկերի դեմ կտրուկ դարձնելով վերջնականապես է արգելում այն: Դրա հիման վրա հանվում է պատկերը և կոթողներից: Խաչը, որ այդ ժամանակներում արդեն տարածվել էր, մնում է մենակ, առանց մարդկային կերպարանքի:

Ինչպես տեսանք, կոթողը բարձր, քանակուսի հիմքով պրիզմա էր՝ դրված խորանարդաձև պատվանդանի վրա: Նրա բոլոր չորս կողմերից քանդակազարդ էր ռելյեֆ քանդակներով: Երբ վարպետին արգելում են կոթողի կողերի վրա քանդակել պատկերները՝ պարտադրելով քանդակել միայն խաչը, նա այն քանդակում է միայն մի երեսին: Մյուս երեսները, որ ճիշտ նույն չափսի են, մնում են բաց: 2-րդ կաշը կարելի էր քանդակել միայն արևմտյան երեսի վրա: Մյուս կողերը մնում են դատարկ (նկ. 12): Վարպետը, ավելորդ համարելով վիշապի կլոր մարմնից եկող հաստությունը, հասցնում է նրան այն նվազագույն չափին, որը կոնստրուկտիվ անհրաժեշտություն էր ներկայացնում սալաքարը կայուն կանգնեցնելու համար: Ահա և առաջին քայլը: Պետք է ենթադրել, որ 7-րդ դարից հետո խաչի ձևը փոխվում է, նրա ցածի մասը զգալի երկարում է, սալի վրա քանդակվում է ձգված խաչը: Բայց սալի համաչափությունն այնպիսին է, որ նրա վերևի մասն ավելի լայն է, ներքևին՝ նեղ, խաչի ներքև իջնող ավելի երկար թևի պատճառով: Այսպիսի խաչքարի վերևի մասի համար քարը թողնում են լայն, իսկ ներքևը՝ նեղացնում (նկ. 13):

(Ծառուկալեյի)



**ԳԱՐԵԳԻՆ (ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ) ՀՈՎՍԵՓՅԱՆԸ՝
ՀԱՅ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ**

Հայաստանի պատմությունը կամ մշակույթը ուսումնասիրող ամեն մարդու քաջ հայտնի է Լալպցիգի համալսարանի փիլիսոփայության դոկտոր, Մոսկվայի Հնագիտական ընկերության իսկական անդամ Գարեգին (արքեպիսկոպոս) Հովսեփյանի (1867—1952) անունը։ Գ. Հովսեփյանի գիտական գործունեությունը տևել է ավելի քան հիսուն տարի։ Նրա առաջին աշխատությունները լույս են տեսել անցյալ դարի 90-ական թթ.։ Նրիտասարդ մասնագետը հենց սկզբից հանդես եկավ իրրև խոհուն, ճրքագագ, բազմատեղյակ հետազոտող, որ հավասարաչափ լավ էր կողմնորոշվում Հայաստանի պատմության, կրոնի, մշակույթի և արվեստի հարցերում։ Գ. Հովսեփյանի գիտական հետաքրքրությունները արտակարգ լայն էին. նա զբաղվում էր ճարտարապետության, քարի ու փայտի ձորագրության, խճանկարչության, որմնաձևկարչության, մանրանկարչության, ասեղնագործության և ոսկերչության արվեստների խնդիրներով։ Հատկանշական է, որ հայ արվեստի հարցերում Գ. Հովսեփյանը չունի միակողմանի. նա ուսմիկոր էր հայ ժողովրդի մշակութային անցյալի շատ հարցերի ուսումնասիրության բնագավառում։

Գարեգին Հովսեփյանի՝ հայ արվեստի այս կամ այն հուշարձանին միևրված աշխատություններին բնորոշ էին նոր ձևավորվող արվեստաբանական գիտության առանձնահատկությունները, երբ հուշար-

ձանները գնահատվում էին սոսկ կուլտուրկենցադային, պատկերագրական և տեխնիկական հատկանիշներով, քսո որում, Գ. Հովսեփյանը նախ և առաջ մնում էր պատմաբան։ Հայաստանում և արտասահմանում բազմաթիվ գիտական պրպտումների և ուղևորությունների ընթացքում ձեռք բերած պատմական և իրեղեն վիթխարի նյութը նա լայնորեն օգտագործում էր իրրև իշյատարացիս իր պատմական և կուլտուրպատմական հետազոտությունների համար։ Բազմակողմանի գիտելիքները Գ. Հովսեփյանին թույլ էին տալիս պատմական բնույթի աշխատություններում ընդգրկել գեղարվեստական հուշարձանների օրինակներ և, ընդհակառակը, բազմաթիվ պատմական տեղեկություններ բերել արվեստին միևրված իր երկերում։ Հարուստ գիտելիքները հաշոց պատմության, բանասիրության, լեզվաբանության, հնագրության բնագավառներում, գեղարվեստական զարգացած ճաշակը օգնում էին Գ. Հովսեփյանին հետազոտել հուշարձանները միասնաբար, խրմբերով, դրանք դիտարկել պատմական լայն ֆոնի վրա, այն միջավայրում, որտեղ նրանք եղել են, անել լայն ընդհանրացումներ։

Ոսկերչական արվեստին Գ. Հովսեփյանը միևրել է երկու աշխատանք։ Դրանցից առաջինը տպվել է ավելի քան վաթսուն տարի առաջ, երկրորդը՝ քստասունհինգ։ Առաջին աշխատությունը լույս է տեսել 1911 թ. և միևրվել հայ արձարագործու-

թյան սքանչելի մի հուշարձանի՝ 1300 թ. Էպի Պոռշյանի պատվերով կատարված ա. Նշանի պահարանին¹։ Նրանում բերված են կարևոր տեղեկություններ Հայաստանի պատմության մեջ Պոռշյանների իշխանական տան կատարած քաղաքական և մշակութային դերի մասին, մի քանի քաղվածքներ՝ պատմագրական աղբյուրներից, միջնադարյան մի շարք հայկական ոսկերչական և, մասնավորապես, արծաթագործական հուշարձանների վերաբերյալ, տրվյալներ Խոտակերաց վանքի մասին, որտեղ իբրև ընծա էր մատուցվել այդ պահարանը։ Գ. Հովսեփյանը հանգամանորեն հետազոտում է հուշարձանը, մանրամասն նկարագրում այն, նշում նրա ոճական առանձնահատկությունները, նրբորեն վերլուծում դրվագների պատկերագրությունը, համեմատություններ անում հայկական քանդակի և արծաթագործության այլ նմուշների հետ, քննում մի քանի հուշարձանների զարդարվեստի վրա իրանական ազդեցության հարցը և այլն։ Վերլուծելով պահարանի դեկորատիվ ձևավորումը և նրա դրվագների պատկերագրությունը, Հովսեփյանը եզրակացնում է, որ հուշարձանը կրում է բյուզանդական և արևելաքրիստոնեական արվեստների ազդեցությունը։ Այս աշխատությունը սպառնիչ պատմական հետազոտություն է տվել հուշարձանի մասին²։

1930 թ. Անթիլիասում լույս տեսավ Գ. Հովսեփյանի «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» փոքրածավալ գիրքը, որը երևույթ էր հայ արվեստին նվիրված գրականության մեջ։ Սա առաջին հետազոտությունն է, նվիրված հայկական ոսկերչությանն ու արծաթագործությանը։

¹ Գ. Հովսեփյան, Ոսկերչական արվեստի մի նմուշ ԺԳ դարից (Սոտակերաց ա. Նշան), «Գեղարվեստ», № 4, 1911, Թիֆլիս, էջ 37—44։ Մեկ տարի անց այդ աշխատությունը լույս տեսավ առանձին հրատարակությամբ։ Գիտական հասարակայնությունը բարձր գնահատեց այն։ «Хрестосанскіи Восток» հանդեսի էջերում այդ աշխատության մասին Ն. Ցա. Մառը տպագրեց բարյացակամ գրախոսություն։

² Հետագայում այդ աշխատությունն ընդգրկվեց Գ. Հովսեփյանի «Նախնական կամ Պոռշյանը հայոց պատմության մեջ» հետազոտության Ա հատորում (Վաղարշապատ, 1928, էջ 181—200)։ Այդ նույն գրքում նա հրապարակել է XVII դարի երկրորդ կեսի հայկական արծաթագործության երկու հուշարձան՝ «սուրբ Գեղարդի պահարանը» (1686—1687) և «Նոյան տապանի մատանց պահարանը» (1698)։

Նրանում քննության են առնվում 13—18-րդ դդ. ազնիվ մետաղներից պատրաստված մի խումբ գեղարվեստական նմուշներ։ Հիմնականում դրանք ձեռագրերի կազմեր են զանազան գրապահոցներից (Էջմիածին, Երուսաղեմ, Երևան, և այլուր)։ Հենց միայն այն, որ այս հետազոտության մեջ հրապարակված են մի շարք հուշարձաններ (որոնցից մի քանիսն այժմ կորած են), իսկ բերված իրերն են պատմա-վավերագրական նյութն ընդգրկում է մի քանի հարյուր տարի, պերճախոս վկայություն է գրքի նշանակության մասին։ Գ. Հովսեփյանի աշխատությունը բովանդակում է համառոտ ակնարկներ, նվիրված առանձին հուշարձանների, որոնք դիտարկվում են ժամանակագրական կարգով։ Ոչ մեծ ներածության մեջ հեղինակը խոսում է հայ գեղարվեստական արտադրության այդ ճյուղի հին ակունքների մասին, իր եզրակացությունները հաստատելով գրական-պատմական մի շարք վկայություններով։ Դրան հաջորդում են ոսկերչի և արծաթագործ հայ վարպետների ստեղծագործություններին նվիրված ինքնուրույն գլուխներ։ Չնայած շարադրանքի լակոնիզմին, Գ. Հովսեփյանին հաջողվել է բացահայտել հուշարձանների պատմությունը, նշել գործերի ոճական, տեխնիկական և պատկերագրական հատկանիշները, վերաբրտարել և համակողմանիորեն մեկնաբանել նրանց մակագրությունները։ Աշխատության վերջում, իբրև համառոտ եզրակացություն, հեղինակը տվել է հայ վարպետների արծաթագործական արվեստի ընդհանուր գնահատականը, նշելով նրա ազգային յուրահատկությունը և զարգացման բարձր մակարդակը։

Այդ երկում Գ. Հովսեփյանը ուրվագծել է մի շարք այնպիսի կարևոր խնդիրների լուծման ուղին, ինչպիսիք են հայկական հուշարձանների համադրումը հարևան երկրների ոսկերչների (հույն, վրացի, պարսիկ) աշխատանքների հետ, զարդանախշի էվոլյուցիան, ոսկերչական արվեստի կապերը մանրամասնության և քանդակի հետ՝ զարդարվեստի և պատկերագրության տեսակետից, ինչպես նաև այդ նյութերը իբրև պատմական և ազգագրական վավերագրեր լայնորեն օգտագործելու հնարավորությունները։

Գ. Հովսեփյանի աշխատության նշանակությունը շատ մեծ է։ Առ այսօր այն մնում է հայ արծաթագործության առավել լրիվ տեղեկատու (թեև լիովին չի սպառում եղած նյութը)։

Հայ ոսկերչության արվեստի վերաբերյալ Գ. Հովսեփյանի առաջին հրատարա-

կումից հետո անցած տասնամյակների ընթացքում մեծ առաջընթաց են ապրել պատմական և արվեստաբանական գիտությունները: Հայ մշակույթի և արվեստի ժամանակակից հետազոտողները հնարավորություն ունեն ավելի լայն և ավելի խոր վերլուծել պատմական և գեղարվեստական երևույթները, համակողմանի ուսումնասիրել հուշարձանները, քայց միշտ խորին երախտագիտությամբ կհիշեն նրանց, ովքեր դրել են հայ արվեստի ստեղծագործությունների հետազոտության հիմքերը, ովքեր ձգտել են անաչառ և օբյեկտիվորեն ուսումնասիրել ու մեկնաբանել դրանք: Գ. Հովսեփյանի աշխատությունները մինչև

օրս էլ չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

Ա. ԿԱԿՈՎԿԻՆ
(Լենինգրադ)

(«Պատմա-բանասիրական հանդես», Երեվան, 1977, № 1, էջ 260—261)

³ Պետք է նշել այն կարևոր նշանակությունը, որ առ այսօր ունի հայ արվեստի կոթողների (այդ թվում նաև ոսկերիչ և արծաթագործ վարպետների շորձերի) լուսանկարների նկատիվների հարուստ Ֆավաքաժոն, որ տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում նկարահանել է Գ. Հովսեփյանը (այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում):



ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՅԱՆՔԻ ԲԱՆԱԶԵՎԸ

Իմ առջև մի փոքրիկ գրքույկ է, տիտղոսաթերթին հայերեն և ռուսերեն գրված է՝ «7-րդ դ. հայ մաթեմատիկոս Վարդապետ Անանիա Ծիրակացու հարցերը և լուծումները: Հրատարակեց և թարգմանեց Հ. Օրբելին: Պետրոգրադ, 1918 թ., Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կարգադրու-

թյամբ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տպարան: Ծարվածքը՝ Հ. Օրբելու»:

Պետրոգրադյան առաջին ձեռն էր Հոկտեմբերից հետո: Նոր իշխանությունը վճռում էր պետության կառավարման և հակահեղափոխությունը ճնշելու հարցերը, պատերազմի և խաղաղության, հողի և հացի պրոբլեմները: Այդ ծանրագույն օրերին հայտնի արևելագետ և ապագա ակադեմիկոս, ոչ միայն Էրմիտաժի հավաքածուների, այլև ամբողջ աշխարհի գլխավոր թանգարանների գանձերի փայլուն գիտակ Հովսեփ Օրբելին գնում էր գիտությունների ակադեմիայի տպարան և անձամբ շարում Ծիրակացու ստեղծագործության հայերեն տեքստը: Ի՞նչ արժեքներ էր նրա համար իր խորքերում թաքցնում այդ աշխատությունը՝ 7-րդ դարում գրված հանրահաշվական այդ փոքրիկ խնդրագիրքը: Չէ որ ժողովրդականություն էր վայելում Անանիայի մաթեմատիկական մեկ ուրիշ ստեղծագործություն՝ «Յաղագս կշռոյն և չափոց»-ը: Ծիրակացին աշխատություններ է գրել արվեստի ու գրականության, լեզվի ու ճարտասանության մասին: Հապա ինչո՞ւ էր այդպես խել գիտնականի ուշադրությունը խնդրագրքի մեզ ոչ լրիվ հասած տեքստը, չնայած արտագրողների թույլ տված սխալներին... Ծիրակացու խնդիրները «հետաքրքրաշարժ են, կենսաշունչ, հստակ»: Դրանք արտակարգ ուշագրավ են թե՛ մաթեմատիկոսի համար, քանի որ վկայում են ստույգ գիտությունների բարձր մակարդակի մասին, թե՛ պատմաբանի համար՝ տեքստը հարուստ տեղեկություն-

* Մեզանից դեռևս հազար երեք հարյուր տարի առաջ Հայոց աշխարհում գործում էր մեր խոշորագույն գիտնականներից մեկը՝ Անանիա Ծիրակացին: Նա պատմաբան էր, փիլիսոփա, աշխարհագրագետ, մաթեմատիկոս և աստղագետ: Իմաստուն և համարձակ մաթ. էր, քանի որ նրա հայտնած մտքերից շատերը հակառակ էին այն ժամանակ իշխող կարծիքներին:

Օրինակ, Ծիրակացին ուսուցանում էր.

— Միշտ չէ, թե Մրկիրը տափակ է և բոլոր կողմերից շրջապատված է ծովերով: Ո՛չ, Մրկիրը գնդաձև է և հենվում է ոչ թե ինչ-որ մեցուկների վրա, այլ ազատ տարածության մեջ է: Ծանրության ուժը ներքև է ձգում նրան, իսկ հողմերի հզոր ուժերը ազդում են հակառակ ուղղությամբ ու նրան պահում են հավասարակշռության մեջ:

Ծիրակացին ճիշտ էր բացատրում Արեգակի և Լուսնի խափարումները և աստղադիտակի գլուխից դեռևս հազար տարի առաջ գտնում էր, որ Միր կաթինը ոչ թե լուսափռ է կամ մի ուրիշ բան, այլ բաղկացած է բյուրավոր աստղերից:

Անանիա Ծիրակացին մեզ թողել է բազմաթիվ արժեքավոր աշխատություններ և մտքեր: Ուրեմն պատահական չէ, որ նրանով ու նրա գործերով հետաքրքրվում են նաև այսօր՝ և՛ հայ, և՛ օտարագրի գիտնականները:

Տպագրում ենք մի հատված Գ. Դրյուբինի «Վարդապետի կյանքի բանաձևը» հոդվածից:

ներ է պարունակում հին Հայաստանի և՛ ծովագնացության, և՛ երկրագործության, և՛ արհեստների, և՛ կենցաղի մասին:

Առժամանակ դառնալով գրաշար, Օրբելին վերականգնում էր երկու նույնական տեքստ՝ մեկը հայկական տպատետրով, մյուսը՝ ռուսական: Նա ոչ ոքի չէր վստահում ձեռագրի բարդ շարվածքը և ոչ առանց հպարտության տիտղոսաթերթի հակառակ երեսին գրեց՝ «Շարվածքը՝ Հ. Օրբելու»: Խնդրագրի բովանդակալից վերջաբանը ստորագրված էր նույն ազգանունով՝ Հ. Օրբելի...

Ակադեմիկոսը չափազանց հպարտանում էր իր տպարանական ստեղծագործությամբ... Այն օրինակը, որով ինձ փնակվեց աշխատել վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանում, Օրբելին նվիրած է եղել նշանավոր բնախոյզ վ. Վերնադսկոյին: Ընծայագիրը չափազանց պերճախոս է՝ «Մեծարգո Վլադիմիր Իվանովիչ Վերնադսկոյն» գրաշարից:

Որպես թարգմանության վերտառություն, Հ. Օրբելին քերել էր Շիրակացու խոսքը, թե՛ «Ծառ փափագելով թվաբանության արվեստին, մտածեցի, որ ոչ մի բան չի կարգավորվում առանց թվերի, համարելով (թվաբանությունը) բոլոր գիտությունների մայրը»:

Ուսումնասիրելով Շիրակացու դասագրքի բովանդակությունը, Օրբելին այն միտքը հայտնեց, թե պահպանված 24 խնդիրները սուկ մի պատառ են դասագրքից, որը պետք է որ ունեցած լինի նաև տեսական մաս: 20 տարի անց այդ կանխատեսումն իրականացավ...

Անանիա Շիրակացու՝ թվաբանական չորս գործողությունների աղյուսակները մեզ հասած ուսուցողական գրականություն

նում հնագույնն են: Անտիկ մաթեմատիկոսներից մեզ ոչ մի աղբյուր չի հասել հաշվարկման արվեստի մասին, և դա մի ավելորդ անգամ ևս վկայում է, թե որքան բարձր է եղել կրթության մակարդակը միջնադարյան Հայաստանում: Գիտնականները որոշում էին երկնային լուսատուների հետազոտելը և քարավանային ճամփաների երթուղիները, լուծում էին խնդիրներ բարեպատի շարվածքի, ջրավազանների ու հողաշինարարության մասին: Հետաքրքրվում էին կշռի չափերով ու երկարության չափերով, տարբեր ժողովուրդների զանազան միավորների հարաբերություններով:

13 դարում գիտությունը շատ է առաջանցել: Ժամանակին Շիրակացուն հուզած գիտական պրոբլեմները և հարցերը դադարել են գաղտնիք լինելուց: Մակայն համիայանս ապրում է գիտական որոնումը:


Ծամփորդ թե գրոսաշրջիկ, Արևմուտքից թե Արևելքից—ով որտեղից էլ լինի, եթե այցելի երևանյան Մատենադարան, անտարբեր չի անցնի փոքրիկ երկրագունդը ձեռքում բռնած հաղթամարմին մարդու կողքից:

ԽՆԴԻՐ ԾԻՐԱԿԱՑՈՒ ԴԱՍԱԳՐՔԻՑ

Աթենք քաղաքում կար մի ավազան, որն ուներ երեք ծորակ: Մի ծորակը, ավելի հորդ լինելով, ավազանը լցնում էր մեկ ժամում, երկրորդը, որ նրանից ավելի թույլ էր, ավազանը լցնում էր երկու ժամում, իսկ երրորդը՝ ամենից թույլ լինելով՝ երեք ժամում: Արդ, իմացիք, թե երեք ծորակները միասին մեկ ժամի բանի՞կորդ մասի ընթացքում կլցնեն ավազանը:

(«Հայրենիքի ծայն», 1977 թ., հունիսի 1)





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ»-Ի
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱԼՆՈՅԿԻՐԽԵՆՈՒՄ

1977 թվականի մարտի 7—11-ը Գալնուկիրխենում (Ավստրիա) տեղի է ունեցել «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի կողմից կազմակերպված ուսումնասիրական սի խորհրդակցություն՝ քրիստոնեական եկեղեցիները և ընդհանուր աշխարհը հուզող քաղաքական, ռազմական, տնտեսական, տեխնիկական, մշակութային և մարդկային իրավունքի հարցերի շուրջ: Խորհրդակցության նպատակն է եղել՝ մասնավորապես քննարկել Հելսինկիի համաձայնագրի հետևանքներն ու պարտավորությունները Եվրոպայի և զարգացող երկրների հարաբերությունների նկատմամբ:

19 երկրներից և 40 եկեղեցիներից շուրջ 70 ներկայացուցիչներ, մեծ մասամբ աշխարհական, մասնակցել են սույն հանդիպմանը:

Հայ եկեղեցու կողմից խորհրդակցությանը, որպես դիտորդ, իր մասնակցությունն է բերել հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը (1977 թ. ապրիլի 20—23-ը Ռումինիայի Ցաշ քաղաքում, «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի նախագահության և խորհրդատու հանձնաժողովի խառն հանդիպումը հաստատեց հայ եկեղեցու անդամակցությունը վերոհիշյալ կոնֆերանսին):

Խորհրդակցությունը բաց է արել «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը: Այնուհետև գլխավոր թեմայի շուրջ առանձին զեկուցումներով հանդես են եկել ԵՀԽ-ի Ժնևի կենտրոնի պաշտոնատարներից ուրուգվայցի դոկտ. Յուլիո դե Սանտա Անան, ՍՄՀՄ գիտությունների ակադեմիայի անդամ դոկտ. Ա. Կուցենկովը և նորվեգացի պրոֆ. Քենեյ Սքեյսթեկը: Կարդացված զեկուցումների շուրջ տեղի է ունեցել մտքերի աշխույժ փոխանակություն: Խորհրդակցության մասնակիցներն այնուհետև բաժանվել են աշխատանքային երեք խմբերի և ուսումնասիրել Եվրոպան և Երկրորդ աշխարհը շաղկապող և հետաքրքրող այժմեական մի շարք հարցեր:

Առաջին խմբի ուսումնասիրության թեման է եղել՝ «Արդարության առաջնությունը գիտական, տեխնիկական և մշակութային տեսակետներից»: Այս խմբի աշխատանքներին իր գործոն մասնակցությունն է բերել Մայր Աթոռի ներկայացուցիչը:

Երկրորդ խմբում քննարկվել է «Սպառազինությունների մրցավազքը և զինաթափումը» հարցը:

Երրորդ խմբի աշխատանքներն ընթացել են «Տնտեսական արդարությունը, էներ-

գիայի պահանջը և ատոմական ուժի պատասխանատու գործածությունը» թեմայի շուրջ:

Այնուհետև լիազումար մի նիստի ընթացքում մանրամասնորեն քննության են առնվել վերոհիշյալ աշխատանքային երեք խմբերի պատրաստած տեղեկագրերը և կատարվել համապատասխան լրացումներ: Տեղեկագրերում ամփոփվել են ընդհանուր աշխարհում տնտեսության զարգացման, սոցիալ-քաղաքական արդար կարգերի հաստատման և խաղաղության ամրապնդման համար օգտակար տեսություններ և թելադրություններ: Սույն փաստաթղթերի հիման վրա վերջում ժողովականները հանձնարարություններ են ստաջադրել աշխարհի կառավարություններին ու նրանց ղեկավարներին, ինչպես նաև եկեղեցիների առաջնորդներին, որպեսզի՝

ա) Հարգեն մարդկանց ազատությունն ու իրավունքները՝ համաձայն Հելսինկիի եզրափակիչ ակտի հասկացողությանց:

բ) Պաշտպանեն ցեղային, մշակութային, կրոնական և այլ փոքրամասնությանց (ներառյալ գաղթական աշխատավորների) իրավունքները:

գ) Միջազգային մի համաձայնագրով հրաժարվեն ատոմական ուժերի կիրա-


ռությունից և դադարեցնեն անմարդկային զենքերի գործածությունը:


դ) Մեծ զգուշություն ցուցաբերեն ատոմական ուժի «խաղաղ գործածության» ծրագրերի մշակման գործում:

ե) Արդյունաբերությանը զարգացած եվրոպական երկրներում եկեղեցիները հանդես գան էներգիայի անպատասխանատու վատնումի դեմ և համայնքների մեջ զարկ տան էներգիայի խնայողական գործածության մտայնությանն ու սովորությանը:

զ) Եկեղեցիները և համայնքները աղոթք ու պաշտամունք մատուցեն Հելսինկիի շախմակությունը հանդիսացող Բելգրադի խորհրդածողովի հաջողության համար:

Մարտի 11-ին, ուրբաթ օրը, Գալնոյկիր-խենի ավետարանական եկեղեցում տեղի է ունեցել Էկումենիկ ժամերգություն: Զանազան եկեղեցիների ներկայացուցիչներ կարճ մատչանք-աղոթքներ են կարդացել: Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը երգել է «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը, խոսել Աթանաս Աղեքսանդրացի մեծ ստեղծաբանի ու Նիկիայի ժողովի հաջողության մեջ նրա ունեցած դերի մասին և ապա հրավիրել է պաշտամունքի մասնակիցներին, որպեսզի համատեղ արտասանեն նիկիական հավատո հանգանակը:





Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 424
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— Մեծությունը՝ 32,6×45,2 սմ.։
— **Նյութը՝** դեղնած, կեղտոտած, հաստ թուղթ։—
Կազմ՝ չունի։— **Վիճակը՝** վատ։ Ֆերմանի վերևի
մասը կտրված և կորած է։ Հատ երևույթին այն ու-
նեցել է վերևի մասում գեղեցիկ զարդանկարչու-
թյուն։— **Գրությունը՝** միապուն։— **Տողերը՝** 9։—
Գծումները՝ առանց ճնշումի։— **Գիրը՝** արաբատառ։—
Զարդագրություն՝ այժմ չունի, քանի որ ֆերմանի
վերևի մասը կտրված է։ Շատ հավանաբար սկզբում
ֆերմանն ունեցել է զարդանկարչություն, որի ու-
կեղույն հետքերը կան ներքևի մասում։— **Գրիչը՝**
անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ծաղկողը՝**
անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝**
Թուրքիա։— **Ծանոթություն՝** ֆերմանն ստացվել է
Կաթողիկոսարանի արխիվից։ Շատ հավանաբար
Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վա-
նեցիկների գաղթի ժամանակ։

ՀԻՇՍԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Անպիտան դատեալ
առ օգտութեամբ յիշեալ
Սուրբ Անտիին։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964
թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի
№ № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվա-
կանի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի
№ № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № №
Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից,
Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975
թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976
թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977
թվականի № № Գ—Ե-ից։

(Կոնակի ներքևի մասում գրված է)
Ամէն բանք բանի իմ է։

№ 425
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— Մեծությունը՝ 66,8×48,3
սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—
— **Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** վատ, վերևի աջակողմ-
յան մասը պատռված է։— **Գրությունը՝** միապուն։—
Տողերը՝ 9։— **Գծումները՝** առանց ճնշումի։— **Գիրը՝**
արաբատառ։— **Զարդագրություն՝** չունի։ Միայն ֆեր-
մանի վերևի մասի կենտրոնում կապգրեղով գրված
է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դուա)։
Կարմիր ներկով։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրա-
տուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝**
Թուրքիա։— **Ծանոթություն՝** ֆերմանն ստացվել
է Կաթողիկոսարանի արխիվից։ Շատ հավանաբար
Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վա-
նեցիկների գաղթի ժամանակ։

ՀԻՇՍԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Միշդ և վաւերական ֆերմանն այս է, որ Լիւ
անապատէն Էօշիւր չառնեն, միայն եօթանասուն
աճճէ առնեն։ Այս ֆերմանի օրինակն ալ իւր մէջն
է վաւերացեալ (վերջին բառը գրված է մատիտով)։
(Կոնակի ներքևի մասում գրված է)
Միթոյից է Թէ աւելի բան չառնուն.
ՌԺԾԵ (1706 թ.—Ն. Մ.) Թարեղից է։

№ 426
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— Մեծությունը՝ 77,6×54,4
սմ.։— **Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝**
միապուն։— **Տողերը՝** 9։— **Գծումները՝** առանց ճն-
շումի։— **Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝**

չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կենտրոնում կապգրեթով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) կարմիր ներկով: **Գրիշը**՝ աննայտ: **Պատվիրատուն**՝ Սուլթան Մամմուդ: **Ժամանակը**՝ 18-րդ դար: **Վայրը**՝ Թուրքիա: **Մանրություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթոլիկոսարանի արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Լշմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Սուլթան Մամմուդի տունը հրդարտակ Լիմ Ա-նապատին ստացնող Մարտիրոս վարդապետին:

№ 427
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր: **Մեծությունը**՝ 78,9×53 սմ.: **Նյութը**՝ դեղնած հաստ թուղթ: **Կազմ**՝ չունի: **Վիճակը**՝ անբավարար, վերևից պատում և կեղտոտում է: **Գրությունը**՝ միասյուն: **Տողերը**՝ 11: **Գծումները**՝ առանց ճնշումի: **Գիրը**՝ արաբատա: **Զարդագրություն**՝ չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կենտրոնում կապգրեթով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) կարմիր ներկով: **Գրիշը**՝ աննայտ: **Պատվիրատուն**՝ աննայտ: **Ժամանակը**՝ 18-րդ դար: **Վայրը**՝ Թուրքիա: **Մանրություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթոլիկոսարանի արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Լշմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Նա հողերուն հին ֆերմանն նորեցար: ԺԷ՝ օշորի չառնկայ սմ. հողերումն որ ունի:
Այս այն ֆերմանն է, յորում Օգոստ(ափառ) Սուլթանն կը հրամայէ որ Լիմ Ա. Անապատն ի սկզբանէ անտի Լօշիւրի տեղ եօթանասուն անճէ տունը Է արքանի տուրք, և ոչ որ իրաւունք չունենայ աւելի տուրք ստանալու այս վանքէն: Այս ֆերմանի վաւերացեալ օրինակն դրկուր է առ Ազգ(ային) Պատրիարքարան, ի ձեռն վանամայր Գեր. Պօղոս Արքայազան Արքեպիսկոպոսի:

№ 428
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր: **Մեծությունը**՝ 66,5×47,5 սմ.: **Նյութը**՝ կեղտոտած հաստ թուղթ: **Կազմ**՝ չունի: **Վիճակը**՝ անբավարար, վերևի մասից պատված է: **Գրությունը**՝ միասյուն: **Տողերը**՝ 10: **Գծումները**՝ առանց ճնշումի: **Գիրը**՝ արաբատա: **Զարդագրություն**՝ չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կենտրոնում կապգրեթով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) սև թանաքով: **Գրիշը**՝ աննայտ: **Ժամանակը**՝ 17-րդ

դար: **Վայրը**՝ Թուրքիա: **Մանրություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթոլիկոսարանի արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Լշմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Լիմ անապատս դէմի գեղ Ջանիկ(ի) համար ֆարման:
(Կոնակի ներքևի մասում գրված է)
(Լի)մայ Ար. ան[ա]յ[ա]տին վասն գրկանաց խզիշկու աղայիցն համար:
ՌճԺԶ (1667 թ.—Ն. Մ.) թարեղին:
(Գրված ու ջնջված է)
Ջանկայ աղնցին ֆերման է:

№ 429
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր: **Մեծությունը**՝ 70×49,8 սմ.: **Նյութը**՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ: **Կազմ**՝ չունի: **Վիճակը**՝ անբավարար, վերևի և ներքևի մասից պատված է: **Գրությունը**՝ միասյուն: **Տողերը**՝ 17: **Գծումները**՝ առանց ճնշումի: **Գիրը**՝ արաբատա: **Զարդագրություն**՝ չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կենտրոնում կապգրեթով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) սև թանաքով: **Գրիշը**՝ աննայտ: **Պատվիրատուն**՝ Սուլթան Մամմուդ: **Ժամանակը**՝ 18-րդ դար: **Վայրը**՝ Թուրքիա: **Մանրություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթոլիկոսարանի արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Լշմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Հին Սուլթան Մամմուդի ֆերմանն է գրեալ ի ճիւ-
րէթի (1731 թ.—Ն. Մ.) սննէին տաճկաց,
վասն ինչ ինչ գրկանաց ևն:
(Մատիտով գրված է)
Վաւերացեալ օրինակէն սէզնէ.
ջրաղացի ուս կայ մեզ:
(Կոնակի ներքևի մասում գրված է)
Ուստապշի և այլ տաճիկ չի մտնեն և ոչվալ.
չուղեն թէ տուր որ ներս կմտաներ:
ՌճԽԻ (1695 թ.—Ն. Մ.) թարեղին:
(Կոնակի կենտրոնական կողքի մասում գրված է)
Լըմայ անապատին է, որ սղազգիք սէշարէ չու-
ղեն ի վանքն մտնելու:

№ 430
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր: **Մեծությունը**՝ 62×44,3 սմ.: **Նյութը**՝ դեղնած հաստ թուղթ: **Կազմ**՝ չունի: **Վիճակը**՝ բավարար: **Գրությունը**՝ միասյուն: **Տողերը**՝ 7: **Գծումները**՝ առանց ճնշումի: **Գիրը**՝ արաբատա: **Զարդագրություն**՝ ֆերմանի վերևի մա-

սում կա բավականի գեղեցիկ մի զարդանկար, բըր-գաձն, որի խարիսխն ունի մոտ 28,5 սմ. երկայնություն, իսկ բրգի բարձրությունն է մոտ 27 սմ.: Բուրգի ներքևի մասում կապերերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) ոսկեգույնով: Բուրգի վերևի մասում նկարված են սիրուն զարդեր, ծաղիկներ և տերևներ զանազան գույներով: **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ծաղկողը**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Էջմիած ...
ՌԺԿԳ (1714 թ.—Ն. Մ.) թարեղին:
Թէ աւելի բան չստնուն:
(Կոնակի ներքևի մասում գրված է)
Ամեն խարճ չի տալոյ:

№ 431
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 71,9×49,6 սմ.:— **Նյութը**՝ դեղնած և կելոտտած հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ անբավարար, ներքևի մասում պատռված է և մի կտոր էլ պակաս:— **Գրությունը**՝ միապուն:— **Տողերը**՝ 7:— **Գծումները**՝ ստանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կնետրոնում կապերերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) սև թանաքով:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնակի մասում գրված է)
ՌԺԿԵ (1716 թ.—Ն. Մ.) թէ աւելի բան չստնուն
թէ մախթուն և թէ ալլ ինչ:

№ 432
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 76×52,7 սմ.:— **Նյութը**՝ դեղնած հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ բավարար:— **Գրությունը**՝ միապուն:— **Տողերը**՝ 12:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ ֆերմանի վերևի մասում կա բավականի գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի խարիսխն ունի մոտ 24,5 սմ. երկայնություն, իսկ բրգի բարձրությունն է մոտ 35 սմ.: Բուրգի ներքևի մասում կապերերով գրված է երկ-

րի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան), ոսկեգույնով և կանաչ գույնով: Բրգի մեջ, վերևի մասում, ոսկեգույնով նկարված են ճյուղեր, ծաղիկներ և տերևներ, իսկ բրգից դուրս, երկու կողմում, նկարված են վարդագույն, կապույտ և կարմիր զարդեր:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ծաղկողը**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի ներքևի մասում գրված է)
ԵՌԴԺԷ (5407—Ն. Մ.) աղչալ է:
ՌԺԿԹ (1720 թ.—Ն. Մ.) թարեղին է:
Լմալ և Կոտուցալ մոխրաթալ տալու և խաշուար չտալու ֆերման է այս:
(Այստեղ կա արաբատառ տաճկերեն երեք բառ):

№ 433
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 53,6×37,6 սմ.:— **Նյութը**՝ սպիտակ մաքուր հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ լավ:— **Գրությունը**՝ միապուն:— **Տողերը**՝ 14:— **Գծումները**՝ ճնշումով, թեք, գրությունը գրված է ներքևից դեպի վերև:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի վերևի աջակողմյան մասում կա ձվաձև մի կնիք, 4,1×3,2 սմ. չափերով, որի շուրջ բոլորը տաճկերեն գրություն կա, իսկ մեջտեղը մի անուն՝ Հաֆիզ Մոհամեդ:

(Կոնակի վերևի մասում գրված է)
Խարչ խարաշի բալլըթան է:

№ 434
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 53,8×20,5 սմ.:— **Նյութը**՝ դեղնած և կելոտտած հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ բավարար:— **Գրությունը**՝ միապուն:— **Տողերը**՝ 14:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ ֆերմանի վերևի մասում կա բավականի գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի խարիսխն ունի մոտ 20 սմ. երկայնություն, իսկ բրգի բարձրությունն է մոտ 25 սմ.: Բուրգի ներքևի մասում կապերերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) ոսկեգույնով: Բրգի մեջ, վերևի մասում, ոսկեգույնով և երկնակապույտ գույնով

ցկարված են զանազան զարդեր և ծաղիկներ:—
Գրիչը՝ անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:—
Մաղկողը՝ անհայտ:— **Ժամանակը՝** հիշրայի 1044 թ.
(1634 թ.—Ն. Մ.):— **Վայրը՝** Թուրքիա:— **Մանո-
թություն՝** Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի
արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից այն
բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի
ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի մասում տրված է հիշրայի
1044 թվականը (1634 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնակի ներքևի մասում գրված է)
Լմայ անապատին խարամ չառնելոյ:
(Տաճկերեն գրված է)
Թարիխ սանա 1044 (այսինքն՝ թվականը 1044
առին):

№ 435
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 77,4×54,6 սմ.
— **Նյութը՝** դեղնած գույնի թուղթ:— **Կազմը՝** ֆեր-
մանի կոնակի վերևի մասում կազմված է մատապյա
կանաչ մի շոր 54,3×41,5 սմ. չափերով:— **Վիճակը՝**
լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Տողերը՝** 13:—
Գծումները՝ ստանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատա:—
Զարդագրություն՝ ֆերմանի վերևի մասում կա-
շատ գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, ներքը՝
կիսաշրջանակաձև, որի լայնությունը 32,5 սմ. է, իսկ
լարծրությունը՝ 36 սմ.: Բուրգի ներքևի մասում,
կապույտ ֆոնի վրա, կապերով գրված է երկրի
սուլթանի անվան խորհրդանշը (դոռան) ոսկե-
գույնով: Քիչ վերևում կա ոսկեգույն մի շրջանակ,
որ զարդարված է գեղեցիկ կանաչ տերևներով և
վարդագույն ծաղիկներով: Այս շրջանակում գրված
է տաճկերեն չորս բառ: Ամբողջ բուրգի ներքի մա-
սը զարդարված է ոսկեգույն ծաղիկներով, տերե-
ներով և ճյուղերով: Բուրգի վերևի մասում քաշված
են երկու գույզ գուգամու վարդագույն գծեր, որոնց
վերևում էլ կան կապույտ և կարմիր ծաղիկներ և
ոսկեգույն տերևներ: Բուրգի աջ ու ձախ կողմերում
էլ նկարված է շատ գեղեցիկ մկական ճյուղ, որի
բուրգանշյուրը բաղկացած է մկական վարդա-
գույն վարդից և կոկոնից, ինչպես նաև մի քանի
կանաչ տերևներից: Այս ֆերմանը հանդիսանում է
տաճկական զարդանկարչության գեղեցիկ նմուշնե-
րից մեկը:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝**
անհայտ:— **Մաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝**
18-րդ դար:— **Վայրը՝** Թուրքիա:— **Մանոթություն՝**
ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից:
Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Է-
ջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնակի վերևի մասում գրված է)
Խարջ խարաջի ֆարմ(ա)ն է:

№ 436
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 76,6×55,6
սմ.:— **Նյութը՝** դիմացկուն, մաքուր, սպիտակ
թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար,
միայն մի քանի տեղ ծակված է:— **Գրությունը՝**
միապուն:— **Տողերը՝** 8:— **Գծումները՝** ստանց ճնշ-
ումի:— **Գիրը՝** արաբատա:— **Զարդագրություն՝**
չունի: Միայն ֆերմանի վերևի մասի կենտրոնում
կապերով գրված է երկրի սուլթանի անվան խոր-
հրդանշը (դոռան) սև թանաքով:— **Գրիչը՝** ան-
հայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝**
18-րդ դար:— **Վայրը՝** Թուրքիա:— **Մանոթություն՝**
ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից:
Ըստ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Է-
ջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

№ 437
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 77,8×55,5
սմ.:— **Նյութը՝** դիմացկուն, մաքուր, սպիտակ թուղթ:
— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրու-
թյունը՝** միապուն:— **Տողերը՝** 8:— **Գծումները՝** ա-
ռանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատա:— **Զարդա-
գրություն՝** չունի: Միայն ֆերմանի վերևի մասի
կենտրոնում կապերով գրված է երկրի սուլթանի
անվան խորհրդանշը (դոռան) սև թանաքով:—
Գրիչը՝ անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:—
Ժամանակը՝ 18-րդ դար:— **Վայրը՝** Թուրքիա:—
Մանոթություն՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսա-
րանի արխիվից: Ըստ հավանաբար Թուրքիայից
այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղ-
թի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոնակի ներքևի մասում գրված է 9—10 տաճ-
կերեն բառեր:

№ 438
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 65,2×49,4
սմ.:— **Նյութը՝** դեղնած, դիմացկուն, հաստ թուղթ:
— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար, սակայն
որոշ տեղեր ծակված և պատված է:— **Գրությունը՝**
միապուն:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** ստանց
ճնշումի:— **Գիրը՝** արաբատա:— **Զարդագրություն՝**
չունի: Միայն ֆերմանի վերևի կենտրոնում կապ-
երով գրված է երկրի սուլթանի անվան խորհր-
դանշը (դոռան) սև թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:
— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ

դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոնակի վերևի մասում գրված է հետևյալը.—
Ծխուն համար է Մօլլայ Խասըմն, որ գայր զօռ կամեր:

№ 439

ՖերՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 76,1×55 սմ.:— **Նյութը**՝ դիմացկուն, սպիտակ, հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ բավարար, սակայն որոշ տեղեր պատռված է:— **Գրությունը**՝ միասյուն:— **Տողերը**՝ 8:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ չունի: Միայն ֆերմանի վերևի կենտրոնում կապերերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) սև թանաքով:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոնակում, ֆերմանի կեսերին գրված է հայերեն տառերով հետևյալը.—

Կօն-հզը հոգանք:

№ 440

ՖերՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— **Մեծությունը**՝ 60,5×55,8 սմ.:— **Նյութը**՝ դեղնած, կեղտոտած, հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ անբավարար, սակայն որոշ տեղեր պատռված և ծակված է:— **Գրությունը**՝ միասյուն:— **Տողերը**՝ 12:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 1717 թ.:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի առաջին երեսի վերևի մասում գրված է, որ սա բնագիր օրհնակի պատճենն է:

Աջակողմյան լուսանցքում գրված է մի քանի տաճկերեն բառեր (3 տող), որոնց ներքևում կա ձվաձև մի սև կնիք, 1,6×1,3 սմ. չափերով, որի մեջ տաճկերեն մի անուն կա, անըմբռնելի:

(Ֆերմանի կոնակի վերևի մասում գրված է)
Թարղն. ՌեֆԿա (1717 թ.—Ն. Մ.) թէ Խեյի բան չառնուն:

Սպարաթ է Էջմիածին:

№ 441

ՖերՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 76,5×40,4 սմ.:— **Նյութը**՝ դեղնած, կեղտոտած, հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ շատ վատ: Վերևի մասից կտրված է և թերի: Աջակողմյան մասն էլ թրջվել է և մեծապես վնասվել: Տեղ-տեղ էլ թափվել է:— **Գրությունը**՝ միասյուն:— **Տողերը**՝ 12:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ ֆերմանի վերևի մասում կա շատ գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի լայնությունը 25 սմ. է, իսկ բարձրությունը՝ 30 սմ.: Բուրգի ներքևի մասում, կանաչ ֆոնի վրա, կապերերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան) ոսկեգույնով: Բուրգի մեջ մկարված են բազմաթիվ ծաղիկներ և տերևներ, բոլորը ոսկեգույնով: Բուրգի երկու կողմերի արտաքին մասում մկարված են զարդեր՝ կարմիր, կանաչ, դեղին և կապույտ գույներով: Այս ֆերմանը համընթացում է տաճկական զարդանկարչության գեղեցիկ մոտիվներից մեկը:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 1717 թ.:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆերմանի կոնակի ներքևի մասում գրված է.
Մախթոյին ԵՌԴԾԾ (5450—Ն. Մ.) աղչալ է:
ՌեֆԿա (1717 թ.—Ն. Մ.) թարեղին է:

№ 442

ՖերՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը**՝ 62,1×44,1 սմ.:— **Նյութը**՝ դիմացկուն, մաշուր, սպիտակ, հաստ թուղթ:— **Կազմ**՝ չունի:— **Վիճակը**՝ լավ:— **Գրությունը**՝ միասյուն:— **Տողերը**՝ 12:— **Գծումները**՝ առանց ճնշումի:— **Գիրը**՝ արաբատառ:— **Զարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 18-րդ դար:— **Վայրը**՝ Թուրքիա:— **Ծանոթություն**՝ ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ծառ հավանաբար Թուրքիայից այն բերվել է Էջմիածին 1915 թ. վանեցիների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի առաջին երեսի վերևի մասում գրված է, որ սա բնագիր օրինակի պատճենն է:

Աջակողմյան լուսանցքում գրված է մի քանի տառերից բաղկացած (3 տող), որոնց ներքևում կա ձվաձև մի սև կնիք, $1,6 \times 1,3$ սմ. չափերով, որի մեջ տառերն են գրությունը կա: Այստեղ կարդացվում է կնիքի տիրոջ անունը՝ Մուստաֆա:

(Ֆերմանի կոմսիկի ներքևի մասում գրված է)

Սուրաթ է թե տառիկ ներս չգնա, զոտ չանէ:

№ 443

ՖԵՐՄԱՆ

(Տառերով)

Թերթերը՝ 1 կտոր:— Մեծությունը՝ $55,6 \times 39,2$ սմ.:— Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:— Կազմ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միատեղ, գրված է շեղակի, դեպի վերև:— Տողերը՝ 9:— Գծումները՝ առանց ճնշումի:— Գիրը՝ արաբատառ:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 18-րդ դար:— Վայրը՝ Թուրքիա:— Ծանոթություն՝ Ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից: Ըստ հավանաբար թուրքիայից այն բերվել է Լեւոնյանի 1915 թ. վաճառքների գաղթի ժամանակ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ֆերմանի առաջին երեսի աջակողմյան վերևի մասում կա մի մեծ սև կնիք, $3,9 \times 3,3$ սմ. չափերով, որի վրա կան մի շարք գրություններ շուրջ թուղթը: Կենտրոնի մասում կարդացվում է հետևյալ անունը.

Մոհամմեդ Դիյա Էլ-Սաֆի:

№ 444

ՀՐՈՒՎԱՐՏԱԿ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $34,1 \times 22$ սմ.:— Նյութը՝ կապույտ հասարակ թուղթ:— Կազմ՝ չունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միատեղ:— Դատարկ թղթերը՝ 1ք—2ք:— Տողերը՝ 22:— Գծումները՝ առանց ճնշումի:— Գիրը՝ մուտգիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 1824 թ.:— Վայրը՝ շատ հավանաբար Ս. Էջմիածնի վանք:— Ծանոթություն՝ սույն հրովարտակն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ԲՈՒՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փոխանորդ Արքայի Ապստա Միրզայի հրովարտակի օրինակն է, զոր գրե առ Սրբազան Կաթողիկոսն.

(Այս երկու տողը հետագայում ջնջված է):

Մեծագահ և գերատոմարան երեսի ի մեջ կաթողիկոսաց Հայոց (հետագայում է ավելացված այս բառը—Ն. Մ.) քրիստոնեից մեծ և անուանի կաթողիկոսն Սրբոյ Էջմիածնի եփրեմ: Հաստատուն

լինելով գիտացել՝ զի մեծագահ և գերատոմարան հաստատարիմ Մատայն մեր Զարայի խան բեկլար-բեկին՝ ի սոյն աուրքս մինչ վերադարձաւ այսր ի Թիֆլիզոյ, զորս հառաչանաց և զհամարս աղօթից բոց՝ որպէս արքանն էր՝ մի ըստ միոջէ խոնարհաբար ծանուցմար (հետագայում է ավելացված այս բառերը, սկզբում գրված է եղել «ծննդամօթ» որ հետո ջնջված է—Ն. Մ.) յայտ արար առաջի արեգակնափայլ տէրութեան իմոյ, առ որ և խնամք ուսանելապատիկ և քաղցր հայեցողութիւն իմոյ մեծութեան առ ձերին մեծագահութիւն բազմացաւ աւաւել յոյժ: Այլն զամենայն զբանսն, զորս մեծագահ և գերեմարեալ հաստատարիմ զօրապետ և հշխան քրիստոնեից Ենարալ Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովն ի մասին ձերոյ մեծագահութեան պատուիրեալ էր նոյն յիշեալ բեկլարբեկոյն մի առ մի (հետագայում է ավելացված այս բառերը, սկզբում գրված է եղել «բեկին մի ըստ միոջէ» որ հետո ջնջված է—Ն. Մ.) յայտնեաց առաջի տէրութեան իմոյ, և առ այն՝ մեր արեգակնափայլ խնամածութեան գութն վասն ձեր մեծագահութեանց և ձեզ պատկանեալ գործոցն և տեղացն՝ բազմապատիկ եղե: Ըստ որոյ արքան իսկ է, զի զիմ խնամակալութիւն շնորհն զոր յառաջադրեալ եմ վասն ձեր, ունիցիք (հետագայում է ավելացված այս բառը—Ն. Մ.) ընկալնուլ (պատուել ջնջված է «ունիցիք» բառը—Ն. Մ.) կատարեալ որպէս և վաղվադակի առանց երկմտութեան դարձ առնել ի Սուրբ Էջմիածին և անհոգ լինիլ, զիտելով՝ զի զամենայն զգործս տեղոյն ըստ իւրաքանչիւր կարգի և արժանատրութեանց՝ ունիմ ես (հետագայում է ավելացված սա—Ն. Մ.) հիմնադրել, և զամենայն զիւրաքանչիւր զիմ և զհախանձ տեղոյն բառեալ միայնգամայն: Այլն բարի ակնարկութեամբ և վերահաստատեամբ պսոմհոտ վասն ձեր և վասն գործոյ տեղոյն ունելոց եմ զհրաման և զհրգումաւութիւն լաւապէս, զի դու ըստ ամենայնի միաժող լինցիս և գիտացես՝ զի համաձայն իմոց սոյնպիսի հրամանաց կատարելոց եմ զամենայն: Ողջ լիք: 19 ջօմատի էլ ավել և 1240 թուոջ (1824 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հետագայում ջնջված է վերնագրի երկու տողը և գրված է հետևյալը)

Թարգմանութիւն հրովարտակի Ժատանգի տէրութեան պարսից Ապստա Միրզայ Ծախազատայի առ Սրբազանգոյն Կաթողիկոսն Եփրեմ:

№ 445

ՀՐՈՒՎԱՐՏԱԿ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $34,1 \times 22$ սմ.:— Նյութը՝ կապույտ հասարակ թուղթ:— Կազմ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միատեղ:— Դատարկ թղթերը՝ 1ք—2ք:— Տողերը՝

24:— Գծումները՝ առանց ճնշումի:— Գիրը՝ նոտըրգիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 1824 թ.:— Վայրը՝ շատ հավանաբար Ս. Էջմիածնի վանք:— Ծանոթություն՝ սույն հրովարտական ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նայիպ սուլթանի գրի օրինակն է գորս գրե առ կուսակալն (այս տողը հետագայում ջնջված է):

Յայտ առնեմ զի ձեր կամքն և խնդիրն ի կողմանէ Մեծագահ և գերաստիճան Եփրեմ Կաթողիկոսի ամենայն հպտց և վասն սրբոյ Աթոռոյ նորա և այլ ամենայն հանգամանացն՝ գորս ծանուցեալ էիք (հետագայում է ավելացված այս երկու բառը—Ն. Մ.) Մեծագահ Ֆաթալի խանին մի ըստ միոյէ (հետագայում ջնջված են «պատմեալ էիք» բառերը—Ն. Մ.) և հարկադրեալ յաղագս յայտնելոյ մեզ զամենայն (հետագայում ջնջված են «որպէս և» բառերը—Ն. Մ.) յայտնեաց: Առ որ և մեք համաձայն կամաց և խնդրոյ ձեր գրեալ (հետագայում է ավելացված—Ն. Մ.) զհրովարտակ միամտութեան վասն նորա (հետագայում ջնջված է «գրեալ» բառը—Ն. Մ.) հրամայեցաք զի ըստ ամենայնի անհոգ և անկասկած լիցի, և առանց երկիւղի դարձ արացել ի տեղի իւր: Յետ որոյ ողորմութեամբ Տեառն և ես ինքն զգործ նորին ալտեղոյն ամենայն վերահասութեամբ և հոգումակութեամբ ունիմ հիմնադրել ի բարիս, և բնաւ ոչ կամիմ և ոչ իսկ թողատրեմ, զի այսուհետև (հետագայում ջնջված են «ոչ ոք» բառերը—Ն. Մ.) կարողացի ոք (հետագայում է ավելացված—Ն. Մ.) իշխել խառնիլ

ի գործս նոցա և կամ նեղութիւն տալոյ(1) և դու մեծագահդ պարտիս խօսիլ ընդ նորին մեծագահութեան (հետագայում ավելացված է, իսկ ջնջված է «նոյն մեծագահի» բառերը—Ն. Մ.) որպէս և արժանն է, և ըստ ամենայնի միամտութիւն տալ նմա՝ և ճան(ա)պարհորդել զի եկեացէ, ի տեղի իւր, և իւր գործոցն պահպանութիւն ունիցի. զայս իմ աստութիւն կատարեալ ծանիմեր, և զքոյդ կամքն յայտնեցիր ինձ:

Յամի 1240 (1824 թ.—Ն. Մ.) յամսեանն ջեմատի Էվվէի (հետագայում է ավելացված, ջնջված են «ջեմատի ըլ ավլի» բառերը—Ն. Մ.):

Երկու հատ հրովարտակ այնց Մեծագահից և Գերաստիճանաց գրեալ առ քեզ առաքեցի. զի (հետագայում է ավելացված: Ջնջված են հետևյալ բառերը «ուղարկեցի: Զի հարկ է»—Ն. Մ.) զկնի վերահասու լինելոյն և տեղեկանալոյն ձեր, տացես նոցա զիշեալ հրովարտական և ըստ ամենայնի միամտեցուցես զԵփրեմ ... և առաքեցես: Ի նոյն թիւ վերոյգրեցեալ (հետագայում է ավելացված ընդգծված այս տողերը: Ջնջված են հետևյալ բառերը «իշեալ հրովարտակքն տալոց ես Ա. և Բ ամի Եփրեմ Կաթողիկոսին միամտեցուցես և առաքեցես, ի վեր թիւ»—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հետագայում ջնջված է վերնագիր մի տողը և գրված է հետևյալը.)

Թարգմանութիւն հրովարտակի ժառանգի տէրութեան պարսից Ապպաս Միրզայ Ծահգատայի առ Կուսակալի Վրաստանայ Ալէքսէ Պետրովիչ Երմոլովին:

(Ծարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ի հայոց արևելյան թևի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկ-յանը և թեմական խորհրդի ատենապետ տիար Զոն Նաջարյանը Մայր Աթոռում Հաղորդագրություն	3
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր	5
ՍՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆԴԱՅԱՆ—ԱՄՆ-ի և Կանադայի հայ երիտասարդաց կազմակերպությունների անդամները Մայր Աթոռում և հայրենիքում	7
ԸՆՈՐՀՔ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՈՒՍՏՅԱՆ—Ատուվածաշնչական սուրբեր	12
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունները Ուկրիդոն Մեյիքյանը Մակար Եկմալյանի ու նրա Պատարագի մասին	15
ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ—Մակար Եկմալյանի դերը և տեղը հայ երաժշտության պատմության մեջ	23
«Էջմիածին» ամսագրի խմբագրությանը	33
ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ—Խաչքարեր	33
Ա. ԿԱԿՈՎԿԻՆ—Գարեգին (արքեպիսկոպոս) Հովսեփյանը՝ հայ ոսկերչական արվեստի ուսումնասիրող	40
Վ. ԳՐՅՈՒԲԻՆ—Վարդապետի կյանքի բանաձևը	41
ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ—«Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի ուսումնասիրական խորհրդակցությունը Գալուկի իրիսենում	50
Յուդակ Մայր Աթոռ ու Էջմիածնի մոտ ստացված ձևագրերի	53
	55
	57



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 22.7.1977 թ.: Ստորագրված է տպագրության 18.8.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատկեր 541:

Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարան, 1977 թ.